

# ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

# Հայրական երդիք

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆԸ, ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՏԵՔՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ՝
ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ

„Արևիկ" @ երևան 1990

ԳՄԴ 84 Հ 1 5
Ի 755

Բտ 84Հ
Ի 755

Խմբագիր Գ Դեվրիկ ան

Իսահակ ան Ա
Ի 755 Հայդո կի երգեր Բանաստեղծո թյո ններ: Ավետիք Իսահակ ան Առաջաբանը ծանոթագրությունները տեքստի պատրաստումը Ա Կ Իսահակյանի եր Արևիւ 1990 320 էջ

Ներւա ժողով սծուն ւամփոփո Ւ է Վարպետի Նշ ւնավոր Հ այդո կի երգերից շարքը. որը ժ սմանակին տպագրվել է նախահեղափոխական հ սյ մամուլում, իսկ նրա երկերի ժողովածուներում երբեք չի զետեղվել: Երկրորդ բաժինը կազմում են քնարական այն բանաստեղծությունները, որոնք նույնպես ծանոթ չեն ընթերցող ների լայն շրջաններին քանի որ մնացել են հա պարբերականների էջերում·

Գիրքը եզրափակում է անտիպ բանաստեղծո թյունների շարքը

Ի 4702080202 /46/ 51 90 ԳՄԴ 84 Հ1 5
707 / 01/ 90

ISBN 5 80 0356 1 © Արևիկ հրատարակչությո ն 1990

## «ՈՐ ՄՌԱՅԼՈՒՄ ՀԵԹՈՂՆԵՐԻՍ ԲԱՇԽԵՐ ԼՈՒՅՍ »

Վերնատան անդամները քննարկո մ էին Դրոշակի վէրջին համար ները Այդ ամսաթերթը որ լուլս էր տեսնում ժննում 1891 թվակա նից փաստորեն դարձել էր հայ ազգային հեղափոխական շարժման ս րիբունը թեև թերթի համարները մեծ դժվարությամբ էին հասնում Թիֆլիս կամ Կ Պոլիս սակայն նրա ամեն մի համարը ո րույն դեր էր խաղում հայ ազգային շրջաններում կազմակերպելու ու համախմբե լու հայ քաղաքական ազատագրական պայքարը

Այնպես որ թերթի յուրաքանչյուր համար մեծ հետաքրքրություն էր առաջ բերում ‹Վերնատան› անդամների մեջ որոնց զգալի մասը ոչ թե սոսկ համակրողներն էին այդ պայքարի այլ հենց նրա արևելյան թևի կազմակերպիչներն ու խանդավառողները

Նահապետի իրավունքով առաջին խոսքը Ղազարոս Աղայանինն էր «—Ահա արդեն «Դրոշակի› մի քանի համարներում ես հանդիպում եմ «Հայդուկի երգերից» անվանումը կրող բանաստեղծությունների մի խորհրդավոր ստորագրությամբ ‹Հայ գուսան› կարդում եմ հա մարից համար ավելի հավանում բայց գլխի չեմ ընկնում թե հեղի նակն ով է մի բան պարզ է միայն որ մերոնցից է կովկասահայ և այն էլ իսկական բանաստեղծ այ խնդրեմ լսեցեք» եվ իր բամբ ձայնով կարդաց

Գըլգըլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերեն
Ծիծեռնները ծի վ ծի վ եկան
Գարնան գալը երգելեն

Գարուն չկա հայի համար
Ծաղիկ ծիծեռ մեզ պետք չեն
Գերեզմանս հողին հավսար
Թող փուշ բուսնի իմ վրեն
Գնա ծիծեռ թող ինձ մենակ
Վերքը սրտիս հողի տակ
Բայց երբ տեսնես թշնամու դեմ
Հայ ժողովուրդ սարի պես
Զենքը ձեռքին հպարտ կանգնած
Հայեր լեռներ իրար պես

Աղայանը ավարտում է ընթերցումը զննիչ հայացքով նայում ընկերներին Դե ասեք սա ճշմարիտ պոեզիա չէ

Մի պահ լռություն է տիրում

Ավետիք չլինի ‹Հայ գուսանը դու ես — լռության մեջ լսվում է Նիկոլ Աղբալյանի ձայնը

Իսահակյանը մի պահ կարկամում է և ապա հուզումը թաքցնելով ժպտադեմ ուղղվում է ընկերոջը

Ես այդպես էլ գիտեի Նիկոլ որ դու առաջինը կճանաչեիր թե ով է ‹Հայ գուսանը»։

Դե ասեք հայդուկը մեր մեջ է — ուրախացավ Աղայանը ապա խոշոր ձեռքերով գրկելով Իսահակյանին ձակատին մի համբույր դրոշմեց ու ասաց

Դու Ավո եղար առաջինը հայ բանաստեղծներից որ երգեցիր ֆիդայական պայքարը մինչև այդ այն ապրում էր միայն մեր ժո

լովրդի բանավոր երգերում ես չեմ կասկածում որ հիմա քո երգը կխառնվի ժողովրդի ձայնին ու նոր ո ժ կտա նրան

* * *

Ավետիք Իսահակյանի ֆիդայական պոեզիան իր ամբողջությամբ պատկերավոր ասած եղավ այն կենսական աղբյուրը որն այնպես խոսուն ու իմաստուն բնութագրել էր ինքը բանաստեղծը Աղբյուր Սերոբի հիշատակին նվիրված իր բանաստեղծության ւողերում

**Նեմրութա սարը հազար ակն ունի**
**Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթա**
**Մենակ Սերոբի աղբյուրը սրտի**
**Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա**

Հայդո կի երգերից՝ շարքը սկսեց կազմավորվել դարավերջին 1896 թվականից համընկնելով հայ ազգային ազատամարտի նոր փուլին երբ Զեյթունի և Սասունի արյունալի կոտորածներից հետո ժողովրդի լավագույն զավակները համախմբվելով հայ հեղափոխական դաշնակցության մեջ որոշեցին իրենց ձեռքով և իրենց զենքով նվաճել Հայաստանի անկախությունը Ստրաստեղծ քաղաքական ուժը ամենուրեք թե Արևմտյան թե Արևելյան Հայաստանում կազմակերպում էր կամավորական ջոկատներ Հայրենիքը փրկելու համար

Արևմտյան Հայաստանում ծնունդ առան մի շարք ֆիդայական խմբեր Աղբյուր Սերոբի Անդրանիկի Արաբոյի Գևորգ Չաուշի Սըմ

բատի Հրայրի Քեռու և այլ հերոսների գլխավորությամբ Դարավեր ջը ֆիդայական ամենացայտուն շրջանն էր նման ազգային զարթոնք վաղուց չէր տեսել հայոց հողը և բնականաբար շարժումը բացի գաղափարական ու քաղաքական կազմակերպիչներից պահանջում էր իր երգչին Եվ այդպիսին եղավ հենց Իսահակյանը

Հայրենասիրական պոեզիայի իր նոր էրկերին նա տվեց ‹ Հայ դուկի երգերից» անվանումը Հայդուկ կամ ֆիդայի հոմանիշ բառեր են ժողովուրդը այդպես է կնքել իր զավակներին որոնք պայքարում էին Օսմանյան Թուրքիայի լծի դեմ թե Բուլղարիայում ու Հուն գարիայում թե Սերբիայում ո Հայաստանում Հայտնի են հայ դուկներին նվիրված երգերը հունգարական սերբական և բուլղա րական պոեզիայում Բուլղար նշանավոր բանաստեղծ Քրիստո Բո տևի Հաջի Դիմիտր» բանաստեղծությունը նվիրված բուլղար ժո ղովրդի հերոս հայդուկ Հաջի Դիմիտրին (որը զոհվել է թուրքերի դեմ մարտնչելիս 1868 թ.) արձագանքում է Իսահակյանի «Սալնո ձորերում կըռվի ձորերում...› բանաստեղծությանը Հայդուկային շարժմանը նվիրված բանաստեղծություններ ունեն նաև Պեյո Յա վորովը և Շանդոր Պետեֆին

Հայ ֆիդայիի էլ նույն հայդուկն է որ զենքը ձեռքին ելել է հայ րենիքի պաշտպանո թյան և չկա վերադարձ հայրենի տուս մինչև թշնամուց չազատի իր երկիրը

**Ազիզ մերիկ, քեզի թողի**
**Դարդ ունեի, դուրս ընկա**
**Սուրբ վաթանիս ժողովրդի**
**Զենը կանչեց դուրս ընկա**
**Առուծի պես առուն կուգա**
**Բաշը տված քարերին**

**Առուծի պես հայ ախպրտանք**
**Վուհ վրա տանք դուշմընին**
**Մեկ սիրտ դառնանք, բյուր սուր դառնանք**
**Ջարդենք, փշրենք դուշմընին**
**Ջան տղերք ջան, զարկենք զարկվինք**
**Մեր վաթանի ուղուրին**

Այս երկերի հեղինակը նախ չէր կարող դրանք տպագրել իր հայրենիքում որովհետև հենց դարավերջին ռուսական փոխարքա իշխան Գոլիցինի հռչակած հայահալած քաղաքականությունը ոչ միայն զենքով ու զինվորով էր պատնեշ հանդիսանում Արևմտյան Հայաստանի ազատագրման շարժմանը և այդ շարժմանը նպաստ կանգնած Կովկասի հայրենասիրական ուժերին, այլև արգելել էր մամուլում գրքերում դպրոցներում հայ ազգային ազատագրական շարժման պրոպագանդումը այնպես որ Իսահակյանի շարքը տպագրվում էր ժնևում «Դրոշակ» ում և բնականաբար կեղծան վամբ Հայ գուսան անունն իր համար Իսահակյանը ընտրել էր ոչ միայն այն պատճառով որ ինքնին խոսող անուն էր այլև այն մեկ անգամ ևս ընդգծում էր Իսահակյանի հոգեկան համակրանքը հայ գուսանական պոեզիայի հանդեպ իսկ ողջ շարքը իր արվեստով հարկ է ասել որ շատ կապված է հենց հայ գուսանական պոեզիայի ավանդույթների հետ

Այսպիսով 1899 թվականից սկսած «Դրոշակը սկսեց հրատա րակել իր ‹նոր» հեղինակին Հայ գուսանին և մեկը մյուսի ետևից ամսագրի էջերում լույս տեսան հայ հայրենասիրական պոեզիայի ընտիր նմուշներ ինչպես «Էն արծիվն էր թըռավ գընաց /1896/ «Ազիզ մերիկ քեզի թողի » /1898/ «Լուռ գիշերին մտքիս դիմաց › /1898/ «Գըլգըլալով ջուր է իջնում › /1900/ «Հազար բարով հպարտ սարեր › /1900/ «Է յ ջան հայրենիք ինչքան սիրուն ես ›

1900/ Ինձ տեղ տվեք Սիփան սարեր...» /1900/ ‹Ճամբես արունի հետք թողեր կերթա /1900/ «Սալոն ձորերում կըռվի ձորե րում › /1900/ ‹Սերոբի հիշատակին› /1901/ ‹Սո րբ հայրենիքս երգել կուզեի /1902/ և այլն

Ինչպես ասացինք ‹Դրոշակի յուրաքանչյո ր համար Կովկասում ստանում էր իր ժողովրդական տարածումը ձեռագիր օրինակների միջոցով իսկ Հայ գո սանի Հայդուկի երգերից» շարքի բա նաստեղծությունները դառնո մ էին ժողովրդի սեփականությունը բառիս բուն իմաստով թևածում էին թե ուսանողական հա վաքներում թե հայրենասիրական երեկո յթներում Նրանք հասնում էին և Ավետյաց երկիր նոր եռանդ ու ո ժ հաղորդում այն հերոսներին որոնք բանաստեղծությունների իսկական հասցե ատերերն էին նրանցից շատերը դեռ չէին լսել Ավետիք Իսահակյան անունը բայց գիտեին Հայդո կի երգերի հեղինակ Հայ գուսանի անունը

Այդպես էլ հայ շատ ֆիդայիներ կնքեցին իրենց մահկլսնացուն չիմանալով ո չտեսնելով իրենց պայքարի երգչին Սակայն ֆի դայական պայքարը այդ պայքարի ոգին հույսն ու տառապանքը պիտի հավետ ապրեին Իսահակյանի երգերում Պիտի ստանային իրենց եզակի գեղարվեստական մարմնավորումը բխելով հենց Իսա հակյանի պոեզիայի էությո նից Կարելի է համարձակորեն ասել որ դարավերջի ու դարասկզբի հայ պոեզիայի պատմական հատ վածում չկար մեկ այլ ո րիշ հեղինակ որն ի վիճակի լիներ դառնալ հայդուկային շարժման երգիչը

Այդ ընտրյալը Իսահակյանն էր այդ հանգամանքը դեռևս Երգեր ու վերքերի› լույս տեսնելուց անմիջապես հետո զգացել էր Նիկոլ Աղբալյանը գրելով «Մուրճում› երիտասարդ բանաստեղծի մասին որ նա կարողանում է ժողովրդի պես զգալ նրա սրտով ապրել Իսկ ինչ է նշանակում ժողովրդի պես զգալ այդ նշանակում է համանման հոգեկան դրություններում զգալ այն ինչ կզգա ժողովրդի մարդը եթե

դուք զգում եք այն ինչ կզգար ժողովրդի մարդը ապա դուք ժողովրդի պես եք և ուրեմն ձեր երգերը ժողովրդական են ձերը մնալով»

Այդ Իսահակյանն էր որ տակավին 17 տարեկան հասակում գրել էր

Ախտը տարի ծուռ ու պասով
Որ և արև սևցուցի յար
Բալի Մըշու Սուլթան զորքով
Իմ մուրազս տար ինձի յար

**Մեկ տարի անց**

Հայրենիքես հեռացել եմ
Խեղճ պանդուխտ եմ, տուն չունիմ
Ազիզ մորես բաժանվել եմ
Տըխուր տըրտում քուն չունիմ

Որը քսանմեկ տարեկան հասակում արդեն իր հայրենասիրական գործունեության համար դատապարտվել էր կալանքի երևանյան բանտում Որն արդեն տեսել էր Օդեսյան աքսորը ցարական ոստիկանության պահնորդական բաժնում կնքված էր Մոլոտ» կեղծանվամբ որի վրա սկսած դարավերջից սահմանված էր համարյա ամեն օրյա ոստիկանական հսկողություն

Դա այն Իսահակյանն էր որի ջանքերով Արևելահայաստանում լայն տարածում գտավ քաղաքական իրավասությունն պիտի գտներ հայ էլ իր իսկական զգայնին շարժման գաղափարախոսությունը Այդ էր «Մահնալի և «Որսկան ախպոր» հեղինակը որի երգերը դեռևս նյարդային սրդոհթան օրոք դարձան ժողովրդական երգեր մինչև

---

Թիֆլիս 1893 Նյութ.

անգամ առանց հեղինակի անվան իմացության պիտի դառնար և ֆիդայական շարժման երգիչը

Նա այդ իրավունքը ձեռք էր բերել իր ճակատագրի տատասկնե րով իր գեղարվեստական քնարի հանճարով իր երգերի համաժո ղովրդական ճանաչումով Եվ նման դեպքերում բանաստեղծը դառ նում է ոչ թե սոսկ մեկ գաղափարի հերոսամարտի այս կամ այն դրվագի քաղաքական այս կամ այն նպատակի արտահայտիչը այլ ժողովրդի պատմական իղձերի ու երազանքների արտահայտիչը այն միակ երգիչը որն ի զորու է կենսական ուժ հաղորդել ժողովրդի նվիրական զգացմունքներին

Եվ «Հայդուկի երգերից» շարքը դարձավ ֆիդայական պոեզիայի առաջնեկը հայ դասական գրականության պատմության մեջ

Երկու հանգամանք դրանց նշանակությունը դարձնում են առավել թանկ ու անփոխարինելի առաջինը որ դրանք ստեղծվել էին ճիշտ ժամանակին պատկերն էին այն իրականության որ հենց նույն այդ պահին բախում էր ժողովրդի դուռը Դա շարժման ոչ հետագա արժեքավորումն էր ոչ էլ նրա արձագանքը այլ այդ շարժման կենդանի կյանքի արտացոլումն էր և այս հանգամանքը հաղորդում էր շարքին ճշմարիտ հեղափոխական հնչեղություն և արդիական իմաստ և երկրորդը որ շնորհիվ Իսահակյանի հայ ֆիդայական շարժումը մուտք գործեց հայ պոեզիա մեր պոեզիայի դարավոր հայրենասիրական հունին նոր կենսական ավյուն ներարկեց և դրա նով իսկ նոր էջ բացեց պատմության մեջ

Իհարկե այստեղ հարկ է նշել որ Իսահակյանը ամայի տեղից չէր սկսո մ նա իր աչքի առջև ուներ այնպիսի հոյակապ օրինակներ ինչպիսիք մեր ժողովրդի ստեղծած բանավոր ֆիդայական երգերն էին «Զարթիր լաո » «Արյունոտ դրոշ» «Մենք պետք է կռվենք և ոչ լաց լինենք» «Տալվորիկի կտրիճը» «Խանասորի երգը» ‹Գնդակ որոտաց» «Առաքել Մուշեղ» «Գևորգ Չաուշի երգը» և ուրիշներ

Այս երգերը գուցե ինչ որ մի հանգույցում իրենց արվեստի ուժով կատարյալ չէին սակայն իրենց ոգով իրենց ասելիքով մինչև օրս էլ պահպանել են բարձր հասարակական արժեքը Բայց և այնպես հենց Խահակյանի գրչի տակ ֆիդայական պոեզիան հասավ այնպիսի որակի որ ժողովրդի հոգում ապրող բողոքը ցավը նրա մարտական պահանջը ու պայքարը դարձան ոչ թե սոսկ պարզունակ մանիֆեստ տարերային կրքերի արտացոլում այլ ճշմարիտ ու մեծ արվեստի երկ որը իրականում կարող էր ներգործություն ունենալ հազարների վրա

Երկ որի նշանակությունը անանց է և պատմական իրողության մի փուլից մյուսին անցման շրջանում և մանավանդ անանց է կըրկնակի որովհետև արտացոլում էր ժողովրդի այն նվիրական երազը որն այդպես էլ մնաց անկատար Ահա ինչ է երազում Խահակյանի հերոսը հայ հայդուկը մահացու վերքը սրտում ընկած Սալնո ձորերում

**Հայդուկը հոգում երազ է տեսնում**
**Հայրենի աշխարհն ազատ ապահով**

**Տեսնում է արտում հովն է շընկշընկում**
**Փայլուն գերանդին զընգում է անուշ**
**Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք**
**Հայդուկի վըրա երգելով անուշ**

Այս երազի իրականացման համար էին Հայ գուսանի հերոսները զենք վերցրել և իհարկե այս շարքը չէր վերածվի ֆիդայական պոեզիայի ուրույն որակի եթե նրա ստեղծողը սոսկ երազներ պատ

կերեր  Ֆիդայական պոեզիան առաջին հերթին ենթադրում է պայքար մարտ զենք

Սերոբ Աղբյուրը ազատ Նեմրութից
Աղբյուրի նման վազեց լեռն ի վայր
Ու հեղեղ դառավ  ահ ու մահ սփռեց
Զարկեց ու ջարդեց հայու դուշմնին
Քուրդին ու թուրքին հարուր ու հազար

Երբ թշնամու դեմ կռիվ եմ վազում
Դու կրծքիս սըղմած  անբաժան հետս ես
Դու ես միշտ սրտիս մրրիկը հայտնում
Քեզնով եմ փնչում  որոտում վրեժ

Ա խ  թե լինեի կայծակ հրաբուխ
Մռայլ Տավրոսի ճակատից վիժած
Պիտի փշրեի, շանթեի պիտի
Թշնամու կուրծքը չար  արյունախանձ

Ձեր հրացանը վրեժով լցրեք
Ջարդեք ու փշրեք նամարդ թշնամուն
Ու մահը ձեզնից հեռու կփախնի
Փախնի  կըգտնի նամարդ թշնամուն

Դուրս եկ դու վագր  դու շղթայազերծ
Աստված ու երկինք ոտաց տակ տալով
Խփիր հարվածիր ջախիր ջախջախիր
Զինված ռումբերով թուլնով կայծակով

Այս և նման բանաստեղծությունները /որտեղից բերված էին դր վագները/ ոչ պակաս նշանակություն ունեին հայ շարժման համար քան մարտական փամփուշտները Այս երկերը եթե կարելի է այսպես ասել ‹հրացանի տակ› էին հավաքում մեր ժողովրդի հայրենասեր զա վակներին և մանավանդ երիտասարդներին

Մեծ էր դրանց նշանակությո նը և ժողովրդի մարտական ոգին ի րոխտ պահելու ժողովրդին անձնազոհ պայքարի ոգեկոչելու խան դավառման կրքով Պատմական ճգնաժամային բախտորոշ պահերին սև գնահատելի է նման երկերի առկայությունը Բայց և այնպիսին ւ հայ բանաստեղծի գրիչը որ ամենաթունդ պայքարի կոչող երգե րում մարտակոչի հրավերքում վրեժի ո հատուցման երգերում ան գամ նա ի վիճակի չէ քարոզել կամ գովերգել սրյո նահեղությո ն ո պանությո ն սպանդ ու ավերում քրիստոնեական ամենագթության օրէնքը որն ի դեպ մեր ազգի հիմնական նկարագիրներից է այստեղ ևս ասում է իր խոսքը այնպես որ Իսահակյանի ֆիդայական էրկերո մ նրա հերոսը առաքինի մարդ է զինվոր պատրաստ անձ ւո րաց մարտի վրեժի բոցը սրտում բայց ոչ երբեք մարդասպան ի սկ կատպան կողոպտիչ ու արյունարբո Այս բարոյա կան հանգույ գում են բաժանվում քրիստոնյա հայ մարտիկի ու արյունակզակ մահմէդական զինվորի ճամփաները Ո չ դաժան ճակատագիրը ոչ յաւ մության քառուղիներում կրած ծանր դասերը ոչ անպատասխան հանց ագործությունները այդպես էլ չկարողացան փոխել հայ մարդո է թյունը դարձնել նրան դաժան նենգ ստոր ո խաբեբա իսկ ֆիդային հայ մարդու լավագույն հատկանիշների մարմնացումն է Հայ մարդո ընտրանին Հայ ֆիդային պատրաստ է ազնիվ կռվի իլ քնա զոհության նրա համար չկա առավել բարձր ու սրբազան կար ռականություն քան հայրենիքի փրկությունը բայց նա իր պայ քարի մեջ իր ցասումի ու վրեժի մեջ մնում է առաքինի ազնիվ ու ւ ղղարամիտ Սա ևս զինվորի հազվագյուտ օրինակ է բայց այդպի ֆ ն է եղել հայ զինվորը թե Վարդանանց պատերազմում թե Սասունի

ո Զեյթունի ազ ռամարտեռում թե Սարդարապատի ճակատա մարտում ռ այսպեւ շարունակ մինչև մեյ օրերը Եվ սա այն դեպքում երբ նրա առջև կանգնած է եղել աշխարհի ամենանենգ ւ մեկ դաժան ու ամենախարդախ թշնամին կարճ ասած թուրքը

Հայրենի երգերից հ շարք գործերում Իսահակյանը հանդես է գալիս որպես ազատամարտի շեփորահար որպես մարտի ազդա րար. Նա բանաստեղծի իր առաջնահերթ պարտքն է համարում մար տական զգոնության կոչել ազգի զավակներին

Մեկ սիրտ դառնանք բյուր սուր դառնանք
Զարդենք փշրենք դուշմընին
Զան տղերք ջան զարկենք զարկվինք
Մեր վարանի ուղուրին

Դուք ժողովրդի ազնիվ զավակներ
Սուրբ ազատության հուրն է ձեր սրտում
Վառեք բորբոքեք քարեր ու սրտեր
Ձեր կյանքով շնչող մայր հայրենիքում

Վեր կաց ժողովուրդ վեր կաց միահամուռ
Եթե սիրտ ունիս եթե չես ստոր
Եթե զազիր չես դահիճներիդ պես
Վեհ ազատության դրոշը կարմիր
Բարձրացրու հպարտ լեռներիդ վրա
Եվ արդարադատ քո սուրը հանիր
Գրոհ տուր լպիրշ թշնամուդ վրա

Ես ձեզ ասում եմ որ ժամն է հասել
Արդար գայրույթի ազնիվ պայքարի
Դրոշակը մեր գետին է ընկել
Եվ ոտնակոխան ամբարիշտ չարի
Կամ պետք է մեռնել կորչել հավիտյան
Կամ բարձրացնել դարձյալ հաղթական
Դրոշակը մեր վեհ իդեալների

Վառ կարմիր հագիր դու հայ ժողովուրդ
Եվ սուրդ շարժե քեզ ճանապարհ բաց
Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կտրող
Կտրիր ու տիրիր անհաղթ հզոր կաց

Մեջբերումների շարքը կարելի է շարունակել Ակնառու է այս ս ողերում Իսահակյան — ռոմանտիկ ստեղծագործողի խոսքի ո ժը նրա հույզի ու զգացումի գործուն ազդեցությունը ընթերցողի վրա Առանց նման տողերի հեղափոխական շարժումների նպատակը որոշ իմաստով կախված է մնում օդո մ չի ներխուժում ժողովրդի հոգե կան աշխարհը Այնպես որ անուրանալի է Իսահակյանի մարտակոչի նշանակությունը դրա կազմակերպիչ ուժը վարակիչ ազդեցությունը

Այս բնույթի գործերից մեզ մինչև այժմ հայտնի էր Իսահակյանի Ազատության Զանգ» նշանավոր մարտակոչը որ կանչում էր Կով կասի զավակներին միահամուռ մարտի ընդդեմ ցարական միապե ւոո թյան Հայտնի է թե այդ գործը ինչ բարձր է գնահատված որպես Իսահակյանի քաղաքացիական պոեզիայի լավագույն երկերից մեկը Հայդուկի երգերից» շարքի մարտակոչերը ժամանակին ինչ խոսք ո նեցել են ոչ պակաս հնչեղություն քան ‹Ազատության Զանգը› և այժմ ժամն է կրկին դրանք լույս աշխարհ բերելու արժանի գնա հատական տալու

Սույն հավաքածուում տեղ են գտել նաև մի քանի երգեր, որոնք ժամանակին չեն զետեղվել «Հայդուկի երգերից» շարքում և չեն հրատարակվել «Դրոշակի» էջերում Հայ-գուսան ստորագրությամբ, մինչդեռ այդ երկերը մեր համոզմամբ իրենց հայրենասիրական ոգով, մարտական պաթոսով իրավունք ունեն պատկանելու «Հայդուկի երգերից» անունը կրող շարքին

Դրանց մի մասը մնացել է անտիպ իսկ մի քանիսը տպագրվել են 1905—1906 թթ /երբ մեղմացել էր ցարական գրաքննությունը/ հայ պարբերականներում Եվ սոսկ պատահական պատճառներով չեն ընդգրկվել հայտնի շարքի մեջ Նախ տպագրվածների մասին, հետո անտիպների «Մուրճում», 1906 թվի հունվարյան համարում տպագրվել է «Քաջերին» վերնագիրը կրող բանաստեղծությունը որը սկսվում է հետևյալ տողերով

**Մռավ սարերից սավառնեց քամին,**
**Դրոշակը մեր հպարտ ծլփծլփաց**
**Տեսեք, դաշտերից կուգա թշնամին —**
**Սրբազան կռվի կոչը որոտաց**

Նման սկիզբն արդեն ենթադրում է բանաստեղծության մարտական ոգին գոտեպնդող իմաստը Պատահական չէ որ երկը գրված է ժողովրդական էպոսի արվեստի սկզբունքներով ամեն տողը սրի մի հարված է հիշեցնում և ամուր է վահանի պես Բազմախորհուրդ երկ է սա և բազմանշանակ երկ, որ այնքան անհրաժեշտ է մարտի գնացող ժողովրդին

Իմաստուն է և կենսախինդ, անողոք է և անզիջում Գրված է ազգային արժանապատվության վսեմ գիտակցությամբ Եվ այսօր ձեռք է բերում արդիական հնչեղություն

Վառ, կարմիր հագիր դու հայ ժողովուրդ,
Եվ սուրդ շարժե՛ քեզ ճանապարհ բաց
Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կտրող—
Կարմիր ու տիրի՛ր —աեհաղթ, հզոր կաց
Եվ ոտքդ ամուր դու խփիր երկրին,
Հողիդ ու տանդ տերը դուն եղիր,
Է յ, դմե արեի ճամփորդ փաղեմի,
Սրով գոտեպինդ և առաջ քայլիր
Անհողդողդ դնա դեպի լույսն-արև,
Եվ ազգերն ամեն, հարգանքի նշան
Հետ-հետ դնալով ի տալով բարև
Ազատ, անարգել քեզ ճամփա կտան

Յուրահատուկ տեղ ունի Իսահակյանի երկերի շարքում «Մեր ճակատագիրը» արձակ բանաստեղծությունը Իր ձևով հիշեցնում է Իսահակյանի հայտնի «Ողբում եմ» արձակ պոեմը սա նույնպես մի խտացում-մտորում է հայ ժողովրդի եզակի ճակատագրի վերաբերյալ ատելության վառ զգացումով գրված մի նզովմունք ուղղված հայության ու քրիստոնեության ամենազազրելի ոսոխի դեմ որի անունն է թուրք կամ ինչպես սույն երկում օգտագործել է Իսահակյանը թաթար Միաժամանակ հայրենի ժողովրդի հանդեպ մի եզակի սիրո խոստովանություն է սա Գրված է 1905 թվ մի տխուր շրջան հայության համար, և ուղիղ ութսունհինգ տարի անց երբ վերահրատարակվում է, ակամա մտորում ես Վարպետը 1905 թվականի Հայաստանի համար էր այն գրել, թե մեր այս հոգեմաշ, բայց և ոգեկոչ օրերի համար

**«Հազար տարիներ և մինչև այսօր մենք կոչ ենք արել մարդկության խղճին, բայց խիղճն է եղել քարի մի կտոր**

**Եվ հոշոտվել ենք, այրվել ու մորթվել, բայց մեր հավիտյան նահատակությանը դեռ վախճան չըկա.** ո, դու խաչված ազգ,

**նահատակ աշխարհ, երկրպագության սեղան սըրբազան դու մեծ Պրոմեթե շղթայված երկրին, քո սիրտը օվկիան այն արյունարբու, աշխարհաավեր թաթարն է կըրծում հազար տարիներ, հազար տա րիներ»**

Այժմ անտիպների մասին

Ահա արդեն տարուց ավել է որ մտքիս մեջ անընդհատ կրկնում եմ իսահակյանական հետևյալ տողերը որպես մեր օրերի լեյտմոտիվ

**Նորից խառնկում են մթագին ամպեր**
**Մեր արյունավառ լեռների վրա**

Թող ինձանից չնեղանան ժամանակակից հայ բանաստեղծները բայց ոչ մեկը նրանցից այսօր չկարողացավ այնպես պատկերել իր ժողովրդի ներկա վիճակը ինչպես Վարպետը թեպետ ներկա պատ մությունը ստեղծվում է նրանց աչքերի առաջ իսկ կանխատեսել էր Վարպետը դրանով իսկ հաստատելով մի ճշմարտություն որ այսօր էլ նա մեր ամենաժամանակակից և ամենաանհրաժեշտ բանաս տեղծն է

Երկտողը վերցված է «Վեր կաց ժողովուրդ» անտիպ բանաստեղ-ծությունից գրված 1900 ական թվականների սկզբներին երբ հայ ազգային շրջանները ոգևորված Ռուսաստանում ծավալված հեղա փոխական իրադրությամբ համախմբված հայ հեղափոխական դաշ նակցության շուրջը ելան ազգային ազատագրական պայքարի նոր փուլի թե Արևմտահայաստանում թե Արևելահայաստանում

Ո վ հայ ժողովուրդ ով դու դարևոր
Ազատամարտի վսեմ արյան մեջ մկրտված զինվոր
Ինչու ես ճնշում զայրույթդ անշեջ
Որ մրրկում է հոշոտված հոգիդ
Հերիք համբերես
Մի անգամ մեռիր քան հազար անգամ
Կամ եղիր ազատ հզոր ինքնիշխան
Կամ ընկիր հպարտ ձեռքովդ ավերակ
Բռնապետության բեկորների տակ

Առաջին անգամ Իսահակյանի ժողովածուների մեջ զետեղվում է «Ձեր շարքերի մեջ կտրիճ ընկերներ» բանաստեղծությունը գրված նույնպես վերոհիշյալ շրջանում /1900 ական թվ առաջին կեսին/ Այս երկը Իսահակյանը հետագայում մտադրվել է օգտագործել իր «Ուստա Կարո» վեպում որի ձեռագրի լուսանցքում գրված է «Կայծակը /«Ուստա Կարո» վեպի հիմնական հերոսներից որի նախատիպը հանդիսացել է Իսահակյանի սիրելի ընկեր Նիկոլ Աղբալյանը/ ապա և «կոչ Այսինքն Կայծակի հայրե նասիրական կոչն է սա իսկ Կայծակը /լրիվ անունը վեպում Շրջիկ Կայծակ է/ դաշնակցության կուսակցության կողմից հայ գյուղերն ուղարկված շրջիկ քարոզիչ էր Ուստա Կարոյի մտերիմ համախոհներից Բանաստեղծության «Սլացեք առաջ — ո ետ մի նայեք Մենք ենք ձեզ նայում չէ թե դուք մեզի» տողերի դիմաց ինքնագրում գրված է «Սա ժողովուրդն է ասում» Եվ իսկապես ողջ բանաստեղծությո նը ընկալվում է իբրև հատուցման մի պատգամ ուղղված զենք վերցրած ժողովրդի ազնիվ զա վակներին

**Կռվեք քաջի պես քաջի պես ընկեք**
**Կեցցե ձեր մահը որ կյանք կծնի**

Միայն անիրավված, բզկտված տառապանքների բովով անցած ժողովրդի բանաստեղծը կարող էր գրել նման տողեր

Այս երկի հետ անմիջականորեն ձայնակցում է «Մասիսի մռայլ խոժոռ ժայռերի ցաստումնալից անունը կրող բանաստեղծությունը խոհաքաղաքական երկի մի համարձակ փորձ ուր Իսահակյանը ձըգտում է տալ պոետական վերլուծությունը մեր ազգ ստագրական պայքարի անցած ճանապարհի և միաժամանակ պատգամել բովանդակ հայությանը թե ինչ պիտի անել դուրս գալու ստեղծված դժոխային իրավիճակից Բանաստեղծությունը հիրավի Իսահակյանի պոեզիայի ամենադրամատիկ երկերից է Թէ մեր անցյալը թե մեր ներկան երևում են բանաստեղծին ծայրահեղ ծւսնր ու մռայլ վիճակներում

**Այսքան տառապանք անարդարություն**
**Մարտիրոսացան սրբազան շարքեր**
**Արյան հեղեղներ նահատակություն**
**Մի ազգի բաժին հազար տարիներ**

**Մարդկության կողմից դարերով նյութած**
**Էլ սահման չկա մեր համբերության**
**Էլ անուն չկա մեր տառապանաց**
**Մեր գերմարդկային մեր գերբնական**

Եվ հնարավոր չէ չհամաձայնել բանաստեղծի հետ նա սոսկ ճշմարտությո նն էր ավետում մեր ճակատագրի ներ

Հանապարհի վերաբերյալ Հայաստանը իրոք կանգնած էր իր բազմադարյան պատմության ամենաավերիչ պատմական հատվածում անդնդի եզրին եվ ինչ է պատգամում այս բախտորոշ պահին բանաստեղծը իր ժողովրդին Նա պատգամո մ է միակ ճշմարիտ ելքը դուրս գալու այդ օրհասական ճգնաժամից եկնք լավ ունկնդրենք մեծ հայրենասերի պատգամը այդ գաղափարախոսությունը ժամանակին մեզ փրկեց իսպառ կոր Նանումից պատմական ծանր հատվածում մենք մեր հույսը լնոք է դնենք մեզ վրա

Այսպիսին է Իսահակյանը Իր գաղափարի գինվորը Եվ սակայն նրա ավետած պայքարը միայն փլուզում չպիտի բերեր հույսի լույսը հիշո ճառագել է մեծ ռոմանտիկի հայացքի առաջ

Եվ կրկին նրա նոր բանաստեղծության տողերում ազատաբաղձ ի մարդու ոգին տակն ու վրա է անում ‹բաշերն հողմակոծ› ուրացող նրա մարտաշո նչ մուսան

**Բաշերն ալեծուփ բաշերն հողմակոծ**
**Ազատ դաշտերով նժույգս է թըռչում**
**Եվ սմբակներից բխում է հուր բոց**
**Դաշտերն են թնդում վախ առած փախչում**

**Ազատամարտի հրդեհից կըգամ**
**Ուր կուրծքն եմ ճեղքել թշնամու դժխեմ**
**Դրոշն է ձեռքիս վեհ ազատության**
**Եվ հաղթանակի երգերով վսեմ**

Վերոհիշյալ երկերն իհարկե իրենց լայն ընդգրկումով դուրս են գալիս Հայդուկի երգերի› ֆիդայական թեմատիկայից ինչպես

և արվեստի առումով տարբերվում են շարքի ժողովրդա անահյու սական բնույթի պատումից բայց իրենց ամբողջությամբ մարտական հնչեղությամբ վերաբերում են նշանավոր շարքին նրա մի անքակ տելի օղակն են կազմում

Առանձնահատուկ տեղ ունի ներկայացվող շարքում մեկը Իսա հակյանի հազվադեպ պոեմներից «Գողթան քնարը որ ազատու թյան » տպագրված ‹Դրոշակում» /1901 № 1/ «Հայ գուսան» ստորագրությամբ Ընթերցողին մինչ օրս հայտնի են հիմնականում Իսահակյանի չորս պոեմները սա հինգերորդն է գրված ‹Մասսա Մանուկից հետո 1900 թվ Ինը տասնամյակ է բաժանում մեզ պոեմի ստեղծման օրից սակայն այն և այսօր ընկալվում է որպես հայրենասիրական պատգամների մի զորեղ շարք երբեք չխամրող երբեք չկորցնող իր ազգապահպան իմաստը Երկը ստեղծված է հայ ժողովրդական բանահյուսության մեջ տարածում գտած զրույց պոեմի ավանդներով այստեղից և անվանումը «Գողթան քնարը »

Նշանակալից է պոեմի բնաբանը «Մազը չի թողնում որ կտրիճ դառնամ Թուրը չի թողնում որ գուսան դառնամ› — այն ասես լինի երիտասարդ Իսահակյանի կյանքի ուղու մետաֆորը Կտրիճ թե գու սան սազը թե թուրը որը նախընտրել Հիրավի Իսահակյանը ծնված էր ֆիդայի լինելու համար եթե չլիներ բանաստեղծի աստվածատուր շնորհքը Սակայն չեղավ սոսկ բանաստեղծ նա եղավ ֆիդայի բանաստեղծ Որն իր գաղափարի համար 20 տարեկան հասակից թե բանտ նստեց թե աքսոր տեսավ և վերջապես իր փառքի գագաթնակետին ստիպված եղավ թողնել հայրենիքը և երկար ու ձիգ տարիներ պանդուխտի ցուպը ձեռքն առնել

Եվ մնաց ֆիդայի բանաստեղծ որ իր ողջ կյանքում և ամենադժ նադեմ պայմաններում անգամ հավատարիմ մնաց հայրենիքի ազա տագրության համար արած իր ուխտին

* * *

Համառոտակի բնութագրելով Իսահակյանի «Հայդուկի երգերը», կարելի է ասել, որ այնտեղ երեք հիմնական թեմա է հնչում ազգային ազատագրական պայքարի մարտակոչ ֆիդայական ազատամարտի պատկերում գոհված հերոսների հիշատակի ներբողում

Եթե առաջին երկու թեմաներով բանաստեղծությունները հիմնականում ընդհանուր բնույթ են կրում այսինքն ուղղված չեն ճշգրիտ պատկերելու այս կամ այն հերոսի գործած սխրանքները կամ մեր հերոսամարտի կոնկրետ դրվագները ապա Իսահակյանի ներբողները, որպես օրենք ունեն իրենց ճշգրիտ հասցեատերը Յուրաքանչյուր ներբող ձոնված է պատմականորեն ճշմարիտ հերոսի հիշատակին·

Բայց դրանք սովորական հրաժեշտի խոսքեր չէին հակառակ դեպքում ամենայն հավանականությամբ մեր ներկա շարքից դուրս կմնային Դրանք ֆիդայիներին արժանի հրաժեշտի խոսքեր էին ուր չ թե սուգն ու վերքն են առաջին գիծ մղվում ուր ոչ թե լացն ու սրտաաուքն են տիրապետողը այլ ազգային անկախության սուրբ պայքարի ներբողումը հայրենիքի ազատությանը նվիրաբերված կյանքի պանծացումը

Այս բնույթի գործերից առաջինը գրված է 1896 թվականին Իսահակյանի պատանության մտերիմ ընկեր ալեքսանդրապոլցի երիտասարդ ուսուցիչ Ավետիք Մալոյանի /Ավոյի/ ողբերգական վախճանի կապակցությամբ Ավոն իր երկու ընկերների հետ գինված որոշում է 1896 թվ ուշ աշնանը անցնել ռուս տաճկական սահմանը և իր կամավորական խմբով միանալ Երկրում գործող ֆիդայական խմբերին Սակայն վրա հասած կատաղի բուքը խափանում է նրանց ծրագիրը ձնաբքից ուժասպառ եղած Ավոյին և նրա ընկերներին գերի է վերցնում քուրդ ավազակների մի

հրոսակախումբ և բերում հանձնում է սահմանապահ ռուս զորամասին ուր սարսափելի խոշտանգումների ենթարկելուց հետո Ավոյին գնդակահարում են և դիակը տալիս Կարս քաղաքի մի հայ խանութպանի հողին հանձնելու համար Հերոսի կյանքի վերջին պահերի նկարագիրը տրված է «Դրոշակում /ժնև 1896 № 26 էջ 192/, իսկ չորս տարի անց նույն «Դրոշակը» տպագրում է Իսահակյանի «Ավետիք Մալոյանի անմահ հիշատակին» բանաստեղծությունը /մինչև այդ 1899 թվականին այն տպագրվել էր Իսահակյանի այնքան սիրելի Մուրճ ամսագրում /№ 9 էջ 1002—1003/

Այս բանաստեղծության մեջ կարևոր տողեր կան այն մասին որ ֆիդայու պայքարը վերջին հաշվով ուղղված էր հանուն հասարակ աշխատավոր ժողովրդի չարքաշ կյանքի բարելավման

**Էնոր դարդը ախ մեր դարդն էր**
**Ու մեր սրտից էն գընաց**
**Էնոր դարդը խեղճի դարդն էր**
**Խեղճի սրտից էն գընաց**

Հաջորդ ներբողը նվիրված է անվանի ֆիդայի Գուրգենի Բաղդասար Մալոյանի/ հիշատակին Այն գրված է 1900 թվականի աշնորիլին հերոսի մահվան տարելիցի նախօրեին Այդ ինչպես և Մենակի /ե Առստամյան նվիրական ստվերին» ներբողները ձոնված են Իսահակյանի մտերիմ ո սիրելի ընկերների հիշատակին թե Գուրգենին թե Մենակին Իսահակյանը ան ձամբ ճանաչել է երկոսն էլ զոհվել են իրենց կամավորական ջոկատի գլուխն անցած անհավասար մարտերում մեկը Մուշի մերձակայքում ւյուրը Բաւենի դաշտում Եվ բանաստեղծի հետ ասես նաև հայրենի բնությունն է ողբո մ իր պանծալի զավակների վախճանը

Գըլգը.ալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերեն
Ծիծեռները ծիվ ծիվ եկան
Գարնան զալը երգելեն

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր
Հովն է հեծեծում Բասենա դաշտում
Ոսկի երգերըդ, իմ ազիզ ընկեր
Էն հովն է երգում Բասենա դաշտում

«Ոսկի երգերդ իմ ազիզ ընկեր» խոսքերը ուղղված են Գևորգ Նգար/ Առստամյանին Մենակ մականունով հայտնի դարձած ապա յա ֆիդային ծնվել է հայոց Արցախի սրտում Շուշիում պատանի հասակից հրաշալի երգեր է գրել այդ թվում և իր ընկերոջ «Մաճկալ Նա. բեզարած ես» «Սիրեցի յարըս տարան» բանաստեղծութ յունների խոսքերով Նրա հորինած երգերը այժմ անարդարացի հռուցված ժամանակին մեծ ժողովրդայնությո ն են վայելել, մանա վանդ հայդուկների շրջանում Սակայն երիտասարդ ֆիդայի-երգա հասի երգը կիսատ մնաց նա զոհվեց հրացանը ձեռքին Բասենա յաշտում հազիվ բոլորած կյանքի 25 րդ գարունը Բանաստեղծը ստա է ողբացել հերոս ընկերոջ վախճանը և նրա հիշատակին է ուղղել «Ընկերիս հիշատակին / Ախ նորից եկավ լալազար գա յուն...»/ սքանչելի ներբողը

Շարքի զարդը, սակայն պիտի համարել «Սերոբի հիշատակին» լ ևստեղծությունը Հայ ժողովրդի փառապանծ զավակ ֆիդայա լ ն շարժման հիմնադիրներից առաջինը Աղբյուր Սերոբը /Սերոբ Նալբանդյան 1864—1899/ հայ ազատագրական շարժման Խսահակ ունի ա/հենասիրելի հերոսն էր Պատանության տարիներից մինչև լ ծ րություն Սերոբի հանդեպ մեծ պաշտամունք ուներ համարում

էր նրան ամենալուսավոր դեմքը հայ հերոսապատումի որն իր կեն դանության օրոք արդեն լեգենդ էր դարձել

Որքան էլ Սերոբի ողբերգական վախճանը հոգեկան խոր ցավ է պատճառում բանաստեղծին սակայն այդ բանաստեղծությունը երբեք չպետք է ընկալել սոսկ հրաժեշտի խոսք

Այն հնչում է իբրև մի էպիկական ասք ստեղծված հայ դիցաբանական բանաստեղծության լավագույն ավանդներով «Սա րերի արքան» արծիվը կտցել հանել է Սերոբի սիրտը որ գեշ դուշմնին փայ բաժին չըլնի» ու տարել է Նեմրութ սարի բար ձունքները ուր վերածվել է աղբյուրի և այդ աղբյուրը մինչև օրս կենսական ջուր է տալիս հայ ժողովրդին Հերոսը չկա սակայն դա սոսկ ֆիզիկական բացակայություն է կա այն վսեմ գործը որին իր պայծառ կյանքը զոհաբերեց Սերոբը իսկ քանի դեռ գործը կա կա և Սերոբը Եվ պատմությո նը ցույց տվեց որ հազար անգամ ճիշտ էր Ավետիք Իսահակյանը որ տակավին 1899 թվականին գրել էր

Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Սրևի պես
Նեմրութ սարում լույս կուտա
Ու քարերում սև հողերում
Թեկուզ թաղեմ չի մարի
Սուրբ վաթանի ազգի սիրուն
Չուր հավիտյան չի մարի
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում բոց կուտա
Սարի սառույց ձյուների մեջ

**Թեկուզ թաղեմ չի սառի**
**ժողովրդի ազատ օրվա**
**Պատվի սիրուն չի սառի**
**Չուր հավիտյան չի սառի**

Այս հավատով է գրել Իսահակյանը Սերոբի ներբողը և այս հավատը ապրեց մեկ դար կապրի ավելին այնքան ժամանակ մինչև հայ ժողովուրդը չհասնի իր դարավոր իր նվիրական իդեալի իրագործմանը

Մեր ժամանակի պատմությունն այնպիսի ընթացք ստացավ որ մեր Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքը ձեռք բերեց խիստ արդիական հնչեղություն

Ազգային նոր հերոսապատումների ճամփին հայ ժողովուրդը նորից հիշեց իր ֆիդայի հերոսներին վերստին հիշեց հայ հեղափոխական համազգային շարժման իդեալը Այնպես որ այսօր մենք դիտում ենք Իսահակյանի «Հայդուկի երգերից» շարքը ոչ միայն գրականության պատմության փաստ այլ գործող արվեստ կան իմաստ ունեցող բանաստեղծությունների շարք որոնց գեղարվեստական սղաքացիական թե կազմակերպչական նշանակությունը անուրանալի է

Շարքի երեք եզրափակիչ երկերը նույնպես վերաբերում են հայ հերոսների թվին դրանք ստեղծվել են փոքր ինչ ավելի ուշ ժամանակում երեքն էլ ուղղված են կյանքից անժամանակ ու ողբերգականորեն հեռացած ժողովրդի պանծալի զավակների հիշատակին

Առաջին բանաստեղծությունը գրված է հայ ֆիդայական խմբերի մեծ դար կազմակերպիչ Իսահակյանի սիրելի բարեկամ Սևքարեցի Հովի /Ծովանյան Սարգիս 1870—1908/ մահվան առթիվ Իսահակյանը մասնակցել է ժողովրդական հերոսի հիշատակին մատուցված ստորարագին նրա հայրենի Սևքար գյուղում և հանդես եկել

իր նոր գրած բանաստեղծության ընթերցմամբ Սևքարեցի Սաքոյին ինչպես և Սերոբին նույնպես վիճակված էր անմահությո ն թեև տարիներ շարունակ թույլ չէր տրվում այդ հերոսների անունը տալ սակայն նրանք միշտ հարազատ ժողովրդի հոգո խորքում էին Եվ երբ շնորհակալ ժողովուրդը իր զավակի հիշատակին այսօր հո շարձան է կանգնեցրել մեզ թվում է տեղին կլիներ որ հերոսի քարին սեպագրվեին Իսահակյանի բանաստեղծության եզրափակիչ տողերը

**Եվ միթե մեռար իմ անգին ընկեր**
**Մեռնում են ինչպես մարդիկ անհամար**
**Ո չ դու չես մեռնի ոչ դու չես մեռել**
**Ինչպես չի մեռնում սերն ու գաղափար**
**Դու միշտ ապրում ես քո ժողովրդյան**
**Արյունոտ հոգում ինչպես վառ երազ**
**Ինչպես արշալույս վեհ ազատության**
**Շքեղ անարատ անմահ կմնաս**

Սաքոյի հիշատակին նվիրված բանաստեղծո թյո նը մինչև վեր ջերս անտիպ էր մնացել /տպագրվեց առաջին անգամ տողերիս հեղինակի կողմից «Գրական թերթ» 1989 հոկտեմբերի 13 № 42/ հավանաբար ցարական գրաքննությունը ժամանակին /հերոսի մահ վան օրերին/ արգելել էր նրա տպագրումը հետո հետևեց Իսահակ յանի տարագրությունը իսկ երբ վերադարձավ հայրենիք ստալինյան բռնատիրության մռայլ շրջանն էր ով կհանդգներ այն լույս աշխարհ բերել

Լփրեմ Խան /Եփրեմ Դավթյան 1878—1912/ կենդանության օրոք ի կ լեգենդ դարձած հերոսը որը երիտասարդության տարիներին ոայ անդրանիկ ֆիդայական խմբի անդամն էր (որը ղեկավարում էր Լրախտահիշատակ Սարգիս Կուկունյանը) հասո ն տարիներին Կարսկաստանի հեղափոխական հակաշահական զորախմբերի գլ Լավոր հրամանատարն էր և իր մահկանացուն կնքեց զենքը ձեռքին Սպահանի մոտ Սո րջե գյուղում շահի կրտսեր եղբոր զորքերի դեմ հարուչելիս 1912 թվ ապրիլի 25 ին Ահա այս քաջարի ու փառա տանվե ծ մարդուն է նվիրված Իսահակյանի «Հերոսը» արձակ բա ոատեղծո թյուն ներբողը գրված նրա մահվան առթիվ 1912 թվա կանին: Այս արձակ ասքի յուրաքանչյուր տողը մի խորհրդանիշ է մի լև հայրենասիրական խորհրդածություն Հիանալի է երկի սկիզբը

**«Նրա ծննդավայրը Արցախ Սյունյաց աշխարհն է քաջերի այդ օրրանը որ միշտ բարձրագլուխ է եղել համատարած ստրկության ժլջ այդ անմատույց լեռներն ու դժար կածանները, ուր թափառում Դավիթ Բեկի ոգին»:** Այս երկը մենք զետեղեցինք «Հայդուկի Լ լ յ ի կ» բանաստեղծական շարքում քանի որ այն թե իր կառուց Լածքով / արձակ բանաստեղծություն/ թե իր ասելիքով միահյուսվում ոլչ շարքի հետ դառնում նրա մի բնական մասը

Ամփոփվում է շարքը մի եզակի հայ մարդու հիշատակին նվիրված Լ ստեղծությամբ որի անունը ինքնին երկար տարիներ խոր յ ո ւ չում էր հայ հեղափոխական համազգային շարժումը և սա Լ ոյդ անունը մահվան սպառնալիքով արգելված էր նույնիսկ ոո Լ ոանել

Այս հարդո մասին Հովհաննես Թումանյանը գրել է «Շատ հա Լ Լ ա յ մեջ մինը կարող է լինել ազնիվ և անկեղծ էս տեսակ Լ յ ա գյո ո մարդկանցից մինն էր Սիմոն Զավարյանը» /«Հորի Լ Լ Թիֆլիս 1913թ հոկտեմբերի 17/

Լ Լ ա յ համազգային շարժման մեջ ճանաչում էի երեք մարդու Լ յ ոնահամանորեն հավատում էի դրանք այդ շարժման խիղճն

էին որոնց մահից հետո շարժումը անդարձելի կորուստ կրեց դրանք էին Ռոստոմը /Ստեփան Զորյան/ Քրիստը (Քրիստափոր Միքայել յան) և Սիմոնը /Զավարյան/» — իր զրույցներից մեկո մ խոստովա նել է Իսահակյանը

Սիմոն Զավարյանն իր մահկանացուն կնքեց արյան զեղումից Կ Պոլսում ողբերգականորեն ծանր մի շրջանո մ երբ ինքը իր շիտակ ու ողջախոհ միտքը առավել քան երբևէ անհրաժեշտ էին համազգա յին շարժմանը

Նա չտեսավ իր գուրգուրած երազանքը Հայաստանի Հանրապե տության ծնունդը ու ողբերգականորեն կարճատև գոյությունը Սակայն այն ինչ հասցրեց անել իրավունք է տալիս նրան դասելու հայ ազատամարտի հերոսների շարքը թե որպես ազգային ազա տագրական շարժման խոշոր գործիչ թե որպես Արևմտահայաստա նում առաջին կամավորական զորախմբերի կազմակերպիչ թե որպես համազգային շարժման տեսաբան

Իսահակյանը տակավին դարավերջից մտերիմ ընկերություն է արել Սիմոն Զավարյանի հետ շրջել են միասին Հայաստանի գյուղերն ու հեռավոր շրջանները քարոզել ժողովրդի մեջ այն գա ղափարը որը պիտի ծներ հայ հեղափոխական շարժո մը այնուհետև Թիֆլիսում ու Բաքվում կազմակերպել են զենքի և դրամական միջոց ների հայթայթում եղել են միասին և ժնևում և Վիեննայում Իր նշանավոր «Ուստա Կարո» վեպի «Անի» անունը կրող անտիպ գլխում Իսահակյանը վերակերտել է մի քանի դրվագներ կապված Սիմոն Զավարյանի գործունեության հետ Սակայն ընկերոջ պայծառ անունը նա պիտի անմահացներ իր գրչով ստեղծելով ընդհանրապես հայ ներբողային պոեզիայի լավագույն երկերից մեկը «Սիմոն Զավար յանի նվիրական հիշատակին» բանաստեղծությունը (1913թ) ժնևում ընկերոջ մահվան բոթը առնելուց հետո

Այս բանաստեղծության մեջ մի զարմանալի միահյուսում է իրա-կանացրել Իսահակյանը հերոսը և նրա գաղափարը միաձուլված են

Ռրովհետև ըստ Խաչատրյանի Սիմոնն այդ իրավունքը նվաճել էր
ա ինքը իր առաքինությամբ կարող էր հանդես գալ որպես այդ մեծ
ոլափարի մարմնացում Եվ բանաստեղծության տողերում մեր առջև
այսօր այտվում ու բնորոշվում են հերոսն ու համազգային գաղափա
ր որպես մի բնական միասնություն Եվ հենց այս պարագայում է որ
ստեղծությունը վերաճում է սոսկ հերոսի կերպարին գրված
ներգրից դառնում մի վսեմ խորհրդածություն ուղղված համազգա
ն ի պափոխական շարժմանը նրա էությանն ու նպատակին Այս
վ դառնում է ծրագրային գործ Մարգարեական իմաստ են
ա նաև բանաստեղծության՝ եզրափակիչ տողերը

**Դու Զոհալ աստղ մեր վերքերի բալասան**
**Մեր ցավերի համար եկած այս աշխարհ**
**Մեր արյունոտ հովիտների սուրբ շուշան**
**Դու հավերժ ես դու չմեռար չմեռար**

**Նա չմեռավ նա հոգնեցավ նա գնաց**
**Բայց երբ նորից աշխարհ ընկնի հուր ու թուր**
**Նա պիտի գա պատգամներով մոռացած**
**Ավանդելով սերն երկնքի դռնե դուռ**

ա ավությունը տարբեր ճակատագրեր բաշխեց Խաչատրյանի
այտ կի Էրգերից» շարքի բանաստեղծություններին դրանցից մի
նիսր դարձան ժողովրդական երգեր մտան դասագրքերի մեջ
ն ն այնպիսիք որ տպագրվեցին պատերազմական ծանր տարի
ր ն Հայրենիքի հետ» /1942/ ժողովածուում «Բոցիկու սարին սև
ն ի չոքեր և «Ինձ տեղ տվեք Սիփան սարեր » բանաստեղ
յ ն ն ել որպես ժողովրդի ուժերը համախմբող զորեղ ազդակ

դակ սակայն մեծ մասը դրանցից պիտի մնային սոսկ Դրոշակի դեղնած էջերում Կային և այնպիսիք որ այդպես էլ մնացին բա նաստեղծի գզրոցում այնտեղ սրբությամբ պահվող Սերոբի Անդ րանիկի Հրայրի Քրիստափորի Չաուշի Սևքարեցու Կոմսի ու Քեռո նկարների կողքին բայց դրանց ժամանակը միևնույն է պիտի գար որովհետև ինքնորոշման ու ինքնաճանաչման ճանապարհին կանգնած աշխարհի ոչ մի ազգ չի կարող մոռացության գիրկը նետել այն սուրբ գաղափարները որ ժամանակին ծնել է այդ ազգի հավաքական կամքը որոնք պայքարի հավատ ու հո յս են նրան ներշնչել

Ահա թե ինչու մենք այսօր թերթում ենք ‹Հայդո կի երգերից ժողովածուն որպես ժամանակակից գիրք նրա էջերից զգո մ ենք մեծ հայրենասերի և նրա անմահ հերոսների սրտի տրոփյունը որն այսօր համահունչ է դառնում հայոց համազգային պայքարի նոր երթի հետ

* * *

Հայդո կի երգերի կողքին ներկա հատորի մեջ տեղ են գտել նաև մի շարք բանաստեղծություններ որոնք նույնպես ծանոթ չեն հայ ըլ թերցող լայն շրջաններին Դրանք այն բանաստեղծություններն են որոնք ժամանակին տպագրվել են Իսահակյանի առանձին բա նաստեղծական գրքերում և հայ մամուլի պարբերականներում սա կայն հե ռագա տարիներին ինչ ինչ պատճառներով չեն զետեղվել բանաստեղծի երկերի ժողովածուներում Բնականաբար հարց է ծա գում ինչու այդ բանաստեղծություններին ինքը Իսահակյանը կամ նրա հատորների կազմողները չեն անդրադարձել չէ որ դրանց մի զգալի մասը ժամանակին լույս է տեսել Իսահակյանի այնպիսի հայտ նի հատորներում ինչպիսիք են «երգեր ու վերքեր» 1898 /Ալեք սանդրապոլ/ Բանաստեղծություններ› 1903 /Բաքու/ «Երգեր ու

[illegible] 1908 /Թիֆլիս/ «Աշնան ծաղիկներ» 1922 /Վենետիկ/ [illegible] այդ գրքերը պատվով են դիմացել ժամանակի փորձությանը [illegible] է որ Իսահակյանը /ինչպես ամեն մի ճշմարիտ բանաս[illegible] ծայր աստիճան խստապահանջ է եղել իր երգերի հանդեպ, [illegible] հատոր նա մշանում էր նույնիսկ ժողովրդական ճանաչում [illegible] իր գլուխգործոցները. Այդ աշխատանքին մոտենում էր [illegible] ստեղծագործական պրոցեսի Նա ձգտում էր ընթերցողին [illegible] զուտ կատարյալը այն ոսկի հատիկը որ տարիների [illegible] դիմացել է իր իսկ հեղինակային քննությանը Այս հան[illegible] առավել էր դրսևորվում երբ կազմում էր իր երկերի [illegible] կամ Ընտրանու հատորները /1939—1940 թթ [illegible] 1951 թթ / և իր վերջին ընտրանին երկերի մեկհատորյակը [illegible] Առանձին ուսումնասիրության թեմա է Իսահակյանի [illegible] իր հատորների ստեղծման իր բանաստեղծությունների [illegible] վերաբերյալ եվ սակայն այսօր ժամա[illegible] մեր առջև հառնում են մի շարք երկեր, որոնք անար[illegible] «մոռացված» են, որոնք ասես մեկ անգամ մաքուր[illegible] մեջ իրենց պատյանից երևացել են աշխարհին և կրկին [illegible] ջրերի հատակը

[illegible] հատորը կազմելիս մենք նպատակ չենք ունեցել ներկայաց[illegible] ինչ ընդհանրապես դուրս է եկել Իսահակյանի գրչից [illegible] կատարել մեր ընտրությունը հարազատ մնալով [illegible] Իսահակյանի պոեզիայի ընդհանուր ոգուն Ներկա[illegible] գործերը որոնք ըստ մեզ կհետաքրքրեին իսահակյանա[illegible] իր պաշտելի բանաստեղծի պոետական ժառանգության [illegible] մասը

[illegible] ընդգծել նաև մի օրինաչափություն Իսահակյանն իր [illegible] ժողովածուները կազմելիս հիմնականում հենվել [illegible] Խորհրդային Հայաստանում /Երևան-Պետհրատ/ [illegible] Բանաստեղծություններ» ժողովածուի վրա իսկ այդ

ժողովածուի ծավալը ժամանակի հնարավորությունների համաձայն բավական սահմանափակ էր այնպես որ շատ գործեր պարզապես դուրս էին մնացել նրա տեսադաշտից մնացել էին նրա վաղ ժողովածուներում և մանավանդ հայ պարբերական մամուլի էջերում, իսկ Իսահակյանը տպագրվել է ժամանակի համարյա բոլոր հայ պարբերականներում թե նախահեղափոխական Կովկասյան և Արևմտահայ, թե հայ խորհրդային ու սփյուռքի Հայ պարբերականները «Մուրճից» սկսած միշտ էլ սիրով են ընդառաջել բանաստեղծին

Այստեղ ևս պետք է մի հանգամանք ընդգծել ինքը Իսահակյանը, խմբագրություններին որպես կանոն ուղարկել է իր երկերի ձեռագրերը իսկ տպագրվելուց հետո միշտ չէ որ հետ է վերցրել դրանք կամ թե հավաքել է այդ պարբերականները Տարիներ անց հաճախ էլ մոռացել է դրանց հրատարակման տեղը կամ ի վիճակի չի եղել ի մի բերել Ասենք օրինակ ինչպես Վենետիկում ապրող բանաստեղծը պիտի ձեռք բերեր «Տարազի» 1898 թվականի համարը կամ արդեն Երևանում պիտի գտներ փարիզյան «Անահիտի» 1900 թվականի կամ «Հայրենիքի» /Բոստոն 1914 թիվ/ համարները Մանավանդ որ շատ գործեր ժամանակին տպագրվել էին այն կուսակցությունների պարբերականներում որոնց անունն անգամ տալը արգելված էր Ի նչ փույթ որ դա զուտ հայրենասիրական կամ սիրային պոեզիա էր կարևորն այն էր թե որտեղ էին դրանք տպագրվել հայ «բուրժուանացիոնալիստների» որ պարբերականում և ոչ ոք Խորհրդային Հայաստանում սիրտ չէր անի դրանք նորից ի հայտ բերել Առանց այդ էլ քիչ թվով ամպեր չէին կուտակվում Իսահակյանի գլխին 1937—1953 թվականներին Իսկ բռնապետի մահից հետո պարզապես ժամանակ չմնաց Իսահակյանը հազիվ հասցրեց կազմել իր ութսունամյակի նախօրեին լույս տեսնող «Երկերի» մեկհատորյակը բայց չէ որ դա էլ ի վերջո ընտրանի էր Այնպես որ բացատրությունները շատ են և սակայն պատճառները գուշակելու փոխարեն այսօր

[illegible] հիշտ կլիներ ընթերցողին ներկայացնել Խաչատրյանի պոե
[illegible]ական ստեղծագործության «մոռացված և անհայտ» էջերը

Այդ ինչ գործեր ենք ընդգրկել սույն հատորի կազմում Նախ
[illegible] գործերը որոնք վերաբերում են Խաչատրյանի վաղ շրջանի
[illegible]ստիային (1890—1899 թթ) և որոնք տպագրվել էին «Երգեր
[illegible]երգերի» առաջին գրքում /1898/ «Տարազում» և «Մուրճում»
[illegible]ետև «երգեր ու վերքերի» բոլոր երկերն անխտիր փոխանցվեցին
[illegible]ստեղծություններ» /1903/ և «Երգեր ու վերքեր» /1908/
[illegible]ատվածները ապա մի շարք երկեր այդպես էլ մնացին դարավերջի
[illegible]Մուրճի» ու «Տարազի» համարներում այդ երգերից են «Քնած
[illegible]ելի [illegible]», «Դու մի սիրիր իմ աչերը..» «Այն վառ երազ էր..»
[illegible]ել երեկ» «Սրտիս վրա մի վարդ —ամպ կա » «Լալկան
[illegible]ի մեղմ կը խշշա », «Ողկույզ» «Պանդուխտի երգ» «Ընկերիս
[illegible]ատակին» «Մանկուց գիտեմ որ ամեն մարդ » և այլն
[illegible]ատար. դրանք մատենագրական հազվագյուտ նմուշներ են
[illegible]ելի միայն սակավաթիվ ընթերցողներին Եվ դրանք միանալով
[illegible]ի շրջանի Խաչատրյանի մի շարք երկերին և անտիպներին
[illegible]ալիս են ամբողջական տպավորություն Խաչատրյանի ալեքսանդ-
[illegible]ան և Ջմիածինյան և լայպցիգյան շրջանի պոեզիայի վե
[illegible]ի մասին

Այնուհետև գալիս է բանաստեղծությունների այն շարքը որն
[illegible]ել է [illegible]ոսկ մեկ տպագրություն 1903 թվականին Բաքվում լույս
[illegible]ած «Բանաստեղծություններ» և 1908 թվականին Թիֆլիսում
[illegible]ած «Երգեր ու վերքեր» ժողովածուներում Այս երկու գրքերը
[illegible]ել են նաև գումարն էին «Երգեր ու վերքերից» /1898/ հետո
[illegible]ված գործերի

[illegible]ետ «Երգեր ու վերքերը» /1898/ Խաչատրյանի պոետական
[illegible]ության սկիզբն էր «Բանաստեղծությունները» /1903/ սլացիկ երթը
[illegible]ել [illegible]ական ապա «Երգեր ու վերքերի» /1908/ երկրորդ գիրքը
[illegible]ել նվաճումն էր

Հետագա բոլոր իսահակյանական ժողովածուները հիմնվեցին այդ ժողովածուների վրա Բայց և եղան շատ բանաստեղծություններ որոնք այդպես էլ մնացին «Բանաստեղծությունների» /1903/ և «Երգեր ու վերքերի» /1908/ հատորյակներում չփոխանցվեցին նոր ժողովածուները մինչդեռ ամենայն իրավունքով նրանք արժանի էին այլ բախտի

Նրանց թվին կդասեինք այնպիսի գործեր ինչպիսին են «Մի խոստանար ծագել նորեն » «Ինչիս է պետք սազն ու շըվին » «Եվ այս մըռայլ խոլ աշխարհում» «Ախ աչերիս մեջ հուր մի որոնիր » «Քնքուշ սրտով ես սիրեցի...» «Շուրջըս ապրում են բյուր հազար մարդիկ » «Գուցե իմ հեծծանք հառաչք ու մըրմունջ » «Իրիկունն եկավ հավքերն առան » և մանավանդ «Էս սարերի սիրուն լալեն » «Երկաթե ցուպ ձեռըս առնեմ » «Երնեկ ձեզի զըմրուխտ սարեր », «Ախ աչերդ արև ու մութ » բանաստեղծությունները որոնք նախկինում զետեղվել էին «Ալագյազի մանիներ» շարքում, բայց հետագա թվականներին պոեմը մշակելիս Իսահակյանը դրանք չի ընդգրկել վերջնական տեքստի մեջ Մենք հարկ գտանք դրանք այստեղ ներկայացնել ոչ թե որպես «Ալագյազի մանիներ» պոեմի շարունակություն այլ համանուն բանաստեղծական շարքի ինքնուրույն գեղարվեստական արժեք ունեցող գործեր և միթե կարելի էր «մոռացության գետին» հանձնել նման քնարական զեղումը

**Երկաթե ցուպ ձեռըս առնեմ**
**Աշխարհ ընկնեմ մեն մենակ**
**Կորած բախտըս ման գամ գտնեմ**
**Աշխարհի մեջ մեն մենակ**

Սար ու ձորեր քուր ու ախպեր
Բախտըս չիտեք,— ուր գնաց
Հազար ու մի թագավորի
Թագ կար գլխին ուր գեաց

Ջառ աստղուեքով ճակտին կամար
Ճակտին պսակ,— ուր գնաց
Ոսկի արևն սրտիս մեջ վառ
Ոսկի արևս ուր գնաց

[illegible] արդեն ասացինք Խսահակյանի անծանոթ կամ քիչ հայտ[illegible]վով բանաստեղծություններ սփռված էին հայ պարբերական [illegible] էջերում սկսած 19 րդ դարի վերջից մինչև բանաստեղծի [illegible] ավարտը մի առանձին խումբ էլ կազմում են հետմահու [illegible] անտիպ բանաստեղծությունները

[illegible] են եղել այդ բանաստեղծությունների ճակատագրերը [illegible] մեծ մասը մամուլում տպագրվելուց հետո մտել են նրա [illegible] ժողովածուները երկերի հատորները և պատկանում են [illegible] ստեղծագործության ոսկի ֆոնդին կան և այնպիսիք որոնք [illegible] տպագրվելուց հետո մեկ անգամ զետեղվել են Խսահակյա-[illegible] այն ժողովածուում և ինչ-որ չափով հայտնի են ընթեր[illegible]. սակայն մեծ թվով բանաստեղծություններ ունեցել են միայն [illegible] տպագրություն

Սակայնել բերված մեր հավաքածուի երկերը ներկայացնում են [illegible] ստեղծագործության համարյա բոլոր փուլերը այնտեղ [illegible] թե վաղ շրջանի թե հասուն և ուշ շրջանի գործեր: Բանաստեղ-[illegible]ությունների մի զգալի մասը վերցված է «Մուրճից» և «Տարազից» [illegible] նախասիրած պարբերականներից իսկ մյուս մասի հա-

մար հարկ է եղել երկարատև ու մանրազնին աշխատանք կատարել նայել նախահեղափոխական ու սփյուռքի հայ մամուլի հարյուրավոր պարբերականներ տարբեր գրական հասարակական հանդեսներ ու տարեգրքեր Գուցե մեր կատարած աշխատանքը չի ընդգրկում ամբողջությամբ այն մամուլը ուր տպագրվել է Իսահակյանը բայց մենք թերթեցինք այնքան ինչքան որ մեզ հայտնի էր ու մատչելի Այստեղ ընդգրկված են նաև նախկինում այսպես կոչվող փակ ֆոնդերի նյութերը

Այսպիսով որոշակի ընտրություն կատարելուց հետո գոյացավ Իսահակյանի «մոռացված և անհայտ» բանաստեղծությունների մի զգալի շարք Շարք որը երբևէ իր հնարավոր ամբողջությամբ ներկայացված չի եղել հայ ընթերցողին Իհարկե, միանշանակ չէ այդ երկերի գեղարվեստական արժեքը հասարակական նշանակությունը Կան գործեր որ հասկանալի է թե ինչու են անտեսվել Իսահակյանի կողմից Բայց շատ և շատ ստեղծագործություններ այսօր անհրաժեշտ է հանել մոռացության գրկից և ներկայացնել նոր սերնդի ընթերցողի դատին

Նման գործերի թվին ես կդասեի «Իմ ուղին» նիցշեական ոգով բանաստեղծությունը որը գրվել է «Աբու Լալա Մահարիի» ստեղծումից դեռևս տասը տարի առաջ 1900 թվականին Այս երկը առաջին և վերջին անգամ տպագրվել է չոպանյանական «Անահիտ» ամսագրում /1900 № 9—11 Փարիզ/ Բանաստեղծությունից հորդում է կյանքի հորձանքներից դուրս գալու միայնակ թափառումի ռոմանտիկ ձգտումը

Դըժընդակ ճամփովդ գալարվիր առաջ,
Վեհության ուխտի սեգ ճանապարհորդ
Մենիկ ուղիովդ սըլացիր հեռու

Սուրճում» 1904 թվականին տպագրվել են «ես լալ կուզեմ
... տխուր ու թափառել...» և «Այսպիսի դառն դաժան օրերում...»
... ստեղծությունները որոնք ճիշտ է իրենց ծավալով որոշակի
... յնավունությամբ հարազատ չեն Իսահակյանի բանաստեղծական
... լատի սկզբունքներին սակայն ասելիքի նշանակությամբ պետք
... որ վրիպեին իսահակյանասերի հայացքից այս գործերից կրկին
... ում է իր ժամանակի կեղծիքն ու հոգևոր սնանկությունը
... սարակող «մեծ դժգոհը»

Իրական հետաքրքիր փաստ է «Երազ» («Սուսան սարերի շվաքն
... ինկել...») բանաստեղծություն բալլադը որը յուրահատուկ հա-
...ադրումն է խոհական բանաստեղծության և ժողովրդական երգի ուր
...ալոյէն սփռված են քնարական հիանալի պատկերներ այնքան
...երոց Իսահակյանի պոեզիայի ընդհանուր ոգուն

Գաւառոնի «Հայրենիք» ի 1914 թվականի բացառիկ տարեգրքում
... ... տեսել «Երեկ գարուն էր» իսկ փարիզյան «Վերածնունդ»
...ում /1919 № 17/ «Դիր կրծքիդ տրտում» բանաստեղ
...յուն ները որոնք արտաքին կառուցվածքով իրար նման են եր-
...ում խտացված մտորումներ են առաջինը բանաստեղծի անցած
...ի երկրորդը հայրենիքի տարաբախտ ճակատագրի վե
...րյալ: Երկուսում էլ զարմանալի կերպով երևում է քնարական
...ի նուրբ վարպետը

Նման մի քառյակ առաջին բանաստեղծությունից

**Երեկ գարուն էր**
**Աշուն է այսօր**
**Ե րբ դեղին դարձաք**
**Կաեաչ տերևներ**

«Վերածնունդ» ամսագրում տպագրված է «Դիր կրծքիդ տրտում» բանաստեղծության հակիրճ տարբերակը չորս քառատող իսկ Իսահակյանի արխիվում մենք հայտնաբերեցինք այդ բանաստեղծության ամբողջական ինքնագիրը վեց քառատողից որն առաջին անգամ զետեղվում է սույն հատորում ավելացված են հետևյալ երկու քառատողերը

Տես, կարմրել են
Կարմիր շառափով
Երկնի աստղերը
Մեր ծով արյունով

Անհույս է հոգիս
Գինի տուր գինի—
Քաղցր մահաբեր
Թող հոգիս քնի

«Մոռացության մատնված» երկերի թվում կան մի քանի բանաստեղծություններ որոնք մի տեսակ առանձնանում են Իսահակյանի պոեզիայի շոշափած քնարական մոտիվների հիմնական շարքից դրանցից են «Իմ ուղին» «Սերն է անկումը մեր աստվածության » /«Բանբեր գրականության և արվեստի» գիրք Բ Ս Պետերբուրգ 1904/ «Երազ» և «Գիրք Ծննդոց» /«Անահիտ», Փարիզ 1932—1933, № 3— 6/ բանաստեղծությունները «Գիրք Ծննդոցը» թերևս ավելի ճիշտ կլիներ դասել լեգենդների և բալլադների շարքը Աստվածաշնչային մոտիվներով գրված այս երկը մի հակիրճ մեկնաբանումն է տիեզերքի թոհ ու բոհի մեջ լույսի և մարդու առեղծվածի արարման Բայց չունի այն գե

[illegible] վիճատական ավարտվածությունը որն այնքան հատուկ է Իսա
[illegible] կյանքի չափածո խոսքին

Աշնան ծաղիկներ» գրքում /Վենետիկ 1922/ ևս կան մի շարք
[illegible] կել որ ունեցան միայն մեկ տպագրություն թեպետ արդեն
[illegible] ի շրջանում գրված այդ բանաստեղծությունները առանց
[illegible] կողմնապահության կարող էին ունենալ ավելի լայն շըր
[illegible] առություն

Ահա թին չարժե ասել օրինակի համար կբերեմ սոսկ մեկ «մոռաց
[illegible] ի թառյակ «Աշնան ծաղիկներ» գրքից

**Այս աշխարհը անմիտ խաղ է ու երազ**
**Խելքը չըլնի, ոչ իմանաս, ոչ էլ լաս**
**Ամեն ապրող վերքիս մեջ աղ կը մաղե**
**Ամեն մեռնող սիրտըս հետը կը թաղե**

[illegible] րատարակման պատրաստելիս իր վերջին ընտրանին («Երկեր»
[illegible] հ. բ.) Իսահակյանն այդ հատորի մեջ զետեղեց մի շարք
[illegible] ստեղծություններ իր խոսքով ասած «Հին տետրակներից»,
[illegible] [illegible] նախկինում չէին հրատարակվել ժողովածուներում Վարպետի
[illegible] [illegible] նատո երախտահիշատակ գրականագետ Արամ Ինճիկյանը
[illegible] [illegible] ական ճամբարների շուրջ 30-ամյա դեգերումներն անցած
[illegible] [illegible] [illegible] ադարձած Իսահակյանի Գևորգ եղբոր որդին բանասեր
[illegible] [illegible] [illegible] հանեսկյանը խորհրդային մամուլի տարբեր պարբերա-
[illegible] [illegible] [illegible] [illegible] հրապարակեցին իսահակյանական անտիպ շարքեր
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ակներից» «Ավետիք Իսահակյանի ձեռագրերի աշ-
[illegible] [illegible] [illegible] Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագ-
[illegible] [illegible] [illegible]

Իսահակյանի ծննդյան 110 ամյակի կապակցությամբ «Գրական թերթում» տպագրվեց անտիպների մի հավաքածու «Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից» խորագրի տակ որին հաջորդել էր տողերիս հեղինակի հոդվածը եվ բոլորովին վերջերս հրապարակվեցին հայ ազատամարտի հերոսների հիշատակին նվիրված Իսահակյանի ներբողները /«Գրական թերթ» 1989 13 հոկտեմբերի/ Ինչ խոսք նման յուրաքանչյուր հրապարակում անտարբեր չէր կարող թողնել իսահակյանասերին

Այդ հետմահու հրապարակումների շարքում /այդ շարքն ամբող ջությամբ մենք ներկայացնում ենք սույն ժողովածուում/ կան գործեր որոնք անուրանալի գրական արժեք են ներկայացնում Այդ շարքի գործերին մենք կդասեինք ‹ Նազուկ լուսնի մեղմ շիթերը ծորեցին...» /1908/ քնարական գոհարը որն ասես ծայրեծայր թաթախված «Նազուկ լուսնի» լույսերով ինչ որ կախարդական ուժով դյութում ու գրավում է ընթերցողին

**Նազուկ լուսնի մեղմ շիթերը ծորեցին**
**Հովը սիրուն ծաղկանանց մեջ թագ կացավ**
**—Ա խ լսեցի ծաղկունքն անուշ երգեցին**
**Մի ջինջ վերհուշ սրտիս միջով հեզ անցավ**

Ինչպես և ‹Ա խ այնպես մեղմագին անդորրիկ » «Այս հովը մեղմիկ » բանաստեղծությունները գրված անբեկանելի սիրով ու կարոտով հայրենի եզերքի հանդեպ որի ողբերգական պատկերը ոչ մի ակնթարթ չէր հեռանում բանաստեղծի հայացքից

**Այս հովը մեղմիկ**
**Որ քնքշաբար**
**Շոյում է գգվում**
**Մազերըգ հիմա,**
**Չի գալիս արդյոք**
**Մեր հայրենիքի**
**Արնոտ դաշտերից**

Այնուհետև «Անուշ-անուշ քրքջալով » «Հազար սիրտ ունեմ այդի մի լեզու...» ինչպես նաև «Դավիթ Բեկ» կինոնկարի համար գրված շարքից մի քանի գործեր

Այս շարքում առանձնանում է նաև «Վահան Տերյանի անմահ հիշատակին» բանաստեղծությունը որպես նշանակալից գրական իրադարձություն: Ինչպես վկայել է իր հուշերում գրականագետ Պողոս Մակինցյանի այրին դերասանուհի Սեբարը Իսահակյանը պաշտելի բանաստեղծուն մահվան լուրն առնելուն պես գրել է այդ բանաստեղծությունը և ուղարկել Պողոս Մակինցյանին ժնևից 1920 թվականի մարտի 19 ին գրած մի նամակով

Բանաստեղծությունն ինքը նամակի ձև ունի հղած ընկերոջը Վահան Տերյանին մեր առջև բացվում է 20 րդ դարի երկու խոշորագույն հայ քնարերգուների հոգևոր բարեկամության մի նոր վավերագիր՝ տալիս թաթախված մարդկային ջերմ ու անխառն զգացմունքով

**Ընկեր իմ անգին**
**Իմ վաղուց սիրած հոգի մտերիմ**
**Ո՛չ դու չես մեռել քո գիրքը ահա**
**Հրաշք երգերդ իմ կրծքի վրա**

Կարդում եմ անդուլ և մարգարտաշար
Քո սուրբ տողերից լսում անգադար
Զայնդ անուշիկ, քո պատկերդ հեղ
Առջես է կանգնում համբուրում եմ քեզ
Խորունկ կարոտով

Աբու մահարիական տրամադրությամբ է ողողված «Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան...» բանաստեղծությունը գրված նշանավոր պոեմից վեց տարի առաջ՝ 1904 թ սակայն այստեղ էլ ուրվագծված է արդեն «անապատ քաշվելու» գաղափարը որն իր հանճարեղ դրսևորումը գտավ «Աբու-Լալա Մահարիում» Ինչ խոսք այս երկը ուրույն արժեք ունի որպես մի անհրաժեշտ աստիճան պոետական գագաթի նվաճման ճանապարհին

Իսահակյանասերին չի կարող անտարբեր թողնել բանաստեղծի այնքան պաշտած «մայրական սիրո» թեմայով գրված «Մորս գերեզմանը աշնանը» բանաստեղծությունը Կառուցված Իսահակյանի չափածոյի համար փոքր ինչ անսովոր սպիտակ կամ անհանգ ոտանավորի ձևով այս երկը սակայն ծայրեծայր թաթախված է խոր փիլիսոփայական երանգ ունեցող զգացումով ահա ինչպես է անվանում մայրական սիրո մեր մեծագույն երգիչը մոր հողաթումբը «Որ ամեն նաթանկ հողն է մի բուռ հողը Ողջ հողագնդի վրա »

Մենք ներկայացնում ենք նաև մի երկ որը վառ արտահայտությունն է Իսահակյանի պոեզիայում շոշափած օտար երկրներից հայրենի տուն վերադարձի ռոմանտիկ մոտիվի Խոսքը «Տարիներ հետո դարձա հայրենիք » բանաստեղծության մասին է գրված Խորհրդային Հայաստան գալու տարին 1926 թվ

Տեղ են գտել նաև նմուշներ իսահակյանական խոհական քառյակներից ուր արտացոլված է բանաստեղծի մշտնջենական խոհն ու մտորումը տագնապն ու հոգսը մարդու հանդեպ մեր այս «հարափո

միայն ու բարդ» աշխարհի հանդեպ, մարդկային կյանքի «գալիք վայրկյանի» ու «ատոմի կազմի» հանդեպ

* * *

Եվ վերջապես գրքում մի առանձին բաժին է հատկացված Իսահակյանի գրական հարուստ արխիվից բերված մի շարք անտիպ բանաստեղծություններին Հայտնի է որ Իսահակյանի ստեղծագործական ժառանգության մեջ պատկառելի մաս են կազմում նրա անտիպ երկերը

Անտիպ գործերի մենք հանդիպում ենք Իսահակյանի մշակած ամարյա բոլոր գրական ժանրերում լինի վեպ («Ուստա Կարոյի» վերակշռող մասը) թե օրագրային գրառում նամակ թե հուշ բանաստեղծություն թե արձակ մանրապատում ու խտացում

Երևյանում գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի կողմից պատրաստվող Իսահակյանի երկերի լիակատար ակադեմիական հրատարակությունը ծրագրում է հնարավորին չափով ամբողջությամբ լույս աշխարհ հանել հայ մեծ բանաստեղծի անտիպ ժառանգությունը Սակայն դա դեռևս տարիների հարց է

Եվ ներկա հատորը տպագրության պատրաստելիս մենք հարկ համարեցինք ընթերցողին Իսահակյանի պոեզիայի անծանոթ էջերը մի քանի չափով տեղ հատկացնել նաև նրա անտիպ բանաստեղծություններին Մենք չենք հավակնում այստեղ համակողմանի ներկայացնել նրա պոեզիայի բոլոր անտիպները քանզի դա հիմնականում Իսահակյանի ակադեմիականի գործն է ուր տեղ կգտնեն նաև անտիպների տարբերակներն ու սևագրությունները, կից նյութական գիտական բացատրություններով Մեր նպատակն այն է, որ ընթերցողը գոնե սկզբնական պատկերացում ունենա Իսահակյանի անտիպ չհրատարակված ստեղծագործությունների վերաբերյալ

Գրքում ներկայացնում ենք նմուշներ տարբեր շրջաններում գրված Իսահակյանի անտիպ բանաստեղծություններից Առաջին հերթին դա վաղ պատանեկության շրջանն է (1888—1891 թթ ) որը ներկայացված է «Նվեր Րաֆֆու հիշատակին», «Երկու համբույր» և «Դաշտը շքեղ ու ոսկեդեղ » բանաստեղծություններով Սույն ժողովածուի ամենավաղ բանաստեղծությունը «Նվեր Րաֆֆու հիշատակինն» է թվագրված «1888 29 ապրիլի գյուղ Ղազարապատ» /բանաստեղծությունը գրված է հայ մեծ վիպասանի թաղմանը օրը/ Սակայն հարկ է ասել որ դա Իսահակյանի առաջին բանաստեղծությունը չէ Իսահակյանը սկսել է բանաստեղծություններ գրել հենց այն շրջանից երբ սովորել է գրել 6 7 տարեկան հասակից նրա առաջին գրի հետ ծնվել է և նրա առաջին բանաստեղծությունը Իհարկե դրանք եղել են զուտ մանկական թոթովանքներ, բայց տարեցտարի ավելի ամրանում է նրա ձեռքը 10—12 տարեկան հասակում նա փորձ է արել անգամ չափածո դրամա գրելու նվիրված իրենց հարևան մի գեղեցկուհի երիտասարդ հարսի այնուհետև նրա մեջ սկսել են կազմավորվել ‹ Թիթեռ մտքեր», «Mozaik «Կոկոններ» «Երազ հուշեր» բանաստեղծական շարքերը իսկ 15 տարեկան հասակից «Երգեր ու վերքեր» նշանավոր շարքը

Այնպես որ Րաֆֆու հիշատակին ուղղված բանաստեղծության հեղինակը սկսնակ չէր այլ բավականին թվով բանաստեղծություններ ստեղծած պատանի բանաստեղծ «Նվեր Րաֆֆու հիշատակին» և «Երկու համբույր» բանաստեղծությունները լավ հայտնի էին Իսահակյանի թե ալեքսանդրապոլյան դպրոցի թե էջմիածինյան ճեմարանի սաներին և ուսուցիչներին

Հովհաննես Հովհաննիսյանի մասին իր հուշերում Իսահակյանը պատմում է այն մասին թե ինչպես է հարգելի ուսուցչին ծանոթացրել իր պոետական առաջին փորձերի հետ «Մի օր 1890 թվի գարնանը մեզ ավանդած դասից անմիջապես հետո ճեմարանի մութ միջանցքում սրտի ուժգին բաբախումով մոտեցա նրան և տվի նոր գրած ոտանավորը և խնդրեցի որ կարդա

Խնամքով գրված թղթի կտորը ոտանավորս առավ և ձեռքիցս բռնելով ասաց «Գնանք պարտեզ» Գնացինք ճեմարանի պարտեզի յն ծառուղին որ «բանաստեղծ» աշակերտներիս մտորումների և երազանքների վայրն էր... Ոտանավորիս խորագիրն էր Երկու համբույր» Դասընկերներս հավանել էին որով ես միտ էի առել այն ցույց տալու վարպետիս Երկու համբույր Առաջին համբույրը որպես թե իմ սիրած աղջիկն է տալիս ինձ վարդագույն բոցավառ շրթներով իսկ երկրորդ համբույրը նրան է տալիս դժգույն, սառը շրթներով Կարդաց և իրեն ասաց. «Սեր և մահ բանաստեղծության մշտական նյութը» Բայց դարձավ դեպի ինձ «Իհարկե այս գրածդ երևակայություն Վաղահաս Գրիր քո զգացած բաների մասին Բավական նուն ես գրել վարժ ես Վանկեր հանգեր տեղին են նայն չեն... / V 46/

Այնուհետև սերկայացվածքն են բանաստեղծություններ գրված դա յտվերջին Գերմանիայում Օդեսայում. Թիֆլիսում և Ալեքսանդրա- յրում Այս գործերից կո զեինք հիշատակել 1893 թ գրված «Ա խ նարալս ա խ ուր գնաց...» բանաստեղծությունը որը շատ հարազատ Այագյազի մանկներ» ապագա շարքին

**Յարիս ծամերն ծովի նման**
**Ային ծալին կուտային**
**Էնոր աչերն ծով ծըվան**
**Վերք կուտային արևին**
**Էնոր ձենը քաղցր ու անուշ**
**Բլբուլի հետ կկանչեր**

Ի վեհությունը» /1894/ Իսահակյանի խոհական պոեզ ոյլ ն իրգերից մեկը «Արևն հանգավ — մութը մթին » /189 յ յական վարպետությամբ կերտված մտորումը բնության հավեր

ժականության և մարդկային կյանքի անցողիկության մասին /մի թեմա որ հետագա տարիներին բազմիցս արծարծվեց նրա ստեղծագործություններում/ և դրա կողքին «Արևի տակ ծովի ափին» մարդկային ոգու ամենազորության գիտակցությամբ հագեցված մի ստեղծագործություն

**Ես զգում եմ Ես եմ ոգին**
**Իմ հոգիս է խորն, անհուն**
**Իմ հոգումե է բնությունը՝**
**Եվ կամենում, և զգում**
**Ես եմ ոգին մեծ բնության,**
**Ես եմ խորհում ու զգում**

Առանձին խումբ են կազմում անտիպ բանաստեղծությունները, որոնք գրված են 1900—1911 թթ մինչև Իսահակյանի տարագրության շրջանը Հայտնի է որ այդ տասնամյակը Իսահակյանի պոեզիայի կիզակետն է Հենց այս շրջանում է ստեղծվել նրա պոեզիայի գլուխգործոցը «Աբու Լալա Մահարին» Սա Իսահակյանի կյանքի համեմատաբար երջանիկ տասնամյակն էր երբ ինքը մեծավ մասամբ գտնվում էր Կովկասում այսինքն տանը երբ լույս աշխարհ եկան նրա մի շարք գրքերը, երբ Թիֆլիսում գործում էր «Վերնատունը», երբ ջահել էին և ինքը և իր ընկերները երբ անընդհատ ճանապարհորդում էր վայելում կյանքը

Դա գրելու սիրահարվելու շրջանն էր մի շրջան որն այլևս նրա կյանքում չպետք է կրկնվեր

Այս շրջանի գործերից, թերևս արժե առանձնացնել «Անգութ աղջիկ թշնամու պես...» սիրային խոստովանանքը «Դու աղբյուրի պես կարկաչում էիր » ինքնաբնութագրական մտորումը Մոսկվա-

[illegible] 1904 թվականի մայիսին գրված խոհափիլիսոփայական բնույթի [illegible]ադրկանց ժպիտին դու մի հավատա » բանաստեղծությունը [illegible] որոշակի չափով զգացվում են «Աբու Լալա Մահարի» ապագա պոեմի առաջնային ամպրոպները և «Վիշտս ծանր է սրտիս վերքը [illegible]ադարման...» հայրենասիրության անբեկանելի շնչով գրված բա[illegible]ստեղծությունը հիրավի լավագույններից մեկը նրա հայրենա[illegible]իրական պոեզիայի

Ներկայացվող հավաքածուն, ընդհանրապես իր մեջ պարփակում [illegible] մի շարք անբացատրելի գաղտնիքներ խոսքն առաջին հերթին այնպիսի գործերի մասին է որոնք ըստ պոետական [illegible]րվեստի բոլոր օրինաչափությունների չպետք է անտիպ մնացած լինեին Հիրավի միայն Իսահակյանի նման հանճարը կարող [illegible]էր դրանք անտեսել, ուրիշ մի այլ բանաստեղծ անգամ [illegible]ծանուն հազիվ թե նման գործերը գրական ասպարեզ հանած լիներ

Նման գործերի թվին կարելի է դասել համեմատաբար ավելի [illegible] շրջանում գրված նրա մի շարք անտիպ երկերը «Ժեռուտ [illegible]այերից այս ով է գալիս » «Իմ տխուր սրտում գիշեր ու [illegible]երեկ.. » «Ես լուռ գիշերին անհույս լացեցի » «Արդյոք եղել [illegible]ես ջահել » բանաստեղծությունները որոնցից յուրաքանչյուրի [illegible]ետ հանդիպումը ուրախությամբ կպարուրի ընթերցողին Կան [illegible]նաև այնպիսի գործեր որոնք նշանակալից տեղ կգրավեն բա[illegible]նաստեղծի քաղաքացիական պոեզիայի անդաստանում օրինակ [illegible]Ասա մեզ ե վրոպ ուր ես շտապում » բանաստեղծությունը որը գրված է 1921 թվ Վենետիկում, այն շրջանում երբ [illegible]Եուռոպայի պետությունները, մասնավորապես Ֆրանսիան թուր[illegible]քերին հանձնեցին պատմական Հայաստանի վերջին հողակտորը [illegible]

Աա մեզ Եվրոպ ուր ես շտապում
Ձեռներդ ներկած հայի արյունով
Դու հոշոտեցիր Սուրբ Հայաստաեը,
Այժմ ուր ես փախչում արեոտ ձեռեերով

Քո խիղճը երբեք չխայթեց Եվրոպ
Փշրելով գանգեր բյուրավոր հայի
Անառակ Եվրոպ, բարբարոս Եվրոպ
Անեծք սերընդիդ՝ անեծք դարերի

Դեպի ծովերն ես շտապում հիմա,
Որպեսզի լվաս ձեռներդ արնոտ.
Ծովերը՝ փոքր են օվկիանը՝ չնչին,
Որ մաքրեն խիղճդ խիղճդ արյունոտ

Հանցանքդ մեծ է— և ավելի շուտ
Ծովերն ու օվկիան արյուն կդառնան
Ձեռներիդ արնով, հայի արնով
Անեծք քեզ Եվրոպ անեծք հավիտյան

Նման բնույթի բանաստեղծության մենք չենք հանդիպում Իսա հակյանի երկերում գուցե և հենց այս ցասումնալից անեծք-ուղերձը բանաստեղծը գտել է որ չարժե հրապարակել բայց պատմությունը ցույց է տալիս որ աշխարհում քիչ բան է փոխվել հայ ժողովրդի հանդեպ որ այսօր էլ ինչ-որ մի հանգույցում նա միայնակ է կանգնած իրեն սպառնացող վտանգի առջև եվ եթե ճակատագիր է ուրեմն թող գոնե բանաստեղծն իր խոսքը ասի որը տվյալ դեպքում հիմնավորված հանդիմանանք է ու արդարացի նզովք Այս տեսանկյունից, մեզ թվում է, որ մենք ինչ ինչ էթիկական

տալիս խախտած չենք լինի այն հրապարակելով Չէ որ
[illegible]յսին հաշվով պատմական հանցանքների համար չկա վա-
[illegible]ության ժամկետ

Այլվեստի հրաշալիք է «Ո վ է իջնում նուրբ քողերով » բանաս-
[illegible]ղծությունը որն ունի ստեղծագործական հետաքրքիր պատմու-
[illegible]յուն: Երկի հիմքը Իսահակյանի «Իմ փերին» /Շիրակի ավանդավեպ/
[illegible]այանի բանաստեղծությունն է որ գրվել է 1892 թվ հունիսի 6 ին
[illegible]ագինայում և ունեցել է բազմաթիվ հրապարակումներ Եվ ահա
[illegible]սահակյանը 1920-ական թվականների սկզբներին Վենետիկում
[illegible]Աշնան ծաղիկներ» ժողովածուն կազմելիս հարկ է համարում մեկ
[illegible]անգամ ևս անդրադառնալ «Իմ փերին» բանաստեղծությանը Որո-
[illegible]ակի մշակումից հետո Իսահակյանը բանաստեղծության հիմնական
[illegible]ւքստին զուգահեռ փաստորեն ստեղծում է մի նոր տարբերակ
[illegible]ամարելով որոշ կրճատումներ հանելով բանաստեղծության սկզբ
[illegible]ատարակը և որոշ տողեր թեթևացնելով բալլադային տարրերը
[illegible]այդ ընթացքում ասես ձևավորվում է մի նոր բանաստեղծություն
[illegible]լի եթերային ու մելոդիկ և կարծես վերանում է բանաստեղծու-
[illegible]ն արտաքուստ պարուրող կեղևը և բացահայտվում է նրա ոսկյա
[illegible]յուկը: Նման մշակումը զուտ ստեղծագործական աշխատանք է
[illegible]կական պոեզիայի արարում ու թեպետ նոր տարբերակը նա չի
[illegible]ում «Աշնան ծաղիկներ» ժողովածուում թողնելով այնտեղ «Իմ
[illegible]» սակայն պոետական այդ նորաստեղծ գլուխգործոցը մենք
[illegible]այման կուզենայինք ներկայացնել ընթերցողին որպես մեծ բա
[illegible]ստեղծի սիրային պոեզիայի լավագույն քերթվածներից մեկը

Եթե «Իմ փերին» ժողովրդական ավանդավեպ է կամ բալլադ որը
[illegible]ել Շիրակի բալլադներից» ենթախորագրով առաջին անգամ
[illegible]տպագրվեց «Արաքս» գրական ալմանախում /1894—1895 թթ./
[illegible]ւրի հերոսուհին փերի է /ջրահարս/ ապա նոր մշակումը զուտ
[illegible]ալլադային բանաստեղծություն է որի հերոսուհին իրական կին է
[illegible]ստեղծի վերստեղծած գողտրիկ պատկերը թե ինչպես գիշերա

ժամին մի գեղեցկուհի գետն է մտնում վերածվել էր, ասես, մի հրաշագործ նկարչի վրձնով ստեղծված կատարյալ քնարական բնապատկերի իրականացված ռոմանտիկ արվեստի անթերի ձևով, մի ձև, որի ներքին կառուցվածքը իր հերթին մի դյութիչ մեղեդի է, անգերազանցելի իր հնչեղությամբ Այսպիսով մեկ պոետական գլուխգործոցի մեջ շաղախվել էին արվեստի երեք հիմնական ճյուղերը բանաստեղծությունը նկարչությունն ու երաժշտությունը

Նա ով կկարդա «Ո՞վ է իջնում նուրբ քողերով...» բանաստեղծությունը չի կարող չզգալ Իսահակյանի պոեզիայի ուժը նրա իրոք որ «երկնային» հնարավորությունները

Իսահակյանի ստեղծագործության ուշ շրջանում անտիպները ավելի նվազում են հազվագյուտ են դառնում և դա հասկանալի է քանի որ Վարպետի մոտ արդեն հազիվ թե գտնվեին այնպիսի բանաստեղծություններ որ ինքը հարկ չհամարեր դրանք տպագրել, իսկ եթե կան այդպիսիները ապա դրանք անտիպ են մնացել ուրիշ պատճառներով Այդ շրջանում իր 80 ամյակի նախօրեին Իսահակյանն իր անտիպ բանաստեղծություններից մի շարք հրատարակեց նախ «Սովետական գրականություն և արվեստում» /1955 № 1 և № 9/ ապա և «Գրական թերթում» /1955 8 ապրիլի 21 և 29 հոկտեմբերի/ այս հրապարակումների մի մասը Իսահակյանը վերնագրել էր «Հին տետրակներից» այսինքն վաղուց գրված գործերից, բայց դրանց շարքում կային և այնպիսիք որ ստեղծվել էին 1950 ական թվականներին Իհարկե բանաստեղծի ներկայացրած անտիպների շարքը կարող էր շատ ավելի ընդարձակ լինել սակայն այստեղ ևս Իսահակյանը զուսպ էր դրանք սոսկ նմուշներ էին իր բազում անտիպներից Ինչ խոսք այդ երկերը մեծ սիրով ընդունվեցին ընթերցող հասարակայնության կողմից Մենք ևս մեր հավաքա-

ս ս մ ներկայացնում ենք անտիպ նմուշներ բանաստեղծի կյանքի վերջին տասնամյակում գրված երկերից Այդ շարքից կառանձնացնելինք «Հոգնած քայլերով մտել եմ անտառ » և «Կուզեի լիներ կյանքը հավիտյան » բանաստեղծությունները որոնք գրված են ստեղծագործական ճամփի մայրամուտին և խորիմաստ արձագանքն են կյանքի և մահվան փիլիսոփայական վեճի, որն իր ստեղծագործություններում տասնամյակներ շարունակ տարել է Իսահակյանը

**Հալվել է ներկան չկա ժամանակ**
**Չեմ ղգում ես ինձ ես անգո, անէակ**
**Չկա ժամանակ**

Բայց ահա հաջորդ երկում նա մարդկանց պարզում է իր լուսավոր միտքը

**Կուզեի երգել անվերջ**
**Անվերջ խորհել, հավերժ երազել**
**Կուզեի... ախ հավերժ ապրել կուզեի**

Ավարտում է գիրքը մի բանաստեղծություն որը հանդիսացավ բանաստեղծի վերջին պատգամը ուղղված իր ժողովրդին, առաջին

տարբերակը գրված է 1949 թվ վերջին մշակումը 1956 թվ Խոսքը Սևանի կործանմանն ուղղված «Մեր սպանված դիցուհին» բանաս տեղծության մասին է

Հայտնի է որ Իսահակյանը առաջինն է ձայնը բարձրացրել Սևանի չորացման հակահայկական հանցագործ ծրագրի դեմ համարելով այն ստալինյան հայահալած քաղաքականության շղթայի օղակներից մեկը գուցե և ամենաստորը ամենախոցելին երբ հաշվեհարդար էր տեսնվում Հայաստանի բնության հետ հայոց երկրի ապագայի հետ

Այո բանաստեղծը հեռուն էր տեսնում երբ ասում էր «Առանց Սևան չկա Հայաստան» «Սևանը Հայաստանի աչքն է ջինջ լուսա վոր ուշի ուշով նայում է նա իր հողերին և որտեղ պետքն է իսկույն իր արցունքն /այսինքն մի կտոր ամպ/ ուղարկում» Բանաստեղծը գերբնական սեր ուներ Սևանի հանդեպ երիտասարդության տարի ներից Սևանն ու Սևանա կղզին իր վանքերով նրա պաշտամունքի առարկան էին ստեղծագործական ներշնչման հավիտյան ակունքը Օտարության մեջ նա երազում էր Սևանը որպես Հայաստանի խոր հըրդանիշ Ամեն անգամ Սևան գալիս ծունկի էր իջնում լճի առջև գգվում նրա ջրերին որպես հավերժ սիրահար

Այո վերադառնալով Խորհրդային Հայաստան և իմանալով Սևա նին սպառնացող դիվային ծրագրի մասին բանաստեղծն առաջինը իր բողոքի ու տագնապի ձայնը բարձրացրեց բոլոր առումներով հակագիտական և հակամարդկային այդ ծրագրի դեմ Բայց ով կան սար բանաստեղծի ձայնին ստալինյան մղձավանջի տարիներին Ով որ դեմ էր այսպես կոչված «Սևանի պրոբլեմին» նա դեմ էր խորհրդային կարգերին այդպիսին էր այդ օրերի կարգախոսը Սե վանը որ դիմացել էր հազարամյակների փորձությունների և երկ րաշարժերի և հրաբխային ժայթքումների այժմ պիտի սպանվեր

[illegible] առաջ հանրային շահերի Այդ տխրահռչակ ժամանակներում ընդ-
[illegible] պատպես մի մտածողություն էր տիրապետում իսկ իրականում մի
վտանգավոր վերևներում նախագծած գաղափարախոսություն
[illegible]երան շատ հակահայկական, ինչքան դեմ հայկականին այնքան
[illegible] ստարիմ ռեժիմին Ահա այդ մթնոլորտում էր գրել Իսահակյանը
[illegible] սպանված դիցուհին» բանաստեղծությունը

[illegible] գրել էր այդ բանաստեղծությունը երբ իր ժողովրդի երդվյալ
[illegible]ամին դեռ կենդանի էր, գրել էր ու կարդացել Հայաստանի
[illegible]կավարներին իր բազում գրչընկերներին Նա փորձել էր դրանով
[illegible]ն հարժել հասարակական միտքը Սևանի կործանման վերաբերյալ,
[illegible]պատնացնել ժողովրդին հանել տասնամյակներ տևող լեթարգիկ
[illegible]ից Չնայած լավ գիտեր որ Սևանի փրկությունը կարող էր գալ
[illegible]այն Ստալինի և, առավել ևս, ստալինիզմի կործանումով Բայց
[illegible]ից հրաժարվելու իրավունք չուներ իրավունք չուներ Սևանը
[illegible]ոսկ թողնելու Եվ ամեն ամառ նա որպես օրենք գնում էր հան-
[illegible]ր առանալու Սևանա կղզի ապրում կղզու Գրողների տանը երկար ու
[illegible]կար նայում նրա ջրերին և եթե կարելի է այդպես ասել իր իսկ
[illegible]ցունքով ձգտում կենդանացնել սպանվող լիճը 1953 թ մարտին
[illegible]ր կրեմլյան հրեշը հրաժեշտ տվեց կյանքին Վարպետը իր տնեցի
[illegible]ներին ասաց «Հիմա հայ ժողովուրդը կապրի ես էլ հանգիստ կարող
[illegible]ն աշխարհ գնալ, միայն պետք է Սևանը փրկել»

Երբ ավտոմեքենայով անցնում էր Սևանհէկի կողքով, խաղաղա-
[illegible]ր Իսահակյանը ասում էր «Ա խ մի փոքրիկ ատոմային ռումբ լիներ
[illegible]ի այս շենքի վրա» Այո նա ատում էր Սևանհէկը ատում էր և այն
[illegible]ազգի «վայ գիտնականներին» որոնք կեղծելով գիտական բոլոր
[illegible]քունքները և անձնական շահերից ելնելով դավաճանելով հա-
[illegible]յալին շահերը եղան Սևանի շինծու «պրոբլեմի» հեղինակները

Դա առաջին հերթին կիսագրագետ ջրաշինարար Սուքիաս Մանասե
րյանն էր որին անձամբ Խսահակյանն ասել էր «Իրականացրիր անվանդ իմաստը, սուքիաս թուրքերեն նշանակում է ջուր կտրող, բայց լավ իմացիր որ դեռևս Հին եգիպտոսում ամենաեղկելի մարդիկ համարվել են ջրի ճամփան կտրողները և դու կմնաս հայ ժողովրդի հիշողության մեջ որպես թուրք Սու քիաս» Հաջորդի Իվան Եղիազարովի վերաբերյալ որին Սևանի արյունը բերեց ակադեմիկոսի մեծահամբավ տիտղոսը և որին բացի իր պատկառելի մորուքից ոչինչ չէր կապում ճշմարիտ գիտության հետ Խսահակյանն ասել էր «Ի՜նչ հաճույքով ես կբռնեի նրա այծի մորուքից և գավազանս գլխին կիջեցնեի» Գրող Հրաչյա Քոչարը չկարողանալով թաքցնել հըրճվանքը այդ խոսքերը ասել էր ակադեմիկոսի երեսին Մի որոշ ժամանակ պնց վերջինս հանդիպել էր Խսահակյանին և հարցրել արդյո՞ք ճիշտ է իր լսածը բանաստեղծը հաստատել էր ավելացնելով «Ափսոս որ տարիքս թույլ չի տալիս այդ անել բայց միևնույն է մեկն անելու է»

Իհարկե թվարկածս անունները հիշատակեցի ոչ թե նրա համար որ այդ մարդիկ եզակի էին ռեժիմը իր տիրոջ կամքի կատարողներին կգտներ ուզածդ պահին, այլ հիշատակեցի որ մեր ժողովուրդը իմանա թե այդպիսի հայեր էլ են պատահում պատմության մեջ և հիմա էլ կան հեռու չգնանք Երևանի կողքին ատոմակայանի կառուցման փաստը որի առաջին նախաձեռնողը եղավ նույնպես մեր հայրենակիցը և նրան ևս, իր այդ «ծառայության» համար շնորհեցին ակադեմիկոսի տիտղոսը Թող իմանա ժողովուրդը չմոռանա ւ ապագայում զգուշանա նմաններից

1957 թվի ամանորին բանաստեղծի կյանքի վերջին ամանորին նրա տուն այցելության եկած այն ժամանակվա բարձրաստիճան

լ կ սվլսրները Իսահակյանին ուրախացնելու թե մխիթարելու համար
ասցին որ մի ծրագիր կա որի իրականացումը թերևս կփրկի Սևանը
լ սքը Արփա գետի ջրերի օգտագործման մասին էր/ միայն թե շատ
ւ ան ծրագիր է իսկ միջոցներ չկան Իսահակյանը մանկան պես
ւ ուրվեց պայծառացավ «Ուրեմն ելքը կա իսկ փող փող ես
կ ւ նեմ միայն թե թույլ տվեք կոչ անեմ աշխարհի համայն հայու-
ւ յան, և ձեր պահանջած գումարը ես շուտով կհավաքեմ» Սակայն
ւ ամանակներին նման ուղերձներ հղելը ընդունված չէր և ոչ մի
ի սար չէր կարող լինել Սփյուռքից եկող օգնության մասին

Այսօր երբ գրում եմ այս տողերը երբ ավարտված է համարվում Արփա-Սևան ջրատարը միևնույն է Սևանի փրկության հարցն օրա
ւ գից հանված չէ Այնպես ինչպես մենք պահանջում ենք Արցախի
ւ կ ւ նյան պատմական հողերի փրկությունը այնպես էլ ողջ ազգով
ի ւ ւ պահանջենք Սևանի փրկությունը հակառակ դեպքում կիրա
ւ ատ ա այն դժոխային պատկերը որ կանխատեսել էր բանաստեղ
ւ ղեւս 40 տարի առաջ գրած իր «Մեր սպանված դիցուհին» ան ստեղծությամբ

Այ բանաստեղծությանն արձագանքեց Իսահակյանի կյանքի ւ րին բաղձանքը «Ապրեի Անին տեսնեի մեռնեի Սևանը չորացած ան նեի»

* * *

Այսպիսի Սերոբի հիշատակին և Սևանի կործանմանն ուղղված ւ ան ստեղծությունների միջև ընկած է կես դարից ավելի ժամանա-կ ան ված սակայն այդ երկու բանաստեղծություններն էլ մի

ակունքի ծնունդ են որի անունն է հայրենասիրություն եվ այդ ակունքը մենք համոզված ենք, երբեք չի չորանա որովհետև այն գալիս է հայ ժողովրդի սրտից Իսկ հայ ժողովուրդը անմահ է Ահա այս ճշմարտությունն է գալիս հաստատում ներկա ժողովածուն

ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ

«ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ»
/1896 - 1913/

## ԱՎԵՏԻՔ ՄԱԼՈՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

I

Էս ինչ դարդ էր չոր քամու պես
Սիրտըս չորցուց քար դառավ
Քար կը քամեմ չոր աչերես —
Էս ինչ դարդ էր ինձ հասավ

Ա խ ընկեր ջան քեզ ո՞ւր գտնեմ
Ջիվան ջահել ընկեր ջան
Որ փշրանքդ ժողվեմ պահեմ
Սրտիս խորքում հոգի ջան

Ո՞ւր գնացիր երկինք թռա՞ր
Ախըր չունիս գերեզման —
Որ սուրբ հողդ գրկեմ պագեմ
Լամ սրտանց լամ հոգի ջան

Ա խ դուն ուր ես ձեն տուր ինձի
Գամ քու քովըդ ընկեր ջան
Սուրբ անունիդ հոգուդ մեռնիմ
Ազիզ անուշ ընկեր ջան

II

Էն արծիվն էր թըռավ գընաց
Մեր վըրայով մեր միջով —
Ա խ էն մեր սիրտ մեր ազիզն էր
Գընաց սարով սար դարդով

Էնոր դարդը ախ մեր դարդն էր
— Ու մեր սրտից էն գընաց
Էնոր դարդը խեղճի դարդն էր
— Խեղճի սրտից էն գընաց

Ու գնացիր ազիզ ընկեր
Մենակ, մենակ գընացիր

Հեռու տեղեր արնոտ տեղեր
Վերքը սըրտիդ հոգի ջան
Ընկար մենակ ու անընկեր,
Դուման դաշտեր Ավո ջան

Ընկերներըդ ախ քեզ մոռցան
Կյանքի ճամբով գընացին
Քու սուրբ սրտի սերը մոռցան,
Գերեզմանըդ կորուցին

1896

* * *

Լուռ գիշերին մտքիս դիմաց
Շատ ստվերներ ժողովվան —
Ընկերներս մեռած, կորած
Հոգուս խորքով անց կացան

Նրանց աչքերն բոց ու վրեժ
Սրտիս խորքը նայեցին
Սիրտս բաց էր խոր վերքի պես —
Նրանք այնտեղ սուզվեցին

Անհավասար գոռ կռվի մեջ
Ընկաք իմ վեհ ընկերներ
Ա խ ձեր շիրիմն իմ սրտումն է
Իմ վեհ իմ սուրբ ընկերներ

1898 թ մարտի 21
Ալեքսանդրապոլ

* * *

Ազիզ մերիկ քեզի թողի
Դարդ ունեի դուրս ընկա
Սուրբ վաթանիս ժողովրդի
Ձենը կանչեց դուրս ընկա

Դուման սարեր դարդլու սրտեր
Դարդ ու դուման մեր վաթան
Ա խ գլուխս քու ուղուրին
Ա խ մեր անո՛ւշ մէր վաթան

Է յ Սիս Մասիս ձեզի մեռնիմ
Իմ Սիս-Մասիս ջան տղերք
Դուք տասի չափ հազարի չափ
Ձեզի մեռնիմ ջան տղերք

Առուծի պես առուն կուգա
Բաշը տված քարերին
Առուծի պես հայ ախպրտանք
Վուի վրա տանք դուշմընին

Մեկ սիրտ դառնանք բյուր սուր դառնանք
Ջարդենք փշրենք դուշմընին
Ջան տղերք ջան զարկենք-զարկվինք
Մեր վաթանի ուղուրին

1898թ 12 հոկտեմբերի
Օդեսա

## ՍԵՐՈԲԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ոսկե գագաթը բանձրիկ Նեմրութա
Վա՛ռ վառ կըշողա մեջ Վանա ծովուն
Ազիզ անունդ, քաջ Սերոբ փաշա
Ալմաստով փելուն մեջ մեր սրտերուն
Թող արարքներուդ արժանի գովքն էլ
Խղճուկ գուսանիս անզարդ երգերում
Ջինջ աղբյուրի պես գլա գլգլա

Նեմրութա սարը հազար ակն ունի
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթա
Մենակ Սերոբի աղբյուրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա—
Ազատ օրերի դալար օրերի
Ծարավ ժողովրդի սրտի մեջ կերթա

Նեմրութա սարը քառսուն ժեռ ունի
Քառսունի գլխուն մարմար քարափ կա —
Էն քարփի վրա արծիվն է նստեր—
Ժեռերի արքան իր գահի վրա
Ու կտուցի մեջ մի սիրտ է բռներ
Եվ զիլ կկանչե չորս դին ձեն կուտա
Սարերի արքան ամպերի վրա
— «Էյ ականջ արեք հովեր ու հավքեր
Կտրիճ Սերոբի սիրտն է կըտցիս մեջ —
Սիրտը որ ձեզնեն բանձրանց կթռներ

Է յ ապանջ արեք սարեր ու ձորեր
Սերոբ փաշայի սիրտն է կըտցիս մեջ
Սիրտը որ ձեզնեն մեծ էր ու խորն էր
Սերոբ Աղբյուրը ազատ Նեմրութից
Աղբյուրի նման վազեց լեռն ի վայր
Ու հեղեղ դառավ ահ ու մահ սփռեց
Զարկեց ու ջարդեց հայու դուշմնին
Քուրդին ու թուրքին հարյուր ու հազար
Ա խ քուրդն ու թուրքը վախկոտ են նամարդ
Սիրտ չունին կալնել ճակատ առ ճակատ
Փաշա փատիշահ աղվես են նամարդ,
Սիրտ չունին կռվել ճակատ առ ճակատ
Յոթ տարի բոլոր ետևեդ ընկան
Շվաքդ տեսան յոթը ծակ մտան
Վերջն հազար դավով հազար խաղերով
Ընկար քաջ Սերոբ... Ու երբ դուն ընկար
Ես եկա հասա սիրտդ հանեցի
Որ գեշ դուշմնին փայ-բաժին չըլնի
Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում լույս կուտա
Ու քարերում սև հողերում
Թեկուզ թաղեմ չի մարի —
Սուրբ վաթանի ազգի սիրուն
Չուր հավիտյան չի մարի
Կտրիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պես
Նեմրութ սարում բոց կուտա
Սարի սառուց ձյուների մեջ
Թեկուզ թաղեմ չի սառի

Ժողովրդի ազատ օրվա
Պատվի սիրուն չի սառի
Չուր հավիտյան չի սառի»

Նեմրութա սարը հազար ակն ունի
Հազարն էլ Մըշու դաշտն ի վայր կերթա
Մենակ Աղբյուրի աղբյուրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մեջ կերթա
Ազատ օրերի դալար օրերի
Ծարավ վաթանի սրտի մեջ կերթա

1899

## ԳՈՒՐԳԵՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գըւգըլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերեն
Ծիծեռները ծիվ ծիվ եկան
Գարնան գալը երգելեն

Գարուն չկա հայի համար
Ծաղիկ ծիծեռ մեզ պետք չեն
Գերեզմանս հողին հավսար
Թող փուշ բուսնի իմ վրեն

Գնա ծիծեռ թող ինձ մենակ
Վերքը սրտիս հողի տակ

Բայց երբ տեսնես թշնամու դեմ
Հայ ժողովուրդ սարի պես
Ձենքը ձեռին հպարտ կանգնած
Հայեր լեռներ իրար պես —

Ա խ այն օրը արի ծըվա
Գարնան գալը նոր կանչե —
Հայոց գարնան, որ բյուր-բարև
Սիրտս խորեն ղողանջե

1900

* * *

Հազար բարով հպարտ սարեր
Թև եմ առեր ձեզ կուգամ
Արծիվների ձենն եմ լսեր
Արծիվներին դեմ կուգամ

Իմ հայրենիք կապուտ սարեր
Թշնամու շարք ձեր բոլոր
Դաշտ անապատ արնոտ գետեր
Արազը խոր ու ոլոր

Հազար ձենով հազար սրտով
Արծիվների հետ կուգամ,
Հողիդ մեռնիմ հազար սրտով
Իմ հայրենի՛ք մերիկ ջան

Բարով ձեզի դար ու դուրան
Բանձրիկ սարեր ու քարեր
Հազա՛ր բարով հով ու դուման
Ծովակ ծմակ ու ձորեր

1900

* * *

Ինձ տեղ տվեք Սիփան սարեր
Բռնավորի լուծն եմ թողեր
Ազատությունս արնով գնած
Պահեք ձեր ծոցն ազատ սարեր

Մասսից ազատ Մասսից բարձր ես
Աշխարհից թանկ ազատություն
Կյանքի սերն ես կյանքի տերն ես
Արծըվի պես բարձր ես թռնում

Ազատ օդում ազատ հովտում
Արծըվի պես ազատ կըլնեմ
Բաց թևերս թափ ծափ տալով
Ախպրտանցս քով կըթռնեմ

Հայ ախպրտանք, ձեր ժանգ շղթան
Իմ երկաթե սուր կտուցով
Ես կըկըտցեմ կըքըծըծեմ
Մեկտեղ կերգենք ազատ կրծքով

Ազատություն ազատություն
Կյանքի արև ազատություն
Մասսից ազատ արծըվից ազատ
Աշխարհի տեր ազատություն

Արծըվի պես բարձր ես թռնում
Մասսից բարձր ազատություն
Դու կյանքից վեր դու լույս-արև
Ազատությո՛ւն ազատությո՛ւն

1900

* * *

Սալնո ձորերում կըռվի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սըրտին —
Վերքը վարդի պես բացված կարմըրուն
Ու ձեռքն է գըցել կոտրած հրացանին

Արնոտ դաշտերում ծըղրիդն է ծըղրում
Հայդուկն է ընկել մահվան խոր քընով
Հայդուկը հոգում երազ է տեսնում,—
Հայրենի աշխարհն ազատ ապահով

Տեսնում է արտում հովն է շընկշընկում
Փայլուն գերանդին զընգում է անուշ
Ու փոցխ են քաշում սիրուն աղջըկունք
Հայդուկի վըրա երգելով անուշ

Սալնո ձորերում ամպեր են անցնում
Հայդուկի վըրա արծիվն է գալիս
Ա խ սև աչերը արծիվն է հանում
Հայդուկի վըրա ամպերն են լալիս

1900 թ սեպտեմբերի 19
Քյուսնախտ

* * *

Երբ ես մեծացա տղամարդ դարձա
Ու սիրտս զընգաց սիրով վառ վառման
Ուզեցա սիրել աղջիկ սևաչյա
Բայց դու գիրկս ընկար անգին հրացան

Ու բոց կարոտով գրկեցի ես քեզ
Սըղմեցի կրծքիս անգին հրացան
Իմ սրտի տերը — հարսնացուս դարձար
Աննենգ ընկերս իմ սեր հրացան

Երբ թշնամու դեմ կռիվ եմ վազում
Դու կրծքիս սըղմած անբաժան հետս ես
Դու ես միշտ սրտիս մրրիկը հայտնում
Քեզնով եմ փնչում որոտում վրեժ

Եվ երբ գազըզած գլուխս դնեմ
Կըռվի դաշտերում կուզեմ որ փորեն
Քեզնով ինձ մի փոս կըռվի ընկերներ
Քեզ հետս թաղեն իմ հարս իմ ընկեր

1900

* * *

Է յ ջան հայրենիք ինչքան սիրուն ես
Սարերըդ կորած երկնի մովի մեջ
Ջրերըդ անուշ, հովերըդ անո՛ւշ
Մենակ բալեքըդ արուն ծովի մեջ

Քու հողին մեռնեմ անգին հայրենիք
Ա խ քիչ է թե որ մի կյանքով մեռնեմ
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք
Հազարն էլ սըրտանց քեզ մատաղ անեմ

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ
Բալեքիդ մատաղ մատաղ քու սիրուն
Մենակ մի կյանքը թող ինձի պահեմ —
Է ն էլ քու փառքի գովքը երգելուն —

Որ արտուտի պես վեր ու վեր ճախրեմ
Նոր օրվա ծեգիդ ազիզ հայրենիք
Ու անուշ երգեմ բարձր ու զիլ գովեմ
Կանաչ արևըդ ազատ հայրենիք

1900

Ժընև

* * *

Վեհ ազատության սերը չէ մենակ
Որ ինձ մղում է կըռվի հանդես —
Հրեղեն ոխն է վրեժն անհատակ
Որ սիրտս է այրում ժահր թույների պես

Ա՛խ թե լինեի կայծակ հրաբուխ
Մռայլ Տավրոսի ճակատից վիժած
Պիտի փշրեի շանթեի պիտի
Թշնամու կուրծքը չար արյունախանձ

Բայց հոգուս խորքում օձեր են զեռում —
Վրեժի իժեր — սև կծիկ-կծիկ
— Ու ռումբ է սիրտս և պիտի պայթի
Թշնամու գլխուն նա պիտի պայթի

1900

* * *

Ճամբես արունի հետք թողեր կերթա —
Արունոտ ճամբես մեր թըշնամու դեմ
Խեթ օձն առջևըս ընկեր ու կերթա
Ու ագռավները հետըս ճամփորդ են

Ձիս տխուր տըրտում կերթա անգուման
Ա խ նա լավ գիտե որ հետ չեմ դառնա
Դարդըս թաղելու ցըրվելու կերթամ
Դարդըս վրեժըս ու էլ հետ չեմ գա

Է հ մնաք բարև մեր դաշտ ու սարեր
Ուր քոլ ու քարըդ մեր արնով ներկվավ
Ինձ էլ չես տեսնի իմ խեղճ ազիզ մեր
Ու գերեզմանս էլ չես գըտնի բընավ

Կարմիր օրերի անգին ընկերներ
Իվ տեղըս պահեք երբ գաք իրար քով
Ա՛խ, յարիս ասեք որ ես էլ չը կամ
Որ լա վըրես լա անուշ աչերով

1900

* * *

Սուրբ հայրենիքս երգել կուզեի
Իմ երգերի մեջ հոգեբուխ հնչուն
Երկնի հետ խոսող լեռներն վիթխարի
Եվ թռիչքն արծվի այն վեհ բարձունքում

Մայր ժողովուրդս երգել կուզեի
Հորձուտ Արաքսը չքնաղ ափերով
Հրեղեն նժույգն երգել կուզեի
Մասսա լանջերում սրարշավ տալով

Հայ կտրիճներին երգել կուզեի
Եվ կռվի կոչը հպարտ ու վայրի
Սուրբ ազատության տոնը հաղթական
Եվ վառ ապագան իմ հայրենիքի

Բայց կոպիտ ձեռներ
Փշրեցին սրտիս քնարը բեկ բեկ
Բայց կոպիտ ձեռներ
Կտրեցին նրա լարերը մեկ մեկ

1902

* * *

— Որսկան ախպեր սարեն կուգաս
Սարի մարալ կըփընտրես
Ասա յարմ՛ը դուն չըտեսար
Իմ մարալըս իմ բալես

Դարդի ձեռքեն սարերն ընկավ
Իմ արևս իմ բալես
Գըլուխն առավ քարերն ընկավ
Իմ ծաղիկըս իմ լալես

— «Տեսա քուրիկ նըխշուն բալեդ
Կարմիր կանանչ է կապեր
Սիրած յարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր»

Որսկան ախպեր ասա յարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս
Ո վ է գըրկում չոր գըլուխը
Իմ մարալիս իմ լալիս

Տեսա քուրիկ դարդոտ բալեդ
Քարն է դըրեր բարձի տեղ
Անուշ քընով տաք գընդակն է
Կըրծքում գըրկեր յարի տեղ

Սարի մարմանդ հովն է շոյում
Ճակտի փունջը մարալիդ
Ծաղիկներն են վըրան սըգում,
Ազիզ բալիդ խեղճ լալիդ

1902 Նոյեմբերի 19 Բալախանի

* * *

Ձեր շարքերի մեջ կտրիճ ընկերներ
Կանգնած եմ հոգիս հիացքով վառված
— Դեպի կռվի դաշտ ազատ անվեհեր
Գնում եք թռնում փոթորիկ դառած

Դուք ժողովրդի ազնիվ զավակներ
Սուրբ ազատության հուրն է ձեր սրտում
Վառեք բորբոքեք քարեր ու սրտեր
Ձեր կյանքով շնչող մայր-հայրենիքում

Ձեր հրացանը վրեժով լցրեք
Ջարդեք ու փշրեք նամարդ թշնամուն
Ու մահը ձեզնից հեռու կփախնի
Փախնի կըզտնի նամարդ թշնամուն

Սլացեք առաջ — և ետ մի նայեք
Մենք ենք ձեզ նայում չէ թե դուք մեզի
Կռվեք քաջի պես, քաջի պես ընկեք
Կեցցե ձեր մահը որ կյանք կըծնի

〈1900 ական թթ առաջին կես〉

## ՎԵ Ր ԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Նորից խառնվում են մթագին ամպեր
Մեր արյունավառ լեռների վրա
Եվ ագռավները տխուր բոթաբեր
Տես հավաքվում են կռավում ահա՛ —
Իմ սուրբ հայրենիք միթե չես լսում
Խուլ մռնչյունը այն հորդաների,
Մղում է որոնց այն արյունասուն
Տեր-միապետը բյուր զնդանների
Կախաղանների արյան ծովերի
Որ ազատությունն խեղդել է ուզում

Ո վ հայ ժողովուրդ ով դու դարևոր
Ազատամարտի վսեմ արյան մեջ մկրտված զինվոր –
Ինչո՞ւ ես ճնշում զայրույթը անշեջ
Որ մրրկում է հոշոտված հոգիդ —
Հերիք համբերես — քո արտն ու արոր
Մոխիր դարձրեցին և մանուկներիդ
Սրի հանեցին, և անարգեցին
Սրբություններդ պատիվդ բոլոր
Տես աչքիդ առաջ և հռհռում են
Ե վ հղփանում են դահիճներդ ստոր

— Վեր կաց ժողովուրդ, վեր կաց միահամուռ
Եթե սիրտ ունիս եթե չես ստոր
Եթե զազիր չես դահիճներիդ պես
Վեհ ազատության դրոշը կարմիր
Բարձրացրու հպարտ լեռներիդ վրա
Եվ արդարադատ քո սուրը հանիր

Գրոհ տուր լպիրշ թշնամուդ վրա
Հորիզոններից մինչև հորիզոն
Եվ փոթորկաշունչ զայրույթով ըմբոստ
Փշրիր խորտակիր գահ ու գայիսոն

Մի անգամ մեռիր, քան հազար անգամ
Կամ եղիր ազատ հզոր ինքնիշխան
Կամ ընկիր հպարտ ձեռքովդ ավերակ
Բռնապետության բեկորների տակ

1900 ական թթ առաջին կես

# ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հազար տարիներ և մինչև այսօր թաթարն է նստել մղձավանջի պես մեր կրծքի վըրա մեր շունչն է խըլել

* * *

Հազար տարիներ և մինչև այսօր լույսի գեղեցկի և ճշմարտի համար արյուն ենք թափել ներկել սար ու ձոր

* * *

Հազար տարիներ և մինչև այսօր մենք կոչ ենք արել մարդկության խըղճին բայց խիղճն է եղել քարի մի կտոր

* * *

Եվ հոշոտվել ենք այրվել ու մորթվել բայց մեր հավիտյան նահատակության դեռ վախճան չըկա՛

* * *

Անցել են դժվար ու դառըն դարեր ազգերի գլխից և օրն է հասել բարվո արդարի և ազատության բայց մեր երկնքում գիշեր է խավար մեր հայրենիքում արյուն ու ավեր

* * *

Եվ մենք կըմեռնենք մեր տանջանքի հետ — ծանր տընքոցով մեր դարն էլ կանցնի բայց վաղվա օրը — սերունդը գալիք նորից պիտ տանջվի — մեզ նույնանըման

* * *

Ա խ մեր նահատակության վերջ վախճան չըկա

* * *

Վառվում է արև ծաղկում է գարուն ճախրում է ոգին ստեղ ծ ուրախության բայց մեր սրտերից հեղում է արյուն և մեր թևերի վրա հավիտյան թաթարն է նստել— չենք կարող թըռնել

* * *

Տեսնում է հոգու պայծառ աչքերով մեր ժողովուրդը գաղա վատն անմահ բայց մեր թևերի վըրա հավիտյան թաթարն է նստել— չենք կարող թըռնել

* * *

Ավաղ մենք ուրիշ ազգերի նըման դավաճան չեղանք սրբության առաջ լույսի ճշմարտի նախակարապետ — մենք շատ կըռվե պիտի գիտենք կըռվել

* * *

Օ դու խաչված ազգ նահատակ աշխարհ երկրպագության սեղան սըրբազան դու մեծ Պրոմեթե շղթայված երկրին քո սիրտը օվկիան այն արյունարբու աշխարհաավեր թաթարն է կըրծում հա զար տարիներ հազար տարիներ

* * *

Մարդկության մեղքի քավության նոխազ մարդկության ձեռ քից բաժակ դառնության խըմիր քաջաբար և մեռիր հպարտ կատա-րելության մեծ շավղի վըրա որպես ռահվիրա որ ազգերը գան և քո վըրայով ընթանան դեպի իդեալը անմահ

1905

* * *

Ես ձեզ ասում եմ որ ժամն է հասել
Արդար զայրույթի ազնիվ պայքարի
Դրոշակը մեր գետին է ընկել
Եվ ոտնակոխան ամբարիշտ չարի
Կամ պետք է մեռնել կորչել հավիտյան
Կամ բարձրացնել դարձյալ հաղթական
Դրոշակը մեր վեհ իդեալների
— Ես մեկիկ-մեկիկ ձեր դուռն եմ թակում
Ելեք սեղմվեցեք նորից շարքերում
Դուք որ լույս էիք սփռում մշտապես
Այժմ հուր ցանեք աշխարհը լափ է
Ով որ սիրտ ունի թող դուրս գա հանդես
Ով արյուն ունի նա պիտի թափե
— Վայ քեզ ժողովուրդ անմիտ երեխա
Մահվան ուրուրն է թևերը փռել
Քո գլխի վըրան քո երկրի վըրան
Բայց դու թշնամուդ չես կարող տեսնել
Եվ զենքդ ես ցցել եղբորդ հանդիման
Տուր ինձ զենքերը դու արժանի չես
Տուր ինձ մեն մենակ ես պիտի դուրս գամ
Մենակ պիտ կըռվեմ քանի որ արդեն
Վեհ նպատակի պայքարն է վառվել

1905

## ՄԵՆԱԿԻ /Ե ԱՌՍՏԱՄՅԱՆ/ ՆՎԻՐԱԿԱՆ ՍՏՎԵՐԻՆ

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր
Հովն է հեծեծում Բասենա դաշտում —
Ոսկի երգերըդ իմ ազիզ ընկեր
Են հովն է երգում Բասենա դաշտում

Ա յ սիրուն արտուտ լալազար գարնան
Արազի դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Դուն թըռչում էիր սիրտըդ վառ վառման
Գովքն ազատության երգելով անուշ

Քաջ ընկերներով կըռիվ սըլացար
Ազատ երգերով Արազի դաշտում
Նամարդ թշնամուն զարկիր զարկվեցար
Ընկերներիդ հետ Բասենա դաշտում

Ու ժողովուրդը կարոտ քու սիրուն
Բասենա դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերըդ սիրուն
Ու չեն մոռանում երգերըդ անուշ

Ա խ սուրբ վերքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնեցիր
Թող ծանր չըգա այն հողը վըրեդ
Որն այնպես հըզոր անհուն սիրեցիր

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր
Հովն է հեծեծում Բասենա դաշտում
Անուշ երգերըդ իմ ազիզ ընկեր —
Են հովն է երգում Բասենա դաշտում

1905

* * *

Մասիսի մռայլ խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման վրեժի
Թույները կիզող թափեցին իմ մեջ

Այսքան տառապանք անարդարություն
Մարտիրոսացան սրբազան շարքեր
Արյան հեղեղներ նահատակություն
Մի ազգի բաժին — հազար տարիներ

Մարդկության կողմից դարերով նյութած
Էլ սահման չկա մեր համբերության
Էլ անուն չկա մեր տառապանաց
Մեր գերմարդկային մեր գերբնական

Էլ քար չըմնաց այս աշխարհի մեջ
Որ չոռոգվեր մեր սուրբ արյունով
Էլ նշույլ չըմնաց այս լիրբ մարդկանց մեջ
Որ չըհղփանար մեր սուրբ արյունով

Մասիսի մռայլ խոժոռ ժայռերի
Իժերը բոլոր թափեցին իմ մեջ
Իրենց թույները ցասման վրեժի
Եվ սիրտս է եռում վրեժով անշեջ

Դու մոխրի վրա նստած ժողովուրդ
Հոշոտված մանկանց դու խելագար հայր —
Էլ ինչդ մնաց ինչ պիտ կորցնես —
Ինչպես պիտ չափես զրկանքդ անծայր

Դուրս եկ դու վագր դու շղթայազերծ
Աստված ու երկինք ոտաց տակ տալով
Խփիր հարվածիր ջախիր ջախջախիր
Ջինված ռումբերով թույնով կայծակով

Պայթիր հոշոտիր խփիր ջախջախիր
Բոլորին որոնք մարդու են նման—
Երկինքը փուլ տուր աստղերը մարիր —
Փշրիր աշխարքը մի ձվի նման

Քար քարի վրա թող բան չըմնա—
Փշրիր գանգերը և թող շան սատակ
Լինեն բոլորը և դու նրանց հետ—
Ընկիր աշխարհի փլատակների տակ

1905

## ՔԱՋԵՐԻՆ

Մռավ սարերից սավառնեց քամին
Դրոշակը մեր հպարտ ծըփծըփաց
Տեսեք դաշտերից կուգա թշնամին —
Սրբազան կռվի կոչը որոտաց
Է յ, հայ ախպրտիք եղջյուր հնչեցեք
Իջեք ժայռերից անհաղթ արծիվներ
Սարերից պոռթկած հուր ու ջրի պես
Թափվեցեք ստոր դուշմանի գլխով —
Նա — մեր դրացին և նամարդ և չար
Գիշերը գողտուկ ելավ մեզ վրա
Ու մեր թիկունքից ծածուկ գաղտնաբար
Սողաց օձի պես ելավ մեզ վրա
Զարդեցեք ջնջխեք էդ նամարդ օձին
Որին մենք ավաղ հազար տարիներ —
Տաքացրեցինք մեր ազնիվ ծոցին
Հազար տարիներ հազար տարիներ
Նա մեր արյունը խմեց ու ծծեց
Բայց համբերեցինք ուղիղ սրբի պես
Մենք խրատեցինք իսկ նա մեզ ծեծեց
Բայց համբուրեցինք նրան ախպոր պես
Ջան ազիզ Արազ ինչպես դու հիմա
Մեր վառ արյունով կարմիր ես կապե
Մեզ ինչ — ամոթից թող նա սևանա
Ո վ ճառել գիտե կռվել չգիտե
Վառ կարմիր հագիր դու հայ ժողովուրդ
Եվ սուրդ շարժե քեզ ճանապարհ բաց
Այս աշխարհի մեջ սուրն է միշտ կտրող—
Կտրիր ու տիրիր — անհաղթ հզոր կաց

Եվ ոտքդ ամուր դու խփիր երկրին
Հողիդ ու տանդ տերը դուն եղիր
Է՛յ դո՛ւ արևի ճամփորդ վաղեմի
Սրով գոտեպինդ և առաջ քայլիր
Անհողդող գնա դեպի լույսն արև
Եվ ազգերն ամեն հարգանքի նշան
Հետ հետ գնալով և տալով բարև
Ազատ անարգել քեզ ճամփա կտան

1906 հունվարի 8
Ալեքսանդրապոլ

## ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մայրենի հողի լեռներու խիզախ
Ըմբոստ սանձարձակ մրրիկներն հզոր
Հովվի ականջիդ հնչեցին շատ վաղ
Վեհ ազատության երգերն ահավոր
Կանուխ թողեցիր եզներն ու գութան
Եվ մրրկալից գլուխդ առար
Քու բազմաչարչար եղբոր փրկության
Այն ազատաշունչ լեռներն ընկար
Սուրբ իրավունքի արդար զայրույթի
Դրոշակը ձեռքիդ թռչում էիր դուն
Օգնության կերթար բազուկդ երկաթի
Ով որ հեծում էր ով բռնաբարվում
Եվ ազատախոս քու սազը անուշ
Լույս էր շավաղում մութ զնդաններում
Ժպիտ էր ծաղկում բողբոջում էր հույս
Ուր որ հասնում էր նժույգդ սիրուն
Օրհասի առաջ կուռ զնդաններում
Կրծքիդ չկախվեց գլուխդ երբեք
Եվ ազատախոս ծով սրտիդ լեզուն
Սազդ մեղմանուշ չստեց երբեք
Շատերի նման դու շահիդ համար
Գլուխ չբերիր ուրիշի առջև
Այն լեռներու պես ճակատդ պայծառ
Երբեք չիջավ ոտների ներքև
Դու ազատության զինվոր աննկուն
Թիկունքդ չտեսավ թշնամին երբեք
Գլուխդ դրիր չոր քարի վրան
Աչք չըգցիր ուրիշի հացին

Երբ շուրջդ չնչին ու ստոր մարդիկ
Հոխորտում էին ստով ու կեղտով
Դու զուլալ աղբյուր դու ոսկի աստղիկ
Հեզ ժպտում էիր բարի աչքերով
Դու սիրուն էիր ինչպես արշալույս
Եվ աչերիդ մեջ հավատ մանկական
Քու սիրտը սիրող մաքուր ու քնքուշ
Դու երազն էիր սուրբ ազատության
Եվ մինթե մեռար իմ անգին ընկեր
Մեռնում են ինչպես մարդիկ անհամար
Ո չ դու չես մեռնի ոչ դու չես մեռել
Ինչպես չի մեռնում սերն ու գաղափար
Դու միշտ ապրում ես քու ժողովրդեան
Արյունոտ հոգում ինչպես վառ երազ
Ինչպես արշալույս վեհ ազատության
Շքեղ անարատ անմահ կըմնաս

1908

* * *

Բաշերն ալեծուփ  բաշերն հողմակոծ
Ազատ դաշտերով նժույգս է թըռչում
Եվ սմբակներից բըխում է հուր բոց
Դաշտերն են թնդում  վախ առած փախչում

Ազատամարտի հրդեհից կըզամ
Ուր կուրծքն եմ ճեղքել թշնամու դժխեմ
Դրոշն է ձեռքիս վեհ ազատության
Եվ հաղթանակի երգերով վսեմ

Արյուն է ծորում սրես ոխերիմ
Դրոշն է ծըփում ոսկե ամպերում—
Չար բռունցքի տակ հեծող աշխարհքին
Նոր գարուններիի համբավն եմ բերում

Նժույգս է թռչում բաշերն հողմակոծ
Եվ շառաչում են սանձ ու ասպանդակ
Ջրահս է շաչում  բխում հուր ու բոց
Ձիլ շառաչում են սանձ ու ասպանդակ

Այս շղթաներն են շառաչում ոտքիս
Օ  թռիր նժույգ  այս քարե պարկից
Այս մըռայլ բանդի կամարն է կըրծքիս
Մի կանգնիր նժույգս  սլացիր արագ

1909 հուլիսի 25
Ղազարապատ

# ՀԵՐՈՍԸ

Նրա ծննդավայրը Արցախ Սյունյաց աշխարհն է քաջերի այդ [illegible] որ միշտ բարձրագլուխ է եղել համատարած ստրկության [illegible] այդ անմատույց լեռներն ու դժար կապանները ուր թափառում [illegible] Դավիթ-Բեկի Ոգին

Եվ երևաց նա Դավիթ-Բեկի Ոգին առնական լանջի տակ որպես [illegible] ազատագրության անդրանիկ զինվոր հավերժ անմոռանալի [illegible] արշավախմբի մեջ

Առաջին կտրիճների ֆիդայիների այս խումբը որ շեփորեց ըմ [illegible] թյան կոչը ստրկության ձորերում և լեռների վրա ուր առաջին [illegible] մերկացավ ազատարար ու վրեժխնդիր սուրը դարերի բըռ- [illegible] նի դեմ

Ծանոթությունը ձեռք մեկնեց բռնությանը և եփրեմը իր ուխտած [illegible] ների հետ շղթայակապվեց տարիներ տոկաց բանտերում Սի [illegible] ոսոցադաշտերում և տաժանակիր աշխատանքի զնդաննե [illegible] պանքը փշրում է թույլ ոգիները իսկ մեծ ոգիները կռում [illegible]

[illegible] տառապանքի բովով անցած խորտակեց շղթա ու զնդան [illegible] թներով ճախրեց եկավ միացավ գաղափարի նոր ընկեր [illegible]

[illegible] բռնեց նա ազատարար և վրեժխնդիր սուրը որ այլևս [illegible] չմտավ Եվ շողաց այնտեղ ուր կար անարդարություն [illegible] գիշատում Եվ նրա անընկճելի երկաթե ձեռքում այն մնաց [illegible] միշտ արդար միշտ գահրաման

Հայոց հիների ու Հազկերտների Շահ Աբասների ու աղա Մամեդ [illegible] Ահեր սմբակների տակ փոշիացավ Հայաստանը

[illegible] այդ փոշուց դուրս եկավ եփրեմը իր հրեղեն կտրիճներով [illegible] Ահեր երկաթե ոտքերը հաղթանակորեն կոխեցին անցան [illegible] Շապուհների ու Շահ Աբասների փոշին վերստեղծելու

վերաշինելու Արյաց աշխարհը Եղբայրության Ազատության և Հավասարության հիմքերի վրա Եվ Զրադաշտի հանգած ատրուշանը վերստին բորբոքելու նոր, մարդկայնական գաղափարների հույսով

Բայց ավաղ ոչ մի թռչուն չի մնում իր թռիչքի բարձրության վրա Եվ ընկավ եփրեմը Հերոսների Հերոսը ընկավ ազատության բարձունքի վրա ընկավ ազատության Աստծու ձեռքերի վրա

Փառավոր կյանք փառավոր վախճան

1912

## ՍԻՄՈՆ ՋԱՎԱՐՅԱՆԻ ՆՎԻՐԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նա գալիս էր հին հեռավոր դարերից
Պատմուճանը փոշիներով թաթավուն
Մուճակները պատառ պատառ քարերից
Ճակատը բաց ցուրտ հովերուն արևուն

Նա նստել էր ոտների տակ Հիսուսի
Ունկնդրել աստվածային Կտակին
Հոգում երկինք անհուն սիրո և հույսի —
Եվ նա եկավ այնպես հեզ ու կաթոգին

Բարեկամի օտարի հետ ամենուր
Սեղան նստեց մեզ հետ կտրեց աղ ու հաց
Եվ թափառեց ավանդելով դռնե դուռ
Հավերժական պատգամները մոռացած

Հավերժական պատգամները մոռացած —
Սիրել ներել և թշնամուն և չարին
Լինել ծըլին փոշուն որդին ողորմած
Ու սերմանել միշտ ճշմարիտն ու բարին

Այս նյութամոլ այս կեղծավոր դարի մեջ
Արհամարհեց նա ամեն բարձ ու պատիվ
Միշտ վառ պահեց այն երկնային ջահն անշեջ
Եղավ բոլոր որբ սրտերի քաջ հովիվ

Խարազանեց ամեն սուտը ու վատը
Լացեց ամեն տառապողի լացի հետ
Կյանքով կոփեց ազատության լույս դատը
Եվ չփնտրեց նենգ փախուստի արահետ

Միշտ պատնեշին և կուրծքը բաց, անզրահ
Արշալույսից կռվեց մինչև արշալույս
Եվ այրվեց հուր վերքերով մեզ վրա
Որ մռայլում հեծծողներիս բաշխեր լույս

Եղավ համեստ անխոնջ ծառա ամենքին
Եվ մշակեց անդաստանը բոլորի
Եղբորից շատ սիրեց խեղճին տնանկին
Եղավ փարոս որ ոչ մի նավ մոլորի

Եվ չունեցավ գլուխ դնելու մի չոր քար
Ձեռք չմեկնեց ոչ ընկերի ոչ եղբոր
Ինչ որ ուներ տարավ մոտիկն ու օտար
Իրեն մնաց մի սիրտ անտուն վիրավոր

Դու Ձոհալ աստղ մեր վերքերի բալասան
Մեր ցավերի համար եկած այս աշխարհ
Մեր արյունոտ հովիտների սուրբ շուշան
Դու հավերժ ես դու չմեռա՛ր չմեռար

Նա չմեռավ  նա հոգնեցավ  նա գնաց
Բայց երբ նորից աշխարհ ընկնի հուր ու թուր
Նա պիտի գա պատգամներով սոռացած
Ավանդելով սերն երկնքի դռնե դուռ

1913
Ժընև

## ԳՈՂԹԱՆ ՔՆԱՐԸ ՈՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

(ՊՈԵՄ)

Սազը չի թողնում որ կտրիճ դառնամ
Թուրը չի թողնում որ գուսան դառնամ

I

Գողթան քնարը որ ազատության
Գովքը կը երգեր Մասիս սարն ի վեր —
Ա խ շատ վաղուց էր լուռ էր ու անձայն
Ու գուսանները քուն էին մտեր
Որոնց սրտերի արտուտն էր ճախրում
Երգելով Ազատ Մասիս սարն ի վեր

Բայց երբ կտրիճի վառ սիրտը թնդաց
Սիրով վրեժով հայրենի երկրի
Երբ հրացանի կոչը որոտաց —
Կոչն ազատության Մասիս սարն ի վեր —
Գողթան քնարը նորից զնգզնգաց
Ու սիրտը ճախրեց Մասիս սարն ի վեր

II

ԳՈՒՍԱՆԸ — Բարով ձեզի հայ-ախպրտիք
Հանց լեռ ու ժեռ դուք քովե քով
Բարով ձեզի հայ-քուրիկներ
Հանց զարդ ու վարդ դուք քովե-քով
Մեր աշխարհեն ելլեր կուգամ —

Մութ սարերեն խոր ձորերեն
Կռվի կարմիր տեղերեն
Հանց կայծակը խոլոր ամպեն
Սիրտս օձոտ ու խոցոտ
Ձեր սրտի մեջ ահա կուգամ
Արնոտ սիրտը վրեժ կուզե
Ով սիրտ ունի դուրս ելնի
Քանց թեժ կրակ վրեժ կայծակ
Ձեր սրտի մեջ ահա կուգամ

ՀՈՂՈՎՈՒՐԴԸ — Բարով եկար Գուսան ախպեր
Մեր աշխարհի անուշ բլբուլ
Մեր աշխարհի հողն ես կոխեր
Էդ սուրբ հողին մատաղ լինինք
Արի նստի մեր աջ կողքին
Անուշ ձենով սազ արա
Մեր աշխարհի գովքն արա

ԳՈՒՍԱՆԸ — Հայ ախպրտիք հայ-քուրիկներ
Մեր աշխարհի ինչը մնաց —
Հուրը գնաց
Մուրը մնաց
Ա խ մեր ազգը վախ մեր աշխարհն
Մոխիր դարձեր ավեր ավար
Մեր արտերում գերնդու տեղ
Յաթաղանն է հիմի զնգում
Խաս հավքերի ծիվ ծիվի տեղ
Քոռ բուերն են վայում վայում
Քուրդերի հետ սև գելերն են
Մեր դաշտերում զուլում ոռնում
Ա խ ժողովուրդն անտուն-անտեր
Թափառական ու բնավեր

Իր քրսինքով շեղջած ցորնեն
Կուտ կմուրա մեր դուշմնեն
Մեր դարդերը ծով են դարձեր
Խորունկ դարդը երգ չունի
Սրտիս լարերն են կտրտվեր,
Սիրտս ձեզի երգ չունի
Մի վայրի հավք մի օր տեսավ
Բլբուլ կուլար պուտ-պուտ արուն
Ասավ — «Ինչո՞ւ սիրուն բլբուլ
Ինչու կուլաս պուտ-պուտ արուն
Տես սար ու ձոր վարդ ու սմբուլ
Կարոտ քաշեն քու վառ ձենին
Իսկ դու ինչո՞ւ էս չոր չոլում
Ախ ու վախով կուլաս արուն»
— «Ի նչ կը խոսիս բլբուլն ասավ
Խենթ ու անդարդ վերի թռչուն
Դուն չտեսար դուշմանն եկավ
Սևցուց դեմքը մեր արևուն
Ձմեռ նստեց մեր սարերուն
Չորցուց ծիլերն ծաղկըներուն
Արունն ելավ գոչ-գո՛չ գնաց
Մեր մայրերուն ձագուկներուն »
Է յ ախպրտիք մեզի համար
Կյանքն էլ ոչ մի երգ չունի
Քանի որ մենք սուգն ենք առնում
Մեր արյունոտ աշխարհի
Քանի որ մենք կոչն ենք լսում—
Կոչն հրեղեն վրեժի
Մեր մայրերի քույրերի
Դուք չտեսա՞ք հայ-ախպրտիք

Արունն ելավ գոչ գոչ գնաց
Մեր մայրերուն ձագուկներուն
Խոցված սիրտը վրեժ կուզե
Ճակատ ճակտի դուշմընի դեմ
Ո վ սիրտ ունի թող ելնի

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ — Գուսան ախպեր անուշ բլբուլ
Մեր ախպրտանց դարդի ծովեն
Արնոտ ալիք սգի ձեներ
Վաղուց է որ մեզ հասեր են
Մենք մեր կյանքով էնոնց մատաղ
Մենք ամենքս մեր աշխարհի
Մեր ախպրտանց սուրբ ուղուրին
Ա խ վաղուց է Գուսան ախպեր
Մեր աշխարհի մեր սարերի
Անուշ գովքը չենք լսեր
Մեր Մասիսեն մեր Արազեն
Փափագ պապակ կարոտ ենք
Համով-հոտով սազ արա...

ԳՈՒՍԱՆԸ — Մեր սարերեն խոր ձորերեն
Պղտոր պղտոր կուգաս Արազ
Մեր սրտերեն խոր աչքերեն
Արուն քամեր կերթաս Արազ
Մեր սարերեն մութ ձորերեն
Ոլոր մոլո՛ր կերթաս, Արազ
Ա յ սարեր ջան սարեր
Ալմաստի սարեր

Քանի հարուր-հարուր տարի
Մեր սարերեն ելեր կերթաս
Մեր դարդերով մեր ցավերով

Խոլոր-մոլոր կերթաս Արազ
Մեր սարերեն մութ ձորերեն
Մեր դարդերով կերթաս Արազ
Ա յ սարեր, Հայ-սարեր
Ջան անո՛ւշ սարեր...
Ու դարերով մեր դարդերով
Էս աշխարհի քար ապառաժ
Անգութ խղճին միշտ զարնելով
Տխուր տրտում կերթաս Արազ
Մեր սարերեն խոր ձորերեն
Արուն քամեր կերթաս Արազ
Ա յ սարեր ջան ձորեր
Ջավահիր սարեր
Ա խ աշխարհը անխղճմտանք
Քեզ չի գթա Ազիզ Արազ
Քու բողոքին քու մորմոքին
Չի էլ լսի արնոտ Արա՛զ
Մեր սարերեն մութ ձորերեն
Տխուր-տրտում կերթաս Արազ
Ա յ սարեր հայ ձորեր
Ջմրուխտի սարեր
Դուն էլ Արազ մեր արունով
Էս աշխարհի խղճի վրա
Դիզվի՛ր դարձիր սև — դառն ծով —
Թո՛ւյն ու արո՛ւն Ազիզ Արա՛զ
Մեր սարերեն մեր ձորերեն
Արուն քամեր կերթա՛ս Արազ
Ա յ սարեր Հայ սարեր
Ջան անուշ սարեր
Ալմաստի սարեր

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ — Ձենդ անսպառ գուսան ախպեր
Մեր աշխարհի բլբուլն ես խաս
Ա խըր Գուսան շա՛տ ենք լացեր
Հացն ու բարձը աղի թրջեր...
Ո՞ւր է սազդ առ սրտիդ գա՛րկ
Կրակ գցե մեր սրտերը
Կանանչ հուսով սազ արա

ԳՈՒՍԱՆԸ — Երբ ես տեսա մեր աշխարհի
Ցավն ու դարդը ծովածավալ
Սիրտըս խորունկ ձեն տվեց —
Ձարկի սազս ժեռ քարերին
Հազար փշուր - փշրանք արի
Ասի — ամոթ շատ ամոթ է
Էդ փետ-լեզուն իմ ծով սրտին
Մինչև չըլնի մութ ու գիշեր
Կարմիր օրը չի շողա —
Մինչև չըլանք արուն արցունք
Մեր արևը չի դուրս գա
Կարմիր - Ձատիկը չի գա
Է յ ջան հա ջան
Հազար սիրտ ունիմ
Մենակ մի լեզու
Լեզվով էլ սիրտը չի բացվի
Է յ հայ ախպրտիք
Տվեք հրացան —
Սրտիս սերտ սղմեմ
Մարդ հրացանով շատ լավ կխոսի —
Հրեղեն խոսքեր ամպի ձեներով
Տեսեք վերև ամպի փեշով
Երեք տեսակ հավք կանցնի —

Մեկը այ կանչեց
Մեկը վայ կանչեց
Մեկը հայ կանչեց
Ու հրացանս էնոնց պարպեցի
Ա յ կանչողը թողեց փախավ
Վայ կանչողը զարկվավ ընկավ
Հայ կանչողը Հայ Հա՛յ կանչեց
Եկավ նստավ գլխուս վրա
Ով Հայ կանչե Հային կանչե
Թող գա բազմի գլխուս վրա

III

Սիփան սարեն քամին կուգա
Սիրտս քամուն բացեր եմ
Ջան սարերի ազատ քամի
Ես էլ ձեզ պես ազատ եմ
Դուրս էմ եկել քեզ եմ կանչում
Դուրս եկ դուշման դեմ առ դեմ
Գիշեր ցերեկ քեզ էմ փնտրում
Ես քեզ սրտանց կարոտ եմ
Բաց կուրծքդ բաց կարոտ եմ քեզ
Ա ռ համբուրս վառ վառման—
Իմ երկաթե ռումբ համբուրս
Ա ռ սրտիդ մեջ դուշման ջան
Ելնինք հայեր ոտքի ելնինք
Կռիվ հարսնիք մեկտեղ երթանք
Մասըսից մինչև Առնոս Տավրոս
Մի մարդու պես ելնինք կայնինք

Մեր «Դրոշակն» ազատ հովում
Բարձր ու հպարտ կծփա
Մեր «Դրոշակն» ապրած կենա—
Մեր սրտերում մեր վրա
Դեպի կռվի դաշտ մեր Դրոշի տակ
Մեր դուշմընի դեմ մեր պատվի համար
Ու թե որ ընկնինք մեր վառ արունով
Մեզնից կըսրբենք այս ամոթն իսպառ
Ու թե որ ընկնինք բոցը մեր արյան
Մրրիկ կըդառնա սերընդի սրտում
Ու մեր ձեռներեն վար ընկած շղթան
Ամուր կըկապե գազան թշնամուն
Մեր ընկած տեղեն նոր քաջ կըկանգնի
Կեցցե մեր մահը որ կյանք է ծնում
Մեր գերեզմանը մայրն է նոր կյանքի
Կեցցե Սուրբ գործը – Հեղափոխություն

## IV

Գոռգոռալով ամպերն եկան
Սարն էլ ամպին ձեն կուտա
Հայ կտրիճներ թև առան
Հայն էլ հային ձեն կուտա
Ջան ամպերը կռիվ կերթան
Կայծակե թուր մեջքերին
Հայ արծիվներ կռիվ կերթան
Սուր - հրացան ձեռքերին

Հայ կտրիճներ հայ արծիվներ
Ուր որ երթանք ուր որ լինինք
Մեջ մութ ամպին մոլոր ճամփին
Մեր «Դրոշակը» մեր գլխին
Մեր աշխարհի սերն ու արունք
Մեզ թուր ու թև ու թիկունք
Բարին մեզ հետ բարով երթանք
Դև-Սուլթանի վրեն երթանք
Թուրքը փռվի մեր ոտաց տակ
Անապատը աղբուր բխե
Մութ գիշերին շողա լուսնյակ
Քուրդը փռվի մեր ոտաց տակ
Փակ դռները բացվին արձակ
Սարը չոքի գլուխ բանա
Ծովը ճղվի ու ճամբա տա
Բարին մեզ հետ բարով երթանք
Կեցցե կեցցե միշտ վեհ կեցցե
Մեր «Դրոշակը» մեր վրա
Մեր «Դրոշակն» Ազատության
Բարձր բարձր միշտ ծփա
Քիչ էլ կանցնի Հայու երկնեն
Արև կելնի —
Հայու Արևն կանանչ - կարմիր
Հուրն ի հրեղեն
Այլուն փայլուն
Նոր Արև
Հայու արևն
Նշխուն շաշխուն
Ծին ծիրանի

Նոր ու Նռնի
Վառ Արև
Հայոց Արևին տանք բարով
Հազար բարի հազար բարով

V

ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՆՈՒՏԵՐԸ —

Է յ հարս մորպետ խաթուն տնտես
Գինի ունինք յոթը կարաս
Յոթը կարսի գինին էլ խաս
Էն մենձ գավով գինի բերեք
Նռան ալվան գինին բերեք
Գուսանի հետ դուռ ու դրկեց
Հայի հալալ սեղան նստենք

ԳՈՒՍԱՆԸ — Հայ ախպրտիք հայ քուրիկներ
Գինին արևան նշանն է —
Գինին խմենք արուն թափենք
Հայոց ազգի կենացը
Է յ հարս խաթուն ողջ մնաս
Ծլիս ծաղկիս ծառ դառնաս
Գլխավորդ ողջ մնա
Հայ ախպրտիք հայ քուրիկներ
Ձեր օջախը միշտ վառ մնա
Ձեր տունն ու դուռ միշտ շեն մնա
Յոթը որդով սեղան նստիք
Յոթը օրոցք միշտ շրընկա
Մեկ հյուրն երթա երկուսը գա
Տեղը դատարկ չմնա
Ամբարներդ հացով մնան

Պատվով մնաք, բարձով մնաք
Քարը բռնեք լալ դառնա,
Քոլը բռնեք զառ դառնա
Գինի խմենք արուն թափենք
Հայոց ազգի կենացը:
Գինի խմենք զարկենք զարկվենք,
Հայոց ազգի կենացը
Հայոց ազգը ապրած կենա
Հազար-հազար բարով, տարով
Հայու «Դրոշակն» ապրած կենա,
Հայու արևն ապրած կենա
Հազա՛ր, հազար բարով տարով

1900

„Ich will hier singen, bis..."

1888-1948

## ՆՎԵՐ ՐԱՖՖՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Նորից գույժ մահվան քեզ Մայր Հայրենիք
Մեռավ քո որդի Րաֆֆին վիպասան
Հիշատակ թողեց անթիվ անմահ գիրք
Եվ մտավ մութ ցուրտ խոնավ դամբարան

Հայտիր ով տաղանդ գրիչ առ ձեռքդ
Գրե դրոշմե գովե Հայաստան
Հարգե հայ լեզուդ սիրե՛ հայ ազգդ
Որ փառք ժառանգես Մեսրովբի նման

Երկու ամսի մեջ ախ անգութ մահը
Խլեց մեզանից քեզ և Ծերենցին
Արդյոք ինչ շահեց քարասիրտ մահը
Որ ձեզ տարավ մեզ թողեց լալագին

1888թ 29 ապրիլի
Ղազարապատ

## ՔՆԱԾ ԵՐԵԽԱՆ

Խորին գիշեր է  Եվ արար աշխարհ
Լուռ մրափում է անշարժության մեջ
Քամին չի սուլում  արտը չի ծփում
Էլ չըկա փարթամ ծառերի շշունջ
Վաստակած առվի անուշիկ մրմունջ
Լուռ է ամեն ինչ
Երջանիկ մարդիկ
Անդորր քնած են — և քունն աչերին
Մենակ շրջում է գունաթափ լուսինն
Մուգ  անապատում դողդոջուն շողերն
Սփռելով սառը երկրի երեսին
Նիրհ է ներշնչում ծառին ու ծլին
ժայռին ու մամռին
Մաքրափայլ գետի դեմքը փայփայում

* * *

Բայց ախ  ալեկոծ ծովի երեսին
Նավն է խորտակվում կապանքների մեջ
Թշվառը հեծում ցուրտ նկուղի մեջ
Անոք պանդուխտը  անտեր հիվանդը
Անհույս տանջվում և սև վշտերից
Ճմլվող սիրտը հուզվում փոթորկում

— Նազելի լուսին լուսաստյուռ լուսին
Հանգիստ տո՛ւր կյանքի խորթ որդիներին
Անհույսին հույս տո՛ւր հիվանդին ուժ տուր,
Տանջված սրտերին մխիթարություն
Տառապյալներին կյանք քաղցրություն

1890 1891

* * *

Դու մի սիրիր իմ աչերը
Այն տխուր են ու խավար
Սիրիր երկնի հուր աստղերը
Այն աչերը վառ գոհար

Դու մի սիրիր իմ մազերը
Այն անշուք են ու մռայլ
Սիրիր գարնան պերճ արևի
Գողտրիկ գանգուրն ոսկեծալ

Թե որ կուզես սիրել սիրտը
Որ աշխարհով լիք լինի
Թող ծով ցամաք թող երկինքը—
Սիրիր սիրտս, նազելի

1891 թ 17 հունիսի
Ալեքսանդրապոլ

* * *

Որպես հառաչ լքյալ տըրտում
Խոցված սըրտից կուսական
Կուզեմ թըռչել մաքուր օդում
Կորչել կորչել հավիտյան

Ես զգում եմ — տգեղ կյանքի
Էությունը չէ տանջանք
Թող վիշտ լիներ նա երանի —
Կյանքն է զավեշտ ու հեշտանք

Կյանքն է խընջույք աննպատակ
Նա թռիչք է սըրընթաց —
Սուտ է... չըկա փառքի պըսակ
Չըկա ձըգտում չըկա լաց

1891 թ դեկտեմբեր
Ս Էջմիածին

* * *

Մի խոստանար ծագել նորեն
Վառ արշալույս իմ սըրտում —
Անապատում վաղուցվանեն
Մութ մառախուղ է տիրում

Արշալույսի շողն ու ցողեր
Կարոտով են զառ վարդին
Իսկ խավարի մըռայլ քողեր
Թոշնած անհույզ իմ սըրտին

— Սիրտըս արդեն մոռցած շիրիմ
Արդեն դատարկ օրորան —
Կը խարխափիմ թող ընկեր իմ
Այսպես հասնիմ գերեզման

1892 թ ապրիլի 15
Ս Էջմիածին

* * *

Նազան - աղջիկ Շուշան Շուշիկ
Տես մութն ընկավ հովն ընկավ
Ցոլցլալով աստղերն ելան
Քունն աչերիս ցած իջավ

Ընխշուն ծաղիկ սիրուն եղնիկ
Թող գիրկդ ընկնիմ քուն մտնիմ

Ախ զով սարում յարի գրկում
Լռիկ քունն ինչ անուշ է
Հովը օրոր կըշվշվա
Առուն երգեր կըշշնջա
Նազիկ ծաղիկ - նուշիկ Շուշիկ
Երնեկ քեզի թուխ ծամերդ
Ծփծփալով հովն է տանում,
Սև դարդերդ ջուրն է տանում

1892 թ հուլիսի 28
Ս Հառիճո վանք

* * *

Ես ունեի մի նռան ծառ
Ծաղկած ալվալ նռներով
Բայց ախ տոթը հուր-բոցավառ
Խարկեց ծառըս նռներով

Ես ունեի թուխ ժայռի տակ
Մաքուր աղբյուր մեղրահոս
Բայց արևը բարկ ու կրակ
Չորցուց աղբուրս, ախ ափսոս

Լիքը սիրով վառ հույսերով
Սիրտ ունեի անարատ
Բայց Շուշան ջան, քու սուտ սիրով
Սիրտըս դարձրիր անապատ

1892 թ սեպտեմբերի 3
Դիլիջան

* * *

Մենակ ապրեցա որքան տանջվեցի
Որքան լացեցի քույր իմ քեզ համար
Իմ արցունքները քեզ նվեր բերի
Քեզ նվեր բերի սիրտս վշտահար

Հոգուս երգերը լցված տոգորված
Քո սիրով էին դիպչում քնարիս
Աղերսում էին եղիր ողորմած
Եղիր ինձ ընկեր սիրիր թշվառիս

Բայց ցաված սիրտս չսիրվեց երբեք,
Չզգաց զովություն սիրո ցողերի
Եվ սիրո արտից կուսական սրտից
Չքաղեց ծաղիկ բուրմունք հույսերի

Եվ ես չքացա որպես բույրն օդում
Որպես ջինջ շողը մռայլ գիշերում
Սակայն թողեցի քեզ նվեր քույր իմ
Սրտի երգ ու վերք և մամռոտ շիրիմ

27 փետրվարի 1893
Ալեքսանդրապոլ

## ՆՎԵՐ ՏԻԿԻՆ Շ 〈-ին〉

Ինչպես անցյալի տխուր ավերակ
Կամ ճոխ պսակի թոշնած ծաղիկներ
Ինչպես մանկության աղոտ հիշատակ
Կամ մոռցած երգի նսեմ հնչյուններ
Հիշիր ինձ քույրիկ ախ անուշ քույրիկ
Հիշիր թե ինչպես ես քեզ սիրեցի
Անքուն գիշերներ մենակ ու լռիկ
Քո կյանքի համար ջերմ աղոթեցի
Հիշիր թե ինչպես իմ տանջանքներից
Քո քաղցր անունով երգեր փնջեցի
Վառ ծիածանը ամպերի մեջքից
Խլեցի բերի քեզ համար գոտի
Հիշիր թե ինչպես իմ արցունքներից
Պսակ փնջեցի քույրիկ քեզ համար
Աստղիկ ու լուսնյակ քեզ զարդեր բերի
Քեզ նվեր բերի սիրտս վշտահար

1893 սեպտեմբերի 21
Լայպցիգ

* * *

Ես չեմ ուզում արև ցոլա
Ամպը նազե երկընքում
Վարդի ցողում ցողը շողա
Հովը սուլե այրերում

Ես չեմ ուզում ոսկի աստղունք,
Մարմանդ ծովի օրորանք
Փարթամ ծառեր, ճոճուն ստվեր
Թըռչունների գուրգուրանք

Է լ չեմ ուզում կյանքը վըխտա
Հոգնած երկրում — ամեն տեղ
Օ հերիք է մարդը սողա
Ծերուկ երկրում — ամեն տեղ

Տիեզերքը թող շունչ դառնա,
Թող ծավալվի լռություն
Ա խ ես ցընդվեմ սիրտըս հովնա —
Անվերջ հավերժ անդորր քուն

1894 թ 5 օգոստոսի
Լայպցիգ

* * *

Եվ ես կյանք մտա
Մաքուր, ջինջ հոգով ջերմ ողջունեցի
Ընկեր ու եղբայր — այս բոլոր մարդկանց
— Ահա իմ սիրտը ասացի նրանց
Թող ձեր մեծ հսկա բյուր սրտերի հետ
Միասին բախե, թող մի սիրտ լինի
Եվ ես տանջվեցի նրանց տանջանքով
Նրանց ցավերով հալումաշ եղա
Բայց երբ ես հիվանդ անհույս վայր ընկա —
Նրանք ինձ մենակ երեսի վրա
Գցին հեռացան

1896

* * *

Այն վառ երազ էր
Մաքուր հավատով ես քեզ սիրեցի
Սուրբ ցնորքներով լուռ աղոթքներով
ես քեզ պաշտեցի
Հոգիս տոգորված անհուն վեհությամբ
Քո չքնաղ կրծքում այդ սրբարանում
Կյանքիս իդեալը վսեմ իդեալը
ես օրհներգեցի
Բայց երազն անցավ
Դառնությամբ տեսա որ իմ ջերմ պաշտած
Աստված իդեալս կուռք էր կույր կրքի
Եվ երազն անցավ — սոսկ կուռք էիր դու

/1896 1898/

* * *

— Գիտեմ խաչըդ ծանր է հսկա
Ո վ մարդ ընկեր եղբայր իմ
Քեզ մոտ քեզ մոտ կուգամ ահա
Կրծքիս սեղմեմ արտասվեմ
Ես էլ քեզ պես օր ու գիշեր
Անհուն անհույս տանջվել եմ
Տուր ձեռքդ ինձ անգին ընկեր
— Հառաջ հասավ ժամն արդեն
— Հառաջ գնա հպարտ տոկա —
Խաչըդ խարիսխ կըդառնա

1896թ Նոյեմբեր
Երևան

## Ա Խ  Ե Ր Ն Ե Կ

Ա խ  երնեկ թե կյանքիս գնով
Ազատ լինիմ մեն մի օր
Ազատ... վայրի եղնիկի հետ
Ընկնեմ մենակ սար ու ձոր

Վառ արևի շողքը ոսկի
Կսկուծ խմեմ ու ծծեմ
Անուշ երգով սիրտս բանամ
Լալ ու լազուր երկնի դեմ

Ջառ ու զարբաբ ծաղկանց վրա
Լուռ ծմակի խորքն ընկնեմ
Ջան, աղբուր ջան  քեզ հետ սրտանց
Գրկեմ ծառերն, արտասվեմ

1897 մարտ
Երևան

* * *

Երնեկ ես էլ ալ թիթեռներ
Ձեզ պես թռնեմ վար ու վեր
Չքնաղ ծաղկից ծաղիկ ցողուն
Ոսկի ցոլքից աստղ ցողում

Սիրտըս բանամ դեմ զով ծովուն
Վիշտըս տանի հովը ծովուն
— Ձեզ պես երգեմ կյանքի երգը
Սիրեմ ինձ ու իմ կյանքը

1897 հուլիսի 4
Ալեքսանդրապոլ

* * *

— Ինչիս է պետք սազն ու շըվին
Բյուր լարերով սիրտ ունիմ
Անսիրտ փետ են սազն ու շըվին
Արնո՛տ բոցո՛տ սիրտ ունիմ

— է յ ջան հա ջան իմ սըրտի մեջ
Արար-աշխարհ տեղ ունի
Առուն ու ցող կայծակն ու շող
Սերն էլ սուրն էլ ցոլք ունի

— է յ ջան հա ջան իմ սըրտի մեջ
Վարդն էլ աստղն էլ փելք ունի
Ու մով ծովեր արև-աչեր
Ծիածանն էլ ծալք ունի

Ես սիրտ ունիմ քարայրի պես
Անչափ անծեր — տակ չըկա
Ամեն մի շունչ ձեն ու ծըպտուն
Սըրտիս խորքում ձեն կուտա

1897 սեպտեմբերի 25
Բագարան

## ԻՄ ԲԼԲՈՒԼԻՆ

— Բլբուլ արի — ասում եմ
Բլբուլ, արի — ասում եմ —
Բլբո՛ւլ, հետդ խոսում եմ
Քեզի կասեմ վարդ մի սիրե
Սիրտ կըծակե փուշ ունի
Մով մանուշակ մենակ սիրե—
Նուշ քսքուշ է փուշ չունի

1897

* * *

Էս սարերի սիրուն լալեն,
Եղնիկ, ասա, ո՞ւր է, չըկա
Խաբրիկ կուզեմ քարեն, քոլէն,
Ո՞ւրտեղ գնաց ո՞ւր է, չըկա

Աստղի ցոլքով գիշերն իջավ
Թող տո՛ւր բալաս արորը,
Դար ու դարափ խոր քուն մտավ
Հոտը իջավ մութ ձորը

Հովը բարակ կը շընկշընկա
Էրված սիրտըդ զովին տուր —
Արի գիրկըս քունըդ կուգա,—
Սրտիդ, դարդիդ դադար տո՛ւր

Փըչե քամի զով քամի
Սիրտըս դարդի ծով քամի
Ես էրվում եմ, հով էրա
Սիրտըս մըտի զով էրա

/1897/

* * *

Մանկուց գիտեմ որ ամեն մարդ
Մի աստղ ունի երկնքում
Որ անբախտի աստղն է անփայլ
Բախտավորինը — բոց փայլուն

Մանկուց աչքս քցած երկինք
Ես իմ աստղն եմ փնտրեր —
Ու չեմ գտեր — անսեր աղջիկ
Աստղս դուն ես դու մարիր

/1898/

* * *

Սրտիս վրա մի վարդ ամպ կա
Նրա այն նուրբ շուքի տակ
Քնքուշ սիրտս մեղմ կըհևա –
Սիրտս ամպով գոց ու փակ
Վարդ-ամպի մեջ շատ արցունք կա
Այն սրտումս է միշտ ծորում
Ու իմ սիրտը լուռ կըծփա
Նրա անուշ ցողերում

1898

* * *

Հազար ու մի ցավ եմ քաշեր —
Քաշը ծանըր էր աշխարհեն
Սիրտըս թեկուզ սար քար լիներ
Կը ճեղքվեր մեջտեղեն

Հազար ու մեկ էն ցավերեն
Մեկ ցավ մնաց սրտիս մեջ
— Ա խ էն սիրուն սև աչերեն
Ջուլում ցավն է սոտիս մեջ

1898

* * *

Ա խ ընկեր իմ ֆինչ ես փնտրում
Իմ վշտահար խեղճ սրտում —
Սիրո գարուն ոսկի անուրջ
Թե ճոխ երգեր ծաղկանց փունջ

Է հ հանգիստ թող հիվանդ սիրտըս
Ուր որ միայն պիտ գտնիս
Ցնդած ցնորքս ու մրմոքըս
Ու սառն աճյունն հույսերիս

1898

* * *

Քնքուշ սրտով ես սիրեցի
Լուռ ու խորունկ ծով-աչեր
Վշտով ցողված արցունքով լի
Սև ու սիրուն հեզ աչեր

Ա խ աչերը սեր խոստացան —
Սիրտըս ցոլաց աստղի պես
Վախ աչերը ինձ մոռացան —
Սիրտըս մարավ աստղի պես

1898

* * *

Հավատս հանգավ
Ա խ, աշնան դալուկ տերևների պես
Հույսերըս մարան հույզերըս մարան
Է լ չեմ արտասվում եվ, ընկր գիտես
Թե սիրտըս այնպես սառույցի նըման
Կըրծքիս տակ մեռավ
Ոգևորության չկա մի հնչյուն
Չկա մի թույլ կայծ այն վառ հրդեհից
Ես էլ չեմ ապրում

1896 1898

* * *

Չանչված սիրտս քո առջև բացի
Ինքուշ երգերով լացի սուրբ սերս
Ցնորք սիրեցի ստվեր սիրեցի —
Քեզ իմ ուրուհի քեզ իմ հրեշտակ
Հոգով սիրեցի
Սիրվ ու վշտով թաթախված սիրտս
Ափռեցի քույր իմ սուրբ ոտներիդ տակ
Ամպ անգին ընկեր ընկեր նազելի
Դուն հի՛ չհասկացար ու թողիր մենակ

/1896 1898/

* * *

Եվ այս մըռայլ, խոլ աշխարհում
Այս քար ու փուշ ուղիով
Դեպի արևն եմ ես վազում,—
Արևը վառ — լույսի ծով

Եվ ստվերըս ծանր ու թանձըր
Գիտեմ կըգա իմ հետքից —
Հոծ ամբոխը ծանր ու թանձըր
Գիտեմ կըգա իմ հետքից

1898 թ 12 մարտի
Ալեքսանդրապոլ

* * *

Երկինքը ջինջ  թարմ ու անուշ
Բույր կշընչեր սրտիս մեջ
Եվ աստղերը հեզ ու քնքուշ
Երգ կասեին սրտիս մեջ

Բայց ախ  հիմա երկինք դարձեր
Նման մռայլ քարայրին
Աստղերն ամեն համբր ու հանգեր —
Սիրտըս  սիրտըս — լուռ շիրիմ

1898 մարտի 12
Ալեքսանդրապոլ

* * *

Թե իմ բախտը աստղիկ լիներ
Աստղերի մեջ խոր երկնքի —
Կըթռնեի ամպերից վեր
Որ նրան տեր դառնայի

Ու երնեկ չէր որ իմ բախտը
Մարջան լիներ ծովերի —
Կըսուզվեի էն մութ խորքը
Որ նրան տեր դառնայի

Բայց իմ բախտը դուն ես սիրունս
Քու ժեռ սիրտը անզգա
Որ օձ ունի իր ծերպերում
Դալար կյանքիս թույն կուտա

1898 ապրիլի 21
Կերչ

* * *

Լալկան ուռին մեղմ կը խշշա
Ծովի ափին ժեռ ափին
Լուռ թառեր է ճուղքի վրա
Վայրի տխուր աղավնին
Աչքը քցած հեռու տեղեր
Աղավնին խոր կըթախծե
Ա խ հասկացա— վայրի ընկեր
Բախտդ իմիս նման է

Քեզ էլ դաժան հյուսիս քամին
Ինձ պես արավ բնավեր
Ընկավ կոտրավ հպարտ կաղնին —
Հայրենիքիս սրբանվեր

Արի, ընկեր, իրար հյուսենք
Մեր սրտերն ու երգերը
Հպարտ մենակ լուռ թափառենք
Այս ժեռ օտար ափերը

1898 մայիսի 18
Օդեսա

## ՈՂԿՈՒՅԶ

Այգեպանը բահը առեր
Վարդի տակը կփորեր
Խեղճ բլբուլը վարդի սիրուն
Վիզը առաջն էր դրեր

ես ծով երկնուց խաս հավքմ էի
Որ ցած իսկի չէի իջնի
Ա խ տես հիմի ոտքդ եմ ընկեր
Ծով սրտովս նազանի

է յ դուն երկնի վառ վառ արի
Հերիք կայնիս ինձ երես
Հերիք երթաս ամպի հետև
Սիրտս շուքով սուգ անիս

Դուն նշխուն նուռ կանանչ թփով
Ես քու թուփդ եմ նունուշս
Դուն կարմիր վարդ զառ տերևով,
Ես տերևդ եմ անուշս

Ա խ, վախնամ թե աշունը գա,
Քեզի քաղեն հոգի ջան
Ես թուփ-տերև մնամ չորնամ
Ա՛խ, Դուն հոգուս հոգի ջան

Ա խր քեզնեն խռովեր եմ
Ուրիշ երամ եմ մտեր
Ոսկե վանդակ էլ որ շինես
Էլ չես կրնար ինձ պահեր

Քու կարոտդ շատ կքաշեմ
Քովս չես գա Էյ նազլուս
Հեչ չէ տեղդ վարդեր դրկե
Պագեմ դնեմ աչերուս

1898 Հուլիս
Կերչ Օդեսա

## ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Քիչ կը մնա սիրտս պատռի
Խելքս կորցնեմ այ ախպեր
Գլուխս առնեմ սարերն ընկնեմ
Գոռամ բոռամ ջան սարեր

Թե որ դարդս կիասկնաս
Չեն տուր սազիդ, ախպեր ջան
Էրված սիրտս սազիդ հետ լա
Դարդս հալվի հովանամ

Տուն ու օջախս էն ինչ թողի
Քամու բերանն ընկա ես
Քարե արուն արցունք լացի
Գնաց գարունն իմ սրտես

Զարկ թևլերին աչուղ ախաեր
երգերն անուշ թող խոսան.
Մ՛խ վաղուց ի որ չես լացել
Էսպես սրտանց ախպեր ջան

1893 հուլի ի 5
Օդեսա

* * *

Կընճիռներն այս վեհ հըպարտ ճակատիս
Գիտեմ ընկերներ ձեզ հաճելի չեն
Խորքից եմ գալիս խորն է իմ հոգիս
Եվ ես ձեզ օտար օտար եմ արդեն

Պըսակն այս վըսեմ ճակատիս խոժոռ
Իմ ազատ անհաղթ միտքն է հյուսել —
Տառապանքի մեջ իմ միտքը հըզոր
Որ գիտե ծաղրել սըրբությունը ձեր

1898 հոկտեմբերի 27
Օդե ա

## ԸՆԿԵՐԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Սև ամպերին ամպամ էլ հասավ
Ուռիները լուռ կուլան
Ա խ դարդերիս դարդմ էլ հասավ —
Ո՞ւր ես ազիզ ընկեր ջան

Արևն ընկավ ծովի խորքը
Սև մութ շուքը ծովն առավ
Ա՜խ ընկեր ջան, ծաղիկ թոռմար
Քու սև սուգը սիրտս առավ

Գերեզմանդ հողին հավսար
Կորար չընկաս հոգի ջան
Հիմա քամին վրեդ կուլա
Չես իմանում ընկեր ջան

1898
Օդեսա

* * *

Երկաթե ցուպ ձեռըս առնեմ
Աշխարհի ընկնեմ մեն մենակ
Կորած բախտըս ման գամ գտնեմ
Աշխարհի մեջ մեն-մենակ

Սար ու ձորեր, քուր ու ախպեր
Բախտըս չիտճե,— ուր գնաց
Հազար ու մի թագավորի
Թագ կար գլխին, ուր գնաց

Զառ աստղունքով ճակտին կամար,
Ճակտին պսակ,— ուր գնաց
— Ոսկի արևն սրտիս մեջ վառ,
Ոսկի արևս ուր գնաց

/1898/

* * *

Ա խ աչերիս մեջ հուր մի որոնիր
Նրանք շատ վաղուց մարել են, ընկեր
Ծաղիկ հասակիցս ես շատ տանջվեցի
Եվ արցունքը իմ մեծ հեղեղի պես
Սըրտիս մեջ թափվեց
Մարավ իմ հըրդեհն իմ սիրտը ընկեր
Ա խ աչերիս մեջ հուր մի որոնիր

1899

* * *

Շուրջըս ապրում են բյուր հազար մարդիկ
Բյուր հազար սըրտեր բախում են կյանքով
Եվ ինչու՞ սիրտըս — մենակ ու մռայլ
Չի հալվում ձուլվում այդ հսկա այդ ծով
Բյուր սըրտերի հետ
Ես ինչ եմ ուզում
Այս հիվանդ սրտովս մեծ տենչերովս
Ողջ կյանքը տիրել գըրկել հասկանալ
Ա խ ես չեմ կարող
Անզոր եմ անուժ և ամբողջ հոգիս
Որպես մի նըսեմ աշնան խեղճ տերև
Դողդոջուն ընկած բնության առջև

1899

* * *

Տեսա յարս ալ ու վալա
Հագեր, կապեր կերթար ժամ
Ինձ սեր չես տա ինձ պագ չես տա
Ժամդ է հարամ կերթաս ժամ

Դարձիր ինձի ու մեկ պագ տուր
Ժամի սիրուն, նունուշս
Թե չէ խռով որ ժամ երթաս
Մահու մեղք է թութուշս:

1899

## ԵՐԱՋ

Սուսան սարերի շվաքն էր ընկել
Ժայռերի վրա  ձորերի վրա
Հով շվաքի տակ քուն էի մտել
Ժայռերի վրա  վարդերի վրա
Ու երազն եկավ — փերին շողշողուն
Ոսկե թևերով  ամպի քարվանով
Ու ինձի տարավ փարելով գրկում
Փրփուր թևերով  ամպի քարվանով

— Հովիտն է իմ դիմաց, սիրո պես գրկաբաց
Գետն է մար մարմանդ քոչում հեռուներն—
Արորի միջով  արտէրի միջով
Ու հովտի հովն անո՛ւշ  հովն անուշ  հովն անուշ
Անտառը խըշշան խորունկ կըհևա
Մեկ էլ զորքի պես զիլ-զիլ կգոռա
Մեկ էլ մընջի պես անսաս կմարի
Ու մեկ էլ լիակուրծք ինձի ձեն կուտա
Ինձի ձեն կուտա

— է յ  ձիս  սև ձիս եռ կուգա
Ոտքը ժեռին զիլ կուտա
ժեռը կեծ ու պեծ կուտա
— է յ, սիրտս զանգի պես կզընգա
Ծաղկածով գարնան պես կզընգա
Ձիս հեծա ու ճակտեն պագ առա
Քամու պես  արծվի պես զիլ թռա
— Հովիտը զարբաբ ոտքիս տակն առա

Նըխշուն հովիտը վարդերով վառման
Թիթեռ-ծաղիկներ գույնը հազար ու լալազար
Էնտեղ բլբուլը սիրտն է բաց արել —
Ձենն անո՛ւշ, ձենն անուշ, ձենն անուշ
Կրակի պես բոց ու կայծակ սիրուն ձիս
Նազելուս մոտ եղնիկիս մոտ տար ինձ ձիս

— Կանանչ կանանչ լորենի
Ջահել սիրուն լորենի —
Ես էլ քեզ պես կանանչ եմ
Դալար սիրուն լորենի
Յարիս տեղը ինձ ասա
Յարիս սիրած լորենի

— Ջուլալ զանգակ իմ աղբուր
Քաղցրակարկաչ իմ աղբուր
Սերս էլ քեզ պես զուլալ է
Ծաղկապարուր իմ աղբուր
Յարիս տեղը ինձ ասա
Յարիս սիրած իմ աղբուր

— Բարով քեզի ազիզ յար
Ծաղկանց միջին ծաղիկ յար
Արի գիրկըս իմ հոգիս
Դալար կյանքս քեզ մատաղ
Արի գիրկըս թռնենք երթանք
Սարերը զըմրուխտ ծովերը յաղութ
Ծովերը պուրպուր երկինքը լազուր

— Մեր սիրտը մեր սիրով բոցավառ
Աշխարհում երկնքում մեր սիրտը
Կյանքի պես գարնան պես կզընգա
Եղնիկ ջան հոգի ջան մեր սիրտը

1899 հուլիս
Լառն Արագած

## ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՋԱՆԳ
/Նրա ղողանջները/

Եվ գիտեմ գիտեմ, կյանքն է անցավոր
Աշխարհը ունայն, վայելքը վաղանց
Եվ մարդիկ չնչին և կգա մի օր
Կըցնդի երկիրն անհուն ծավալում
Ինչո՞ւ ենք ապրում և կուզենք ապրել
Ի նչ խաղ էր դառն, ինչ ծաղր էր դաժան
Որ աշխարհ եկանք ու պիտի գնանք
Օ ; կուզեմ փշրել երկինք ու երկիր
Ստեղծող ուժից լինել վրեժխնդիր
Բայց ես անզոր եմ և հոգիս լքյալ
Եվ դժնյա մտքեր և անհույս մռայլ

Բայց նորից ահա, լսում եմ ահա
Ղողանջը զանգի տիեզերական
Եվ թրթռում է հոգիս հիասքանչ
Իմ էության մեջ երգեր են վառվում
Երգեո թևավոր, վեհ վսեմական
Եվ ես ճախրում եմ ես ծավալվում եմ
Տեսնում եմ ահա խորախոր գաղտնիք
Խոկման անդունդներ ուժ գերահրաշ
Որով զգում եմ և ըմբռնում եմ
Թե տիեզերքն է մի անվերջ երազ
Շքեղ հոգեզմայլ մի անմահ անուրջ
Եվ գերահրաշ մի անանց ցնորք
Եվ ես բովանդակ ոգված ու շնչված
Տիեզերական անճառ ցնորքով

Եվ որն իմ հոգում դարձած հրեղեն
Մի վսեմ ցնորք մարգարեական,
Ուզում եմ երգել  ուզում եմ սիրել,
Ընդգրկել հոգումս աշխարհ և մարդիկ
Եվ ոգի դարձած հեռուներ թռնել,
Եվ հավերժ խորհել  և հավերժ ապրել

1899 թ 19 հուլիսի

## ԻՄ ՈՒՂԻՆ

Ոլոր ու մոլոր հեռու շատ հեռու
Ուղիս է գընում - անծայր անհատնում
Մըռայլ անորոշ հորիզոնի մեջ
Անվերջ անսահման գընում է կորչում
Եվ անհայտ ուղիս
Անցնում է վայրի խոլ անապատով
Եվ օվկիանի անդունդն է ճեղքում
Եվ կտրում անցնում մըրրկի միջով
Բարձըր լեռների գագաթն է հասնում
Սուզվում թռնում է անհուն երկնքով
Եվ սլանում է
Իմ մըռայլ ուղին հեռու, շատ հեռու..
Եվ մարդիկ որպես ժեռուտ կարծր ափեր
Իմ ուղու շուրջը շարքով կանգնած են
Եվ մարդիկ որպես ամուր պատնեշներ
Իմ ուղու առաջ գոռոզ կանգնած են
Բայց ես ես օձ եմ սև սուր իժ եմ ես..
Եվ գալարվում եմ վառվում ցասկոտում
Դարավոր թույնը հոգումըս լցված
Իմ ատամները նրանց եմ ցըցում
Եվ մարդիկ որպես խարխուլ պատնեշներ,
Հա խորտակվում են ընկնում իմ առաջ
Ետ ետ են քաշվում
Ինձ ուղի բանում ճանապարհ տալիս
Որ թռչիմ հեռու, այն հեռու ափերն
Ուր հասնիլ տենչում է խրոխտ իմ հոգիս

Եվ առաջ կերթամ և եթե նորեն
Ամբոխն ու մարդիկ իմ ուղին փակեն—
Պիտի կըծկըվիմ ես օձի նըման
Եվ անվախ հըպարտ գըլուխըս բարձըր
Սըլաքից արագ ես պիտի թըռնեմ
Ամբոխի վրայով պիտի թըռնեմ ես
Դեպի նըպատակս միշտ հեռուն հեռուն
Եվ իմ հոգուս ժանտ թույնովը դաժան
Ես պիտի խայթեմ և պիտի խոցեմ
Ախոյաններիս խոցեմ պիտի ես

Օհ գընա սլացիր հըպարտ ու վըսեմ,
Դու իմ իժ ոգի
Դըժընդակ ճամբովդ գալարվիր առաջ
Վեհության ուխտի սեգ ճանապարհորդ
Մենիկ ուղիովդ սըլացիր հեռու
Դու ազատության աստվեր-մարգարե
Գնա հեռու հեռու ուր միտք չի հասնում
Ուր մեծ ապագան լազվարթ աստղազարդ
Քեզ իրան քաշում իրան է կանչում

1900

* * *

Ռևնում է քամին
Խիստ բուք է հիմի
Թռղ իմ թշնամին
Անտուն չլինի

Ձյունն եկավ ծածկեց
Իմ ճամբեն անծներ —
Որոնց սիրեցի
Ինձ խորթ են դարձեր

1900 թիվ 2 նոյեմբերի
Քէոթակ /ս սեմանագլուխ/

* * *

Դու ջինջ և հեզ մի թիթեռ ես
Եվ նուրբ և սուրբ թևերով
Սիրտըդ վըճիտ թըրվըռում ես
Գեշ գարշ մարդկանց վըրայով —

Դու որ մաքուր մի թիթեռ ես
Ա խ մեր կյանքի ճահճի մեջ
Պրտի ընկնես — պիտի նեխվես
Գեշ, գարշ մարդկանց մահճի մեջ

1902

* * *

Գուցե իմ հեծծանք հառաչք և մըրմունջ
Շատերի համար հընչյուն ունայն
Տըգեղ դաշնակներ և կամ սառն անշունչ
Սըրտի խուլ թոթվանք կեղծ հընչյուն միայն
Ա խ անգին մայրիկ մայր իմ նազելի
Խոցված հոշոտված հոգիս վիրավոր
Քեզ համար մայր իմ վաղուց է հայտնի—
Անհույս տառապած հոգիս մենավոր
Ու քեզ են հայտնի տանջանքը որդուդ
Արյուն արցունքըս ծածուկ ու գաղտնի
Քո ջերմ կաթոգին սիրած խեղճ որդուդ
Կյանքի մըրըրկով զարնված քո արծվի
Դու ես միշտ վերքիս ցավը ամոքել
Դու ես միշտ լացել ջարդըված կյանքըս
Քո ջերմ հարազատ գըրկումն եմ թաղել
Իմ դարդոտ անբախտ իմ չոր գըլուխըս
Հիմա խեղճ սիրտըս բերում եմ քեզ մոտ
Սուրբ ոտներիդ տակ ու խոր վերքերիս
Վառ մըրմուռները երգերըս արնոտ
Քեզ որպես նվեր, մայր իմ նազելիս
Նայիր դու մեկ մեկ — իմ սըրտից բխած
Այս պըտուղներին հոգի մըտերիմ —
Քո վեհ արցունքով արնով առոգված —
Քեզ հարազատ են քեզ խորթ չեն մայր իմ
Չէ որ իմ մաքուր, իմ քնքուշ հոգին
Քո սուրբ քո վըսեմ հոգուցն է ծորել
Չէ որ դու դըրիր իմ մեջ քո հոգին
Եվ բարին սիրել ու ազնիվ լինել

Դու վառիր իմ մեջ հուրը երկնային—
Գեղեցկի ծարավ անհունի ձըգտում
Կըռիվ չարի դեմ ու ընդդեմ սըտին
Ապրիլ ու տանջվել ուրիշի սիրուն
Դու լըցրիր իմ մեջ ծովի չափ մեծ սեր—
Այրվիլ որ լույս տալ ամբոխի համար
Ընկնիլ փոթորկի հըրաբուխի մեջ
Ամբոխի համար աշխարհի համար

1901 1902

* * *

Եվ հոգիս արթնած, վառված տոգորված
Տիեզերական զանգի ղողանջով
Շրջում եմ մենակ մեծ ամբոխի մեջ
Նոր կըտակներով, նոր պատգամներով
Նըրան օտար եմ, ինչպես խորթ որդի,
Նա հալածում է նա ծաղրում է ինձ
Յուր սրբությանը որպես թշնամի
Բայց վեհ խոհերով թևավոր հոգիս
Ամբոխի ծաղրին ունկն չի դընում
Ամբոխի բախտով հեծում եմ, ցընծում,
Օ անմիտ հսկա ինձ չես ճանաչում

〈1902〉

* * *

Աշխարհը վառ էր անուշ երգերով
Բայց ախ, վաղուց է, որ էլ չեմ լսում,
Եվ սիրտս էր սիրո ու տենչերի ծով
Բայց հիմա լիքը լիքը դառնություն

Աշխարհը լի էր զառ երազներով
Ու սիրտս բաց էր ընկերի համար,
Ես շնչում էի ընկերի շնչով,
Բայց հիմա ամենքն խորթ են ու օտար

〈1900 1902〉

* * *

Իրիկունն եկավ հավքերն առան
Իրենց ձագեր ծըվարան —
— Ա խ երգերըս իմ վերքերըս—
Խեղճ ձագուկներս ուր կերթան

Երթաք բարով հազար բարով
Կյանքիս երգեր ու վերքեր
Ծընաք սընաք սըրտիս արնով
Բարին ձեզ հետ ձագուկներ

Թըռեք անցեք ծով ու սարեր
Հեռու աշխարհ գընացեք
Խորունկ սըրտեր լի դարդ ու սեր
Սըրտիս ընկեր սիրտ գըտեք

Որ էն սըրտերն երգս իմանան
Դարդըս կիսեն ձագուկներս
Դարդ ընկերներ դեղ ու դարման
Վերքիս դընեն ձագուկներս

1900 1902

* * *

Երնեկ ձեզի զըմրուխտ սարեր
Որ միշտ բանձր ու հպարտ եք
Անգութ յարի դարդ չեք տարեր
Որ ինձի պես սիրեր չեք

Ա խ սարեր ջան ես էլ ձեզ պես
Հպարտ էի վեհ ու վեր
Հիմի իջեր ցած գետնի պես
Յարիս ոտներն եմ ընկեր

Ընց որսկանի ձեռքով զարկած
Աղունիկը թըրպըլտալով
Էնոր ոտաց տակն է ընկնում
Էնպես էլ ես նըշխուն սարեր
Սիրո վերքը սըրտիս խորքում
Յարիս ոտներն եմ ընկեր

* * *

Ա՛խ աչերըդ արև ու մութ
Կախարդական երազներ —
Սիրտըս գըրկեր ու կը տանին
Հեռո՛ւ աստղեր, հեռուներ
Ա խ հազար վախ սև աչերըդ
Ուրիշինն են, իմըս չեն

Ծով աչերեդ սև աչերեդ
Դալար սիրտըս սև սևացավ —
Ես սեր տըվի սերըս չառար
Աշխարհեն սիրտըս կըտրավ
Հեյ վախ ու վախ ծով աչերըդ
Ուրիշինն են իմըս չեն

1902›

* * *

Ես լալ կուզեմ երգել տխուր ու թափառել
սար ու քար,
Անհուն դարդս մոռանալու ոչ ճար ունիմ
ոչ հնար
Ու քարեղեն արուն-արցունք սրտիս խորքեն
քամեմ, լամ
Ու թափառեմ մոլոր-մոլոր ու գազազված սար
ու քար
Ա խ աշխարիը անտակ ծով է արտասունքի,
արունքի
Կյանքը ցավ է, կյանքը տանջանք, մահն է
գինը մեր կյանքի
Թե բույս ու շունչ թե մարդ ու հավք տառապում
են անսահման
Ու սև դուռն է գերեզմանի միակ ելքը
տանջանքի
Ու աշխարհի վշտերն ամեն իմ վերքիս
պես եմ գրկում,
Ցավը ամեն բույսի, շնչի մի եղբոր պես եմ
զգում,
Ու լցվում են, հավաքվում են կաթիլ-կաթիլ
սրտիս մեջ
Ուր թափվում է մի շիթ արցունք անապատում
թե ծովում
Սերս սրտիս մեջ քարացավ գարնան
բույրը չեմ զգում
Քնքուշ աղջիկ հազար ափսոս քու նազելի
աչերուն

Ավազի հատն արևի տակ քեզնեն ավել
գին ունի
Դուն կըթոռմիս մոխիր կըլնիս նա դեռ
կապրի քու հողում
Ու աշխարհը ինձի համար դառն ծաղըր
կը թվա —
Վեր կընայիմ վառ երկնքին սիրտս խորունկ
ցավ կը զգա
Է յ վառ աստղեր դուք էսօր կաք վաղը
չըկաք ինձի պես
Այսքան պերճանք շուք և հմայք ինչու համար
ինչու կա
Շատ ցնորքներ իղձեր ունիս սիրտդ
երկինք տենչերի
Սիրել կուզես երգել կուզես ձգտել բույրի
արևի
Բայց աշխարհը անխղճմտանք բայց աշխարհը
դև դահիճ
Վայր է գցում զարնում գետին ճղակոտոր
կես ճամբին
Ա խ մեր ցավերն ու տանջանքը էս աշխարհի
հոգսը չէ
Նրա համար շունչ արարած կա թե չըկա
պետքը չէ
Հազար հազար դժար դարեր մարդիկ տանջվեր
մեռեր են
Ու աշխարհը նըրանց համար մի կաթ արցունք
թափել չէ
Ու մի օր էլ ամեն մի շունչ մարդ ու ծաղիկ
ամեն բան

Իրենց դարդերն հետներն առած կը չքանան
հավիտյան
Բայց աշխարհը միշտ կը մնա ոչ մահ ունի
ոչ ծնունդ
Ո չ վերջ ունի ոչ էլ ըսկիզբ ոչ ծայր ունի
ոչ սահման
Ու իմ աչքիս ողջ աշխարհը ծանր երազ
կը թվա
Անմիտ երազ ու անմիտ խաղ հըրեշային մի
հրաշք
Ինչու ծնան արև աստղեր ինչու ծնան
ու հանգան
Ինչու ծնան մարդ ու տենչեր սեր ու երգեր
ու սև մահ

1903

* * *

Սերն է անկումը մեր աստվածության,
Շրջմոլիկ հուրը կրքերի ճահճի
Եվ ով կարող է օտարին սիրել
Կամ մերձավորին անհուն անսահման
Ուրիշին սիրել իրենից ավել
Ընկերին սիրել — պատրանք է միայն

Եվ ով կարող է զգալ ուրիշին
Որպես իր եսը հասկանալ նորան
Ա խ, մենք ապրում ենք իրար անծանոթ
Օտար ու հեռու՝ աստղերի նման

Եվ բյուր երանի ով երազ ունի
Իր հոգու խորքում, սրբության խորքում
Մի շքեղ երազ, որով նա կապրի
Աշխարհից հեռու, բյուրեղ բարձունքում

〈1903〉

* * *

Ցուրտ է ու գիշեր
Միգամած սարից
Կարշավե՝քամին
Պաղ ու բքաբեր
Ա խ, ինչպես աշնան
Ծաղկունքը թոշնան
Հողմից ցրտահար
Ինչպես անտառի
Շավիղը դալար
Ծառի, մացառի
Չորցած ու դեղին
Տերևների տակ
Թաղվեց ու կորավ
Շավիղը մենակ,—
Այնպես էլ կորավ
Զվարթությունս
Զվարթությունս
Ա՜խ, անդարձ կորավ

1904 ապրիլի 30
Մոսկվա

* * *

Վեհ ընկերներս կռվի դաշտ թռան
Ջոհ տալով իրենց սրբազան հոգին
Իսկ մյուսները մեկ մեկ հեռացան
Եվ կյանքի ճամբով քաշվան գնացին

Օր օրի վրա փակվում են իմ դեմ
Սրտեր ու դռներ վաղեմի սիրած
Ախ մնաց մենակ սիրտը մայրենի—
Մի մաշված ծերուկ մի սիրտ տրորված

Ուր դնեմ դարդուս րմ չոր գլուխս
Կյանքի մորիկով զարնված թռչուն—
Ուրիշի նման բույն չշինեցիր
Եվ հիմա անտեր ու որբ մնացիր

Ուր ուղղեմ հոգնած քայլերս հիմա—
Մեջքիս պես կոտրավ ցուպս պանդխտի
Հավատս հանգավ ուժ կորով չկա—
Չկա թռիչքը առնական սրտի

Փշոտ ճանապարհ ժեռոտ ճանապարհ
Տար ինձ անապատ հեռու ամայի —
Ու անապատում թող մնամ մենակ
Տխուր փայլփլող ինչպես մի կրակ

Ամեն կողմերի հողմերի դիմաց
Այսօր կամ վաղը մարող մի կրակ
— Փշոտ ճանապարհ ժեռոտ ճանապարհ
Տար ինձ անապատ հեռավոր օտար

1904 հունիսի 30

* * *

Այսպիսի դառն դաժան օրերում
Երբ գաղափարի, ոգու անունով
Ջազրելի մարդիկ հանդես են ելնում
Եվ իրենց գծուծ ցած հաշիվներով
Խաբում են թշվառ ամբոխին խաբում
Ե վ խիղճ ու ամոթ թռիչք անձնվեր
Ե վ սրբազան վիշտ այրող արցունքներ
Բոլորը ծաղրած ոտի տակ տված
Ստոր գաճաճն է լիրբ հաղթանակում —
Իմ մաքուր ոգի տառապած ոգի
Մի հուսահատվի, երբեք մի լքի
Ազնիվ սուրբ գործը չի մեռնում երբեք
Ճշմարիտն է ուժ անկեղծն է հզոր,
Եվ ժողովրդի ցավերի համար
Տուչորուն ոգին ամբոխից մի օր
Կգնահատվի, գիտեմ անպատճառ
Եվ նենգավորի ճակատը լկտի
Թուքը կընդունե նշավակության
Գնա իմ ոգի սլացիր անշեղ
Սուրբ ճշմարտության ուղին վեհության
Սրով հրեղեն և խոսքով ահեղ
Ջախիր ջախջախիր խոչընդոտներին
Եվ մի կարեկցիր և մի ետ նայիր —
Դու հավատում ես ոգուն և լույսին
Դու հավատում ես և ճշմարտության
Ե վ գեղեցկության վեհ հաղթանակին
Արշավե թռիր առաջ անհողդողդ

Եվ թող քայլերդ, թռիչքդ դառնան
Անսայթաք ու կուռ երկրում և երկնում
Սլացիր հասիր կատարելության,
Եվ մեռիր Աստծու ձեռքերի վերա

〈1904〉

* * *

Ո վ ազատություն աշխարհի արև
Ոգիներն ամեն՝ ըմբոստ ու հզոր
Թիթեռների պես վեհ սավառնաթև
Ճախրում են սուզվում քո մեջ սիրավառ
Ու բորբոքում են հուրդ նորինոր—
Իրենց այրումով ոգիներն հզոր
Աշխարհի արև ով ազատություն
Քեզնով է շնչում մարդկությունն ամեն —
Քեզնով է կյանքը ծաղկում ստեղծվում —
Եվ փառք հավիտյան հզոր ու վսեմ
Վեհ ոգիներին որոնք պահում են
Անշիջանելի արեգակը վառ
Իրենց այրումով անվերջ ու անմահ

1905

## ԱՐՄԵՆԱԿ ԱԼԽԱԶՅԱՆԻ ԱՆՄՈՌԱՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մտքիդ պես տխուր մռայլ ու անհայտ
Գնում է կյանքի ուղին ահավոր
— Դարերի ճամփորդ դու տառապած մարդ
Ո ւր պիտի հանգի տենչանքդ հզոր

Գեղեցիկն ու վեհ բարին բացարձակ
Սոսկ պատրանքներն են հոգու քո հպարտ
Ոչնչությունն է կյանքի նպատակ
Ա խ հանգիր հավերժ ով տառապած մարդ

1907

## Մ-Ի ՀԻՇԱՏԱԿԻՆ

Դու երջանկության բաժակն ոսկեղեն
Զարկիր, փշրեցիր կաթիլ չմնաց
Հպարտ կանգնեցիր բռնության ընդդեմ,
Հպարտ կանգնեցիր և մահի դիմաց

Եվ փոթորիկ կար քո հոգու խորքում—
Հզոր ահավոր և տարերային
Երկիրը ցընցել էիր ցանկանում
Եվ հոգիդ պայթել աշխարհի գլխին

Բայց մնաք բարով կյանքի ընկերներ,
Նրան մոռացեք, նրան մի հիշեք
Հիշատակներին չարժե հավատալ,
Հեռացար, մեռար — էլ չընկաս երբեք

Եվ դու նրա սեր նազելի երազ,
Քո նոր բախտի հետ դու անուշ ապրի,
Զարդված բաժակից կաթիլ չմնաց
Բայց քո վայելքը նա չի խանգարի

〈1907〉

* * *

Իմ սիրտը թունոտ իմ սերը ատող —
Զզվում եմ գարշում մարդկանցից բոլոր
— Հավքերը վայրի շարքերով չըվող
Խորհուրդ են նստել լճի շուրջ-բոլոր

Ուզում եմ խածել բըզկտել մարդկանց
Ուզում եմ թքել բոլորի վըրա
— Շարժում են ահա թևերը անսանձ
Թռչում են վայրի հավքերը ահա

Վերցրեք ինձ ձեզ հետ քաշ տվեք ձեզ հետ
Մարդկանց երեսից տարեք ինձ հերու
Տարեք գցեք ինձ կորցրեք անհետ
Հեռու անապատ ու ծովեր հեռու

1908›

* * *

Նազուկ լուսնի մեղմ շիթերը ծորեցին
Հովը սիրուն ծաղկունանց մեջ թագ կացավ
— Ախ լսեցի ծաղկունքն անուշ երգեցին
Մի ջինջ վերհուշ սրտիս միջով հեզ անցավ

Հույսերս ամեն դարձան պատրանք խաբուսիկ
Սերս քնքուշ ծաղկի նման թառամեց
— Ապրում էի ինչպես անտուն մուրացիկ
Ննջած սրտիս հուշերն ով հուզեց

Ստվերները ձորերն ի վայր սահեցին
Խոռոչներում այրերի մեջ պահ մտան—
Անտես անհայտ ո՛ւր գնացիք ստվերներ —
Իմ ընկերներ իմ երազներ իմ սուրբ սեր

1908

* * *

Դու ինձ ասացիր — հեռացիր գընա —
Եվ անապատում այրվում եմ հիմա
Հողմերը բոցոտ ճակատս են կիզում
Հողմերը շուրջըս ավազ են դիզում
Բայց երանությամբ ապրում եմ քեզ հետ
Վառ երազիս մեջ ծով աչերիդ հետ
Թող բարկ ավազը ինձ շիրիմ դառնա
Թող վիշապ քամին իմ վրա ոռնա
Ինչ կա ավելի վեհ ու սրբազան
Մեռնել քեզ համար քեզ համար միայն

1909

* * *

Գարունն է ծաղկել իմ շուրջը հիմա,
— Այդ վառ բուրմունքն է ծով-ծով մազերիդ
Արմն է ժպտում իմ սրտի վրա
— Այդ հուրհրանքն է հրաշք-աչերիդ

երկինքը փռվեց իմ այրվող հոգում
Իմ սրտի բոլոր լարերը զարթնան
Թող ինձ իմ արև դու իմ պերճ գարուն
Բոլոր լարերով քեզ երգեմ միայն

〈1910〉

* * *

Մարդկանց խոսքերին էլ չեմ հավատում,
Հոգիս գիշատվեց սիրո կեղծիքից,
— Ես կուզեմ հանգչել լուռ անապատում,
— Ես կուզեմ հանգչել բոլոր ցավերից

Հոգնել եմ արդեն շա՛տ սիրելուց,
Ես կուզեմ հանգչել կույս-անապատում
Ես շա՛տ ատելուց զզվել եմ վաղուց
— Եվ էլ չեմ սիրում, և էլ չեմ ատում

〈1910〉

* * *

Հեծկըլտող քամին հեծկըլտող քամին՝
Թևը վիրավոր
Եկավ ու փարվեց եկավ ու փարվեց
Սրտիս վիրավոր

Ես բախտի բույրին ես բախտի բույրին
Կարոտ մնացի
Սիրո համբույրին սիրո համբույրին
Ծարավ մնացի

Օրըս լալազար օրըս լալազար
Մանկուց սևացավ
Ախ երազներիս ախ երազներիս
Գարունը անցավ

1910

* * *

Գիշերը պատեց իմ դուռն ու երդիկ
Եվ օրեր կանցնին ու չի լուսանա
— Իմ քնքուշ մանկիկ իմ սիրուն մանկիկ
Մի դիպչիր սրտիս — փշրված է նա

Իմ գլխին պայթեց բախտի գոռ մրրիկ
Ու տունս դարձուց տխուր վերանա
— Իմ անուշ մանկիկ իմ սիրուն մանկիկ
Մի դիպչիր սրտիս — փշրված է նա

Կուգան ու կերթան ճաճանչ ու ծաղիկ
Ա խ միևնույն է ինձ համար հիմա
— Իմ քնքուշ մանկիկ իմ երազ մանկիկ
Մի դիպչիր սրտիս — փշրված է նա

1911

* * *

Անուշ անուշ քրքջալով
Աղջիկները դաշտի միջին
Քաղում էին շող մատներով
Ոսկի նարգիս դաշտի միջին

Մատաղ սիրտս կոտրեց անցավ
Էն աղջիկը ոսկի մազով
Անհոգ խաղով կոտրեց անցավ
Անուշ-անուշ քրքջալով

1912 11 հունիս
Կ Պոլիս /Ծովի վրա/

* * *

Երեկ գարուն էր
Աշուն է այսօր
Ե՞րբ դեղին դարձաք,
Կանանչ տերևներ

Այն դեռ երեկ էր
Ես պայծառ մանուկ
Թռչկոտում էի
Դալար ծառն ի վեր

Այն դեռ երեկ էր,
Սրտով սիրավառ
Ես փնչում էի
Երազ ու երգեր

Եվ հիմա ուղիս
Կիսել եմ արդեն
Ձերմակն է հյուսվել
Իմ սև մազերիս

Երեկ գարուն էր,
Աշուն է այսօր
Ե րբ դեղին դարձաք,
Կանանչ տերևներ

〈1912 1913〉

* * *

Իմ սիրուն մանկիկ ննջում ես մուշ մուշ
Բարձին ցան ու ցիր մազերդ քնքուշ
Ոսկի ժպիտ է խաղում շրթունքիդ
Ոսկե երազ է համբուրում հոգիդ

1910 ական թթ առաջին կես

* * *

Այս հովը մեղմիկ
Որ քնքշաբար
Շոյում է գգվում
Մազերըդ հիմա
Չի գալիս, արդյոք
Մեր հայրենիքի
Արնոտ դաշտերից

〈1910 ական թթ երկրորդ կես〉

* * *

Ձյունն է եկել, ծածկել հիմա
Ճերմակ ճերմակ խաղաղությամբ
Դաշտեր գյուղեր տխուր, ավեր
Հայրենիքիս

Անհուն անծիր տառապանքով
Զարհուրանքով եղեռններով
Հազար ու բյուր հազար ու բյուր
Մայր ու մանուկ եղբայր ու քույր
Մեռան իրենց արյունի մեջ —
Զարհուրանքով, եղեռններով
Անհուն անծիր տառապանքով

Եվ ձյունն հիմա ծածկել է լուռ
Ոսկորները նրանց անթաղ
Ճերմակ ճերմակ խաղաղությամբ

1918

* * *

Դիր կրծքիդ տրտում
Ճակատս այրվող —
Ատում եմ մարդուն
Դրժող ու դավող·

Գիտես նազելիս,
Ոսոխը դաժան
Դարձրեց մեր տունը
Արյունի հնձան

Արյունի հնձան,
Ուր նենգ թշնամին
Ջնջեց ու ճմլեց
Մեր մանուկներին

Աշխարհի բոլոր
Գայլն ու բորենին
Տես, նախանձում են
Մեր դահիճներին

Տես, կարմրել են
Կարմրել շառափով
Երկնի աստղերը
Մեր ծով արյունով

Անհույս է հոգիս
Գինի տուր գինի—
Քաղցր մահաբեր
Թող հոգիս քնի

23 հունիսի 1919
ժնև

* * *

Օտար աշխարհում ստրուկ ու գերի
Թառամեց անցավ իմ կյանքը մատաղ
Ա խ ոչ մայր տեսա ոչ սեր ընկերի
Սրտիս մեջ արցունք աչքիս սուտ ծիծաղ

Կռունկ ջան կռունկ թռցրու ինձ քեզ հետ
Տար իմ հայրենի երկիրն հեռավոր
Մեր արևի տակ ախ գոնե մեկ օր
Շունչ առնեմ ազատ մեռնեմ բախտավոր

1919 1920

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Ասին գնացող մեկը կա Մոսկվա
Ու քեզ մի նամակ գրել ուզեցա
Առաջին էջը նոր էի սկսած
Որ հյուրեր եկան ու կիսատ մնաց

Բայց երբ առավոտ թերթը ձեռքս առա
Քո մահվան բոթը սոսկումով տեսա
Սիրտս կսկիծով այրվեց շանթահար
Միթե իրավ է միթե դու մեռար

Ա խ ինչքան բաներ կուզեի ասել
Չէ որ վաղուց է քեզ չէի տեսել
Այդ ո՛վ հանդգնեց հանճարդ շքեղ
Հանգցնել հոգուդ աստղերը բյուրեղ

Զգացումների դու լույս-շատրվան,
Դու՛, ոսկի հեքիաթ երազ դյութական
Միթե դու չկաս միթե դու մեռար
Անմահ գեղեցկի իշխան սիրահար

Ինչո՞ւ է ծագում արևը կյանքին
Ինձ ծաղր է թվում և տաղտուկ և սին
Ամեն ինչ ունայն
Ընկեր իմ անգին
Իմ վաղուց սիրած հոգի մտերիմ
Ո չ, դու չես մեռել, քո գիրքը ահա
Հրաշք երգերդ իմ կրծքի վրա

Կարդում եմ անդուլ և մարգարտաշար
Քո սուրբ տողերից լսում անդադար
Զայնդ անուշիկ, քո պատկերդ հեզ
Առջևս է կանգնում, համբուրում եմ քեզ
Խորունկ կարոտով
Բայց ասա ինչո՞ւ
Այսպես շտապով հեռանում ես դու,
Ա խ ասա երբ ես դու ինձ մոտ գալու
Միթե իրարու էլ չենք տեսնելու
— «Կյանք տխուր հովիտ հավիտյան լալու »

1920 մարտի 19
ժնև

## ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դու երկնամերձ իմ հայրենիք դու հինավուրց իմ Հայաստան
Անմահ բանի սպասարկու խորհուրդ խորին իմ Հայաստան
Դու ալևոր տեսիլների աստեղազօծ իմ Հայաստան
Եվ նոր խոսքի ավետաբեր հազարավերք իմ Հայաստան

Սաղավարտներ դրած կանգնած քո լեռներդ կուռ երկաթի
Արորներըդ արյունազանգ արդարության ցորեն արտի
Երդիկներիդ ծուխերն անուշ նվիրական Նավասարդի
Հին օրերի երգ սրբազան սեղան զոհի իմ Հայաստան

Քո գետերըդ տեգ սուրացող ազատատենչ կամուրջ քանդող
Քաղաքներիդ մոխիրներից ծլած վարդերն արյուն բուրող
Շարականներըդ հոգեբուխ շինականիդ երգը՝ լացող
Հին սերերի նոր կարոտի ոսկի բամբիռ իմ Հայաստան

Դստրիկներըդ քո փափկասուն անապատի գայլերին կեր
Որբուկներըդ մերկ ու ծարավ սովալլուկ մահի ընկեր
Բախտիդ վրա ծափ ու ծիծաղ սփոփանքի ունայն խոսքեր
Նոր հույսերի նոր երգերի երազաբույր իմ Հայաստան

Բարեկամներից վաճառված անիրավված իմ հայրենիք
Ոսոխներիդ կըրունկի տակ ավերակված որբ հայրենիք
Սարսափներով եղեռններով հավերժացած հին հայրենիք
Արյունիդ մեջ սուրբ իրավունք հոգիդ արև իմ Հայաստան

Կըռունկներըդ համբավ տանող պանդուխտներիդ աշխարհալած
Նահատակված տաճարներիդ գմբեթները երկնասլաց,
Մագաղաթներդ արյունաներկ ձայն հեծության հառաչանաց
Հընուց ուխտի վըկայարան ավանդատուն իմ Հայաստան

Ծիրանավոր քաջ Մասիսըդ սպարապետ քեզ պահապան
Ծերուկներըդ ճակատագրիդ ճամփաների սուրբ օրհնաբան
Նոյ Նահապետ աստվածատես ածուներիդ վեհ այգեպան
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հընձան իմ Հայաստան

Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհներգըված
Լուսավորչի լույս կանթեղով երկինքներըդ լուսերանգված
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած
Հըրաշափառ քո Հարությամբ նորամանուկ իմ Հայաստան

1921
Վենետիկ

* * *

Ես որ մեռնիմ ինձ կըթաղեք
Խնձորենու շուքի տակ
Որ գարունքին շիրմիս ծուփ գան
Ծաղիկները սպիտակ

Եվ ամառը աղջիկները
Վերաս կանգնին երգելով
Քաղեն լեցնեն գոգն ու ծոցը
Կարմիր, կարմիր խնձորով

Ու աշունքին սիրուս նման
Մեռած լացած մի երազ
Տերևները դալուկ դեղին
Իջնին մեռնին իմ վերաս

Երբ ձմեռ գա լռիկ ու հեզ
Բյուրեղները ձյուղերեն
Շիրմիս կաթեն արցունքի պես
Մենության մեջ ձյունեղեն

1919

* * *

Միշտ երկրե երկիր ինձանից հեռու
Թափառում էիր երբ ողջ էիր դու
Բայց մոտըս եկար քո մեռած օրեդ
Հիմա անբաժան շըրջում ես ինձ հետ

1922

* * *

Այս աշխարհը անմիտ խաղ է ու երազ
Խելքը չըլնի, ոչ իմանաս, ոչ էլ լաս
Ամեն ապրող վերքիս մեջ աղ կը մաղե
Ամեն մեռնող սիրտըս հետը կը թաղե

1922

* * *

Դու իմ սիրուն աղավնի,
Երնեկ քեզ պես լինեի
Թևերս արձակ ու ազատ
Թռչեի սար, դար ու դաշտ,
Արեգակի շողերում,
Ծաղիկների ցողերում
Թռվռայի լողայի
Ու միշտ քեզ հետ լինեի

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Մի ոսկե թռչուն անցավ երգելով
Իմ հոգու խորքից,
— Ա՛խ, ձայնը նրա այնպես հոգեթով
Լավ ծանոթ էր ինձ

Ա՛խ, ձայնը նրա  լազուր երազներ
Շնորհեց հոգուս
Քեզ հազար ողջույն, իմ սուրբ, իմ նոր սեր,
Նորոգ արշալույս

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Ա՛խ այնպես մեղմագին, անդորրիկ,
Հնչում էր այն երգը հայրենի,
Այնպես խոր, և ազատ, և քաղցրիկ,
Հնչում էր խորքերում իմ սրտի

Եվ ինձ թվում էր, թե այնտեղ,
Ա խ, մայրիկս էր օրոր ինձ ասում,
Եվ երգն էր թախծալից, սիրագեղ,
Հայրենի մեղեդին անխնդում

〈1920 ական թթ երկրորդ կես〉

* * *

Արագի ափին քողած մշուշով,
Նստել եմ տխուր, տխուր ու անհույս
Սև ագռավն եկավ մութ ամպի փեշով
Ու պսակ հյուսեց իմ մոլոր գլխուս

〈1920 ական թթ երկրորդ կես〉

* * *

Հազար սիրտ ունեմ, միայն մի լեզու,
Արար աշխարհին ինչպե՞ս ինձ հայտնեմ

Հազար ցավ ունեմ, միայն մի լեզու,
Արար աշխարհին վիշտս ո՞նց երգեմ

Հազար իղձ ունեմ միայն մի լեզու,
Արար աշխարհին տենչս ո՞նց ասեմ

〈1920 ական թթ երկրորդ կես〉

* * *

Խորտակված են իմ բերկրության
Սանդուխները արդեն վաղուց,
Մահն է հավերժ, կյանքը վայրկյան,
Աշխարհին իմ շուրջ ունայն զրույց

Ու լսում եմ հայրենիքիս
Եկեղեցու զանգը տրտում,
Կաթիլ-կաթիլ արցունքի պես
Ցավ է մաղում իմ որբ սրտում

Հետ եմ նայում մտիվ տխուր
Միայն մեռած, կոտրած թևեր
Եվ քայլերս ծածկում է լուռ
Միայն մահի դեղին ստվեր

〈1920 ական թթ երկրորդ կես〉

## ՄՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ ԱՇՆԱՆԸ

Հա՛մր, լի՛ւռ գերեզմաններ
Մոխրացած կյանքեր,
Մորս գերեզմանը
Մի չնչին հողաթումբ
Վրան մի դեղին, չորացած բույս,
Որ դողում էր բարակ քամուց
Մի դեղին, չոր խոտ
Կարծես սրտից ես բուսել
Չեմ կարող մոռանալ նրան,
Աչքերիս առաջն է նա
Միշտ միշտ
Դողում է, երերում
Ու կանչում է ինձ,
Կանչում է ինձ ինձ է կանչում,
Իր մոտ, այս կտոր հողի մոտ,
Որ ամենաթանկ հողն է, մի բուռ հողը,
Ողջ հողագնդի վրա
Կանչում է ինձ այնտեղ
Այնտեղ կարող է հոգիս
Հանգիստ գտնել
Խաղաղվել

1926

* * *

Տարիներ հետո դարձա հայրենիք
Աշուն էր անդորր դեղին դաշտերում
Սարերի գլխին նոր ձյուն էր իջել
Արագիլները ճահիճների շուրջ
Հավաքվել էին չըվելու համար
Գնում եմ մենակ մեր գյուղը խղճուկ
Ահա մեր դռան բարդիները հին,
Լուռ օրորելով կատարները մերկ,
Հեռվից քայլ առ քայլ մոտենում են ինձ
Մեր տունը, ավմաղ, ավեր է հիմա,
Ավեր-ավերակ ջրաղացը մեր,
Մի վայրկյանի մեջ տարերքը դաժան
Ջարկել չի թողել քար-քարի վրա

Նստում եմ տխուր մեր ավեր դռան
Այն սալաքարին, ուր նստում էին
Հայրըս ու մայրըս, մեղմ երեկոյին
Նստել եմ մենակ, ես հիմա արդեն
Մենակ եմ,— չկան սիրելիներս,
Եղբայրներ, քույրեր — բոլորը չըկան
Նայում եմ մեր տան լուռ բեկորներին—
Անցել է անդարձ, ամեն ինչ անցել,
Եվ ես էլ հիմա — ծեր եմ արդեն ես

1926

Ղազարապատ

* * *

Թույն եմ շնչում ես ամեն օր
Օտար երկրում
Մենակ, անօգ վիշտս եմ կրում
Տարին բոլոր:

Եվ ամեն ինչ տհաճ ու խորթ
Սրտիս համար,
Ամեն ինչի հոգիս օտար
Ու անհաղորդ

〈1930 ական թթ առաջին կես〉

## ԳԻՐՔ ԾՆՆԴՈՑ

Եվ ըսկզբից ըսկիզբների,
Ահեղն Աստված
Իրեն տարրից և շարժումից
Վերաստեղծեց
Տարածությունն անծայրածիր
Եվ ժամանակն հավերժական
Թոհ ու բոհի մեջ մըխըրճուն
Եվ հյուծում էր հոգին նըրա
Խավարակուռ վիհի վրա
Թոհ ու բոհի

«Եվ լինի լույս», Աստված ասաց,
Եվ իր մտքից հեղեղացավ
Եվ ծավալվեց լույսը հզոր
Եվ այդ եղավ
Արարչության օրն առաջին

Եվ երբ տեսավ Ահեղն Աստված
Որ բարի է լույսը հզոր
Մի շիթ առավ իրեն հոգուց,
Փոխադրեց
Օվկիանոսի ջրերի մեջ
Եվ ըստեղծեց այնտեղ փոքրիկ
Այն էակը խորհրդավոր,
Որն ըմբռնեց լույսը հզոր
Եվ այս վսեմ ու հրաշափառ
Ըմբռնումի ակնթարթով

Ավարտվեցավ
Օրինակարգ և ներդաշնակ
Անհուն շենքը տիեզերքի
Անհուն հոգում այս էակի:
Եվ այդ եղավ
Արարչության օրը վերջին

1932 թ 19 նոյեմբերի
Փարիզ

* * *

Բնությունն երբեք չի նայում ետ
Ու չի կորչում ոչինչ անհետ
Ինչ մեր որդոց պարտք ենք տալիս,
Նրանք դարձնում են այնուհետ
Սերունդներին իրենց գալիք
Շատ տուր, որպեսզի երբ գնաս,
Տվածիդ մեջ երկար մնաս
Բնությունն երբեք չի նայում ետ
Ու չի կորչում ոչինչ անհետ

1937
Երևան

* * *

Լույս հանճարի օրերը կարճ
Երկար դարեր են տևում,
Եվ վայրկյաններ վաղանցիկ
Դեպի հավերժ են թևում
Դեպի գալիք է նա ճախրում
Գլխի վրայով ներկայի,
Թողնում անձուկ ու գետնաքարշ
Շրջապատն իր ետևում

1937
Երևան

## ՆԱԽԵՐԳ

Ո վ անմահ Սյունիք դարեր պատեցին
Քո սարն ու ձորը խոլ-խավար ամպեր,
Մթին շանթերով, խուլ որոտմունքով
Ծանր ու սև ամպեր, մռայլ, մահաբեր

Քո ժողովուրդը արդար ու աննենգ,
Դարեր հարկ տվեց բռնակալներին,
Բայց հացի վերջին պատառը նրանք
Հեգ մանուկներիդ ձեռքից խլեցին

Հուսահատ անվերջ տառապանքներից
Խեղճ ժողովուրդը մանուկներիդ հետ
Խարույկների մեջ նետեցին իրենց
Խոշտանգումներից փրկվելու համար

Բայց չմոխրացավ քո ըմբոստ ոգին,
Ինչպես Վահագնը բոցերի միջից
Դուրս ելավ անկեզ մի սեգ պատանի
Քո ազատության դյուցազնը անբիծ

Ո վ անմահ Սյունիք, դարեր պատեցին
Քո սարն ու ձորը խոլ-խավար ամպեր,
Բայց վաղը պիտի մռայլը ճեղքի
Սուրբ ըմբոստության շանթն ազատաբեր

1943
Երևան

## ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Այուհնաց աշխարհն այսօր վառված վրեժով
Մերկացրել է ազատության սուրը հին
Ելե՛ք, հայեր, մի մարդու պես, մի սրտով
Թռեք, հասեք ու միացեք քաջերին

Դանակն արդեն հասել է մեր ոսկորին,
Օրն է եկել հայրենիքի փրկության,
Մի խնայեք ձեր կյանքերը վեհ գործին,
Ժամը հնչեց բռնակալի կործանման

Մեր պապերը այս սուրբ հողը դարերով
Գոռ շահերից, խանից առաջ վարել են,
Վաղն էլ խանի ջարդված գահի վրայով
Պիտի վարենք հաղթանակով հավիտյան

1943
Երևան

## ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԸ

Վարդավառ է, վարդերի տոն, վարդագեղ
Մեր պապերի նվիրական վարդի օր
Տղա, աղջիկ պա՛ր բռնեցեք, երգեցեք,
Վարդավառ է, վարդերի տոն, վարդևոր

Տղա, աղջիկ, իրար վրա ջուր ցողեք
Մեր կարկաչուն աղբյուրներից վարդաջուր,
Լուսափետուր աղավնիներ բաց թողեք,
Թռցրեցե՛ք աղավնիներ ոսկեթույր

Հե՛յ, լուսաթև աղավնիներ, գնացեք,
Դավիթ-Բեկից, մեր քաջերից լուր բերեք
Ծափին տալով, թևին տալով ետ եկեք,
Վարդավառ է, բարի ուրախ լո՛ւր բերեք

Սուրհանդակը
Է՛յ, եղբայրներ Էյ քույրիկներ, լսեցեք
Դավիթ-Բեկը իր քաջերով հայկազուն,
Զարկեց, ջարդեց մեր թշնամուն, թշնամուն,
Է՛յ, լսեցեք, ուրախացեք, ցնծացեք

1943
Երևան

* * *

Արտումս սիրո
Ծով է մրրկում
Եվ սերը սիրտս
Այրում ու մրրկում
Աշխարհներ անհուն
Հեռուներն ամեն
Արևները վառ
Աստղերն հրեղեն
Գրկել եմ ուզում
Կսկուծ համբուրեմ
Արևները վառ,
Աստղերն հրեղեն
Համբուրեմ ուժգին,
Որ շրթունքս այրվեն

〈1940 ական թթ երկրորդ կես〉

* * *

Միտքս թեև շատ թափառեց
այս աշխարհում
Բայց մազն ինչ է հերձեցի էլ
բան չհասկացա
Իմ մտքի մեջ բյուր արևներ են
շողշողում,
Բայց և այնպես կազմն աթոռի
ես չիմացա

1948

„Կուզեր հրեր կուգերը հասիրուզին..."

1889-1956

## ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՒՅՐ

Երբ բացօթյա երկնքի տակ
Դու իմ գրկում տարածված
Իբրև նշան սիրո բացման
Տալիս էիր համբույր առաջին

Երբ սենյակի հարկի տակ
Դու քո մահվան մահճում պառկած
Իբրև նշան սիրո բաժանման
Տալիս էիր համբույր վերջին

1889 դեկտեմբերի 23
Ս Էջմիածին

* * *

Դաշտը շքեղ ու ոսկեդեղ,
Դաշտը սիրուն, ծփծփուն —
Խոստանում է քրտնքի տեղ
Փարթամ վաստակ գյուղացուն

Սիրտս մաքուր, սիրտս ոսկեհույս,
Սիրտս ըղձերով գեղեցիկ
Խոստանում է մատաղ հոգուս
Սիրո երգող փոթորիկ

1891 թ նոյեմբեր
Ս Էջմիածին

* * *

Ես ուզեցա լալեն քաղեմ,
Չոր կոճըն էլ ձեռս չընկավ
Շատ ուզեցա թուշդ պաչեմ
Արմունկդ էլ ձեռս չընկավ
Ա՛խ, ուզեցա ոտքդ պագնեմ,
Բերանս ոտացդ հողն էլ չընկավ

1893 8 մայիսի
Ղազարապատ գյուղ

* * *

Ի՜նչ սիրուն ես, գարնան վարդ ես,
Ա՜խ, նազանի, նազ աղջիկ
Դուն տեղովդ ինձի դարդ ես,
Ջանիդ մեռնիմ, ջան ծաղիկ

Կաքավի պես շորոր կուգաս,
Դարդ ես, խաբար հեչ չունիս
Քու կարոտով էրվա, վառվա
Ի՜նչ ուրախ ես գո՛ւթ չունիս

Ինձ որ սիրես, ես թև կառնեմ,
Անհաղթ, հզոր կդառնամ
Մով երկինքը վար կբերեմ
Ոտներիդ տակ նազիկ ջան

1893 թիվ 8 մայիսի
Ալեքսանդրապոլ

* * *

— Ա խ մարալս ախ ուր գնաց
Բարով եկաք ճամփորդներ
Ես ձեր գալած ճամփին մեռնիմ
Յարիս յարաբ չեք տեսեր
«Վայ խեղճ տղա քու մարալդ
Գելը տարավ մարդ-գելը»

— Յարիս ծամերն ծովի նման
Ալին ծալին կուտային
Էնոր աչերն ծով-ծըվան
Փեշք կուտային արևին

Էնոր ձենը քաղցր ու անուշ
Բլբուլի հետ կկանչեր
Ա խ մարալս վախ մարալս
Գելը մարդ գճլն է տարեր —
— Ա խ մարալս վախ մարալս
Մարդը գել-մարդն է տարեր

1893թ 3 սեպտեմբերի
Պրագա

* * *

Ես ձեզ ատում եմ ամենքիդ ատում
Անչափ անսահման ատում եմ ձեզ
Ա խ ում չար ձեռքը իմ սիրո այգում
Վառեց դժոխքը այս ատելության
Ա խ սիրտըս սիրո անհուն օվկիան էր
Ես սիրում էի ամենքիդ սիրում

1893 1895

## ԻՄ ՎԵՀՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ ես դու, ով կույս — չքնաղ, նազելի
Քեզ չեմ ճանաչում, բայց սիրում եմ քեզ —
Քեզ որպես բարձր, մի վսեմ Ոգի
Այնպես երկյուղած ես պաշտում եմ քեզ

Դու մի տաճար ես լուռ ու ամայի
Այնտեղ կառուցի ես մի սուրբ սեղան,
Գահ կատարյալի, վեհ գաղափարի
ջերմ երկրպագման
Եվ գահի վրա դրեցի սիրտս,
Որպես վեհ իդեալ, Աստված սուրբ ամբիծ,
Եվ ես պաշտեցի սիրտս, սուրբ սիրտս —
պաշտեցի ինքս ինձ
Եվ այնպես, ինչպես մարդկային Ոգին
Ամայի երկնքում կառուցեց սուրբ սեղան,
Ստեղծեց Աստծուն, և պաշտեց նրան,
Պաշտեց ինքն իրան — Ոգուն մարդկության

1894 թիվ 14 մարտի
Ալեքսանդրապոլ

* * *

Շուշան ծաղիկ, քու բողբոջում
Մաքուր սիրտս դրեցի
Սուրբ ըղձերով սիրտս զեղուն,
Սիրտս քնքուշ, նազելի

Ես սիրեցի քու բողբոջում
Սիրտս սիրով սրբազան —
Այն հավատով, թե սիրում եմ
Ես քու սիրտը Շուշան ջան

1894 թիվ 21 մայիսի
Լայպցիգ

* * *

Սրտումս խորունկ վշտեր կան
Մայրիկ մի քրքրիր նրանց
Դու քո արցունքով չես կարող բուժել
Իսկ ջերմ աղոթքդ վաղուց ուժ չունի
Դու մի հարցրու վշտերիս պատճառը
Մայրիկ չես կարող դու նրանց ջնջել
Միթե կարող ես երկիրը ջնջել
Երկինքը ջնջել — աշխարքը ջնջել

〈1895 1897〉

* * *

Արևն հանգավ — մութը մթին
Մաղեց հեզ գետի վրա
Ծանր խշշաց լացող ուռին
— Սիրտս տխուր կը հևա

Ուռիները նազան-ծածան
Տերևները կըմնչան
Ծիտ ու ծիծեռ ճուղքի վրան
Մեղմ երազում կըննջան

Լուռ կըծորե աստղը շողեր
Ու ծղրիդը կծղրա
Քամին կերգե գաղտնի երգեր
Միտքս հեռու կսլանա

— Ու խոր կզգամ չկա անցյալ
Չկա ներկա ապագա
Չկա սիրել, լալ ու հուսալ
Չկա կյանք ու չկա մահ

Լուսնակն ելավ — շուշան փոշին
Մաղեց հեզ գետի վրա
Մեղմիկ խշշաց ցորեն-ցողուն
Սիրտս անդորր կըծփա

1895 թ 14 սեպտեմբերի
Անի

* * *

Եվ երբ սառը ձյունով ծածկվեն
Ողջ աշխարհը — հող ու ծով
Փչե, ոռնա անզուսպ քամին
Լռած երկրի երեսով
Բոլոր չքնաղ կանայք մեռնեն,
Ծաղիկներն էլ չորանան
Եվ միայն մարդիկ- մարդիկ միայն
Ցիր-ցան ապրեն սառցի մեջ —
Օ՛, ես այն պահ, միայն այն պահ
Կուզեմ մեռնել, և պաղ քամին
Վրես փչե ու ոռնա

1896 թ 13 դեկտեմբերի
Երևան

* * *

Քար գցեցիր, ծառիս դիպավ —
Ծառեն հավքերն ուր թռան
Ծաղիկ կյանքիս խաս օրերը
Ա խ, ուր թռան,— զուր կորան

Սարի սիրուն, նազիկ բլբուլն,
Ա խ, բախտ, իմս էր ուր կորավ
Բաղի թառլան, անուշ բլբուլն,
Է՛յ, բաւիւտ իմս էր, ուր թռավ

1898

* * *

Արևի տակ ծովի ափին
Ես խորհում եմ ու խոկում
Եվ լսելով ծովի շնչին
Ծովն զգում եմ իմ հոգում

Ես զգում եմ — բնությունը
Չունի ոչ կյանք ոչ հոգի
Նա մեռած է, ինչպես ծովը
— Դիակ, դիակ վիթխարի

Ես զգում եմ — ես եմ ոգին,
Իմ հոգիս է խորն անհուն,
Իմ հոգումն է բնությունը
Եվ կամենում և զգում
Ես եմ ոգին մեծ բնության
Ես եմ խորհում ու զգում

Ես զգում եմ, սիրում աշխարհն —
Ինչ որ ինչ որ կա մեջը
Տիեզերքը — անհուն, անծայր
Եվ կնոջ ջերմ մարմինը

1898 թ 16 մայիսի
Օդեսա

* * *

Դուման սարից ջուր կուգա —
Աղբուրն անուշ դուր կուգա
— Է յ ջան երգս խոր սրտես
Աղբուրի պես դուրս կուգա

Աղբուրն զվարթ կը մնչա
Քարփեն ձորը վար կերթա
Էն մենձ անտակ քարայրը
Անուշ ձենին ձեն կուտա

— Երգս կուլա կը խնդա
Ամեն մարդու մոտ կերթա
Ա խ սրտալի խոր երգիս
Սիրտմ էլ, սիրտմ էլ ձեն չի տա

1898թ 7 օգոստոսի
Օդեսա

* * *

Ամպերն ընկան ծովի վրեն,
Հազար բերնով ջուր խմին,
Թռավ օրորն խոլոր-ծովեն
Ծվաց, նստավ թուխ քարփին

— Ես էլ քեզ պես, տխուր օրոր
Աչերս արցունք ու անքուն
Կը թափառեմ ոլոր-մոլոր
Կյանքի հեռու ափերում

1898
Օդեսա

* * *

Վարդերի մեջ մարալ գարնան —
Համբույրները հալվում են
Գիտեմ արդյոք — սիրտս ինչքան
Անհույս — վշտով տխուր եմ

Ես մի թռչուն սիրով ծարավ,
Կյանքի թույնը խմեցի,
Երազներս հողմը տարավ
Անթև կոտրած մնացի

〈1900 ական թթ առաջին կես〉

* * *

Անգութ աղջիկ, թշնամու պես
Խոր խոցեցիր մատաղ հոգիս
Ո՛չ կը հանիս թուրդ սրտես
Ո՛չ ճար կանես մորմոք վերքիս

Քակիր ձեռքես սիրուդ շղթան
Ծուփ ծուփ ծովեր երթամ, կորիմ
Ցավս հովին ու ծովին տամ
Երկրե երկիր անդարձ կորիմ

Սիրտս ու աշխարհ բոց ու կրակ
Ուրտեղ կերթամ, չունիմ դադար,
Ա՛խ գիշերին լինիմ ճարակ
Սըրտեդ թրեդ գտնեմ մի ճար

〈1900 ական թթ առաջին կես〉

* * *

Դու աղբյուրի պես կարկաչում էիր
Իմ ցնորքների շքեղ աշխարքում
Դու գարուն էիր վարդի բուրմունքով
Եվ հնչում էիր աստղերի սրտից —
Ես քեզ պաշտեցի ցնորք պաշտելի—
Հոգուս նվիրական ցնորքը պաշտեցի
Բայց դու ինձ չհասկացար

Նորից վերցնեմ ցուպս թափառական
Բախելու անզգա սրտերը ամուր
— Ո չ, մարգարեի ես երազ ունեմ
Թռչեմ լեռների խրոխտ գագաթները
Եվ արծվի նման ապրեմ միայնակ
Աշխարհի երգից ու սիրուց թափուր
Ո՞վ կհասկանա իմ վեհ տենչերը
Եվ ցնորքներս ով կարող է զգալ

1902 թ 19 հուլիսի
Կարս

* * *

Մարդկանց ժպիտին դու մի հավատա,
Անուշ խոսքերին դու մի հավատա,
Ա յ դու մաքուր սիրտ, մինչև երբ ասա
Հազար փորձերից դու չըխրատվիս
Անուշ խոսքերը թույն են ու դաշույն
Սիրտդ են ծակում, հավատդ խեղդում
Հեռու մարդկանցից վեհ մտերմության
Եվ անկեղծության նրանք չեն արժանի
Այս կեղծ ու պատիր,— շինծու աշխարհում
Դու մենակ ապրիր,— և հազարի մեջ
Եվ բյուրերի մեջ որոնիր մեկին
Որը քեզ սիրել, հասկանալ պաշտել
Որը քեզ համար մեռնել ուզենա
Խայթիր ամենքին, ծաղրիր անխնա
Թող որ ամենքը քեզ քեզ չսիրեն
Օրենքդ լինի — միշտ զգվանք տածել
Դեպի, ուղղակի քեզ սիրողներին
Շատերի սերը,— սերերը չնչին
Օրենքդ լինի — ապրել մեն-մենակ
Ամենքից ատված և մեկից պաշտված

1904 մայիսի 1
Մոսկվա

* * *

Վիշտս ծանր է, սրտիս վերքը անդարման
Մեր սարերի կռունկի-աչք, աղբյուրներ
Կացեք, կացեք արցունքներս ձեզի տամ
Տարեք ձեզ հետ տարեք տվեք Արազին
Մեր ձորերով, մեր դաշտերով, հողերով
Թող Արազը դարդս տանի ծովերուն
Թող ծովերը վիշտս պատմեն աշխարհին

Վիշտս մեծ է վերքը սրտիս անդարման
Մեր դաշտերի օրոր շորոր զով հովեր
Կացեք կացեք, մրմունջներս ձեզի տամ
Տարեք ձեզ հետ, տարեք, տվեք Մասիսին
Մեր սարերով, մեր ծովերով, ամպերով,
Թող Մասիսը դարդս հասցնե աստղերին
Ու աստղերը վիշտս պատմեն աշխարհին

1904 մայիսի 4
Մոսկվա

* * *

Ես ատել կուզեմ սակայն մեծ հոգույս
Սերը անհուն է — օվկիան բոցավառ
Եվ ես այրվում եմ տալով ջերմ ու լույս —
Իմ ատած զզված աշխարհի համար

〈1904〉

—

* * *

Շրջում էի լուռ գարնան դաշտերով
Հավքերի ամպը գլխիս վրայով
Անցավ ճախրելով և երգեց քնքուշ
Ու սիրտս լցվեց հուշերով անուշ
Իմ վառ սերերը աստղերի նման
Իրար ետևից շողալով անցան,
Ինչքա՜ն սիրեցի ինչքան լաց եղա—
Հոգուս հենքը դատարկ է հիմա
Բարուն ու սիրուն էլ չեմ հավատում
Սորվեցի զզվել ու ատել մարդուն —
Ժպիտն երկնքի ինձ համար խավար
Հայացքը կույսի համր է ինձ համար
Գարուն քո պայծառ համբույրով մաքուր
Գուրգուրիր սիրտս վիրավոր, տխուր
Եվ մոռացության մամուռով դալար
Վերքերս գոցիր գարուն սիրավառ

〈1900 ական թթ երկրորդ կես〉

* * *

Ժեռուտ սարերից այս ով է գալիս —
Վիրավոր վագրն է այսպես գոռ գոչում
Արնոտած սիրտը ժեռերին տալիս,—
Թե այս իմ սիրտն է վայրագ մռնչում

〈1900 ական թթ երկրորդ կես〉

* * *

Աղջիկ նազելի, աղջիկ գեղեցիկ,
Ինչպես արտուտը արևին կարոտ,—
Թռչում է սիրտս —
Պայծառ ու գարուն աչերիդ կարոտ —
Մի դիպչիր սրտիս արյուն չըմնաց
Սիրուց մեռնում եմ
Գարուն չըմնաց

1905

* * *

Տեսնում եմ մորս երկաթե ձողերի ետևից
Արցունք է թափում
Օ՜ մի լաց մայր իմ թող չտեսնի
Մեր թշնամին լացը մայրերի —
Թող չուրախանա նա

Մի լաց ես արծիվ եմ վանդակի մեջ
Ազատության հուրն է իմ կրծքում —
Կըգա օրը — թափ կտամ թևերս
Կըփշրեմ շղթա ու փականք
Եվ թող չիմանան թշնամիներս
Թե որքան ծանր է արցունքը մի մոր

〈1908〉

* * *

Ամ՛ս որ քարի տակ ով գիտե որտեղ
Ննջում է հիմի նրա սիրելին
Ծաղկունքը վայրի անուշ ու շքեղ
Բուրում են թոռմում անհայտ շիրիմին

〈1909〉

* * *

Մտքիդ պես տխուր, մռայլ ու անհայտ
Գնում է կյանքի ուղին ահավոր
— Դարերի ճամփորդ, դու տառապող մարդ
Ո՞ւր պիտի հանգի տենչանքդ հզոր
Գեղեցիկն ու վեհ, բարին բացարձակ
Սոսկ պատրանքներն են հոգու քո հպարտ
Ոչնչությունն է — կյանքիդ նպատակ
Ա խ, հանգիր անդորր, ով տառապած մարդ

〈1910 ական թթ առաջին կես〉

* * *

Իմ տխուր սրտում գիշեր ու ցերեկ
Մի տխուր թռչուն թևերը բեկ-բեկ
Վայում է, երգում արտասունք թափում
Իմ ավեր սրտում գիշեր ու ցերեկ

Նա սուգն է ողբում, իմ ընկերներիս
Որ մեռան կորան
Իմ երազների կորուստն է լալիս

Եվ անվերջ, անվերջ — գիշեր ու ցերեկ
Մի տխուր թռչուն երգում է
Եվ ոչ մի գարուն չկա ու չի գա
Մխիթարելու նրան
Ա խ նա իմ սիրտն է սգավոր

〈1918 1920〉

* * *

Անեզր ու անծիր տարածության մեջ
Փոշի եմ չնչին և մահվան գերի
Բայց հոգիս վեհ է տարածությունից մեծ
Միակ կշեռքն է տիեզերքի
Նրա արժեքի նրա էության
Եվ օրենքների և նպատակի
Եվ ես ասում եմ, թող հավերժ կորչի
Այս տիեզերքը անգթությունների —
Կյանքը ամեն տեղ թող մեռնի, հանգչի
Տիեզերական անզգա հավիտենականությունը
Եվ կյանքը չարժե իրեն ձգտումին
Պտուղը չարժե մեր աշխատանքին
Ճշմարտությունը չարժե որ մարդ տանջվի
Եվ կյանքը չարժե ուրիշի կյանքին
Աշխարհը չարժե, որ հոգին ապրի

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Ես լուռ գիշերին անհույս լացեցի
Անապատի մեջ անդորր ամայի —
Եվ ես աստղերին սիրտս բացեցի
Դիմեցի նրանց ինչպես վկայի
Աստղեր ամպի պես օրերս անցան
Ճշմարտությունը միշտ երազելով
Ծով ու ցամաք անցա գտնելու նրան —
Կյանքս վատնեցի նրան փնտրելով
Ինչո՞ւ է հոսում կյանքը ամեն տեղ
Ինչո՞ւ եք շողում աստղեր երկնքում—
Ինչո՞ւ է շաչում օվկիանը ահեղ
Ճշմարտությունը ինչո՞ւ եմ փնտրում
Անեծք բնության նրա գոյության
Որ իրեն անհուն անմտության մեջ
Վերքն է տվել մեզ բանականության
Հոգի է դրել հյուլեներիս մեջ

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Մայր երկիր, կարոտ եմ քեզի,
Կուրծքս հողին կարոտ է—
Գրկեմ երկիրն — ողջ երկիրը
Սեղմեմ սրտիս, համբուրեմ
Ծովերի հսկա շրթունքն
Ու վառ աստղերի աչքերըն

1

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Ասա մեզ, Եվրոպ, ո՞ւր ես շտապում
Ձեռներդ ներկած հայի արյունով
Դու հոշոտեցիր Սուրբ Հայաստանը,
Այժմ ո՞ւր ես փախչում արնոտ ձեռներով

Քո խիղճը երբեք չխայթեց, Եվրոպ,
Փշրելով գանգեր բյուրավոր հայի
Անառակ Եվրոպ, բարբարոս Եվրոպ
Անեծք սերընդիդ անեծք դարերի

Դեպի ծովերն ես շտապում հիմա,
Որպեսզի լվաս ձեռներդ արնոտ
Ծովերը փոքր են օվկիանը չնչին,
Որ մաքրեն խիղճդ— խիղճդ արյունոտ

Հանցանքդ մեծ է — և ավելի շուտ
Ծովերն ու օվկիան արյուն կդառնան
Ձեռներիդ արնով, հայի արնով
Անեծք քեզ, Եվրո՛պ, անեծք հավիտյան

〈1921〉

* * *

Բախտն ինձ անջատեց հայրենի երկրից
Քույր իմ սիրելի հեռացա քեզնից
Գիշեր է լուսնյակ պանդուխտ եմ տխուր
Շրջում եմ մենակ դաշտերում թափուր
Շրջում եմ անհույս հայրենի օրհնած
Ճանապարհներից հեռու-հեռացած
Քույր իմ աչերդ հավերժ փակեցին
Անհուն կարոտով իմ վերադարձին
Երբ ամեն անգամ բախտն անագորույն
Հարվածում էր ինձ— քեզ էր հարվածում
Ա խ, քույր իմ անգին, չկաս դու հիմա
Քու սիրտն էր մենակ ցավում իմ վերա

1920

* * *

Ո՞վ է իջնում նուրբ քողերով
Շուրջը դյութում ու թովում
Շուշան կրծքով լույս կողերով
Լուռ ջրերը վրդովում

Եվ լողում է շղարշ հագին
Հյուսած լուսնի շողերով
Մազերն արձակ ցոլցլագին,
Ադամանդյա ցողերով

Ո՞վ է աղոտ լույսերի հետ
Ծաղիկները համբուրում
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փըրփըրում

Ո՞վ է անդորր գիշերն այս հով
Այսպես դյութում ու թովում
Շուշան կրծքով, լույս թևերով
Նիրհած գետը վրդովում

〈1920 ական թթ առաջին կես〉

* * *

Արդյո՞ք եղել եմ ես ջահել,
Սիրել եմ արդյո՞ք երազել,
Միայնակ թափառել.
Լաց եղել սիրո խանդից—
Անցել են արդեն տարիներ,
Խամրել է ամեն ինչ
Շուտով կըջնջվեմ և ես

Անցել են անվերջ դարեր,
Եկել են ու գնացել սերունդներ,
Անցել են ու երգել, երազել —
Մոռացվել են ու մոռացվել.
Հող են դարձել և ջնջվել անհետ

Պիտի գան դարեր, դարեր
Բյուր, բյուրավոր անվերջ
Սերունդներ պիտի գան,
Ապրեն, տանջվեն և
Իջնեն գերեզման

Եվ պիտի մոռացվի ամեն ինչ,
Եվ երկիրն էլ պիտի մարի,
Եվ արևը, և ծիր կաթինը —
Ունայնություն ունայնությանց

〈1923 1925〉

* * *

Հպարտ նայում ես լուսեղեն հեռուն
Այնտեղ տեսնում ես չքնաղ արշալույս,
Ազատ ժողովուրդ, ազատ հայրենիք
Որ քեզ են կանչում և ահա, ահա
Թռչում է հոգիս ազատ, սլացիկ
Ա՛խ, հեգ հայրենիք, դու ծնվես պիտի
Քո ընտիրների գերեզմաններից
Եվ վառ արևը վըրադ պիտի բացվի
Կախաղանների վսեմ բարձրունքից

〈1926 1930〉

* * *

Չգիտեմ ինչպես տարիներն անցան
արագ սրաթև
Երեխաները մեծ մարդիկ դարձան
և ծերացա ես

Օրերս անցան ծուխի պես թեթև
Բայց նրանց հետքը ծանր բեռի պես
կոտրում է մեջքս

Նստել եմ հիմա օջախիս առաջ
Հիշում եմ նորից իմ ուղին անցած,—
Հույսեր ու տենչեր, երազներ միայն
անցած իմ ուղին

Ոսկե գավաթներ կյանքի լիությամբ
Առանց դիպչելու շրթունքիս անցան
Ունայն մի գավաթ մնաց իմ կյանքին
Հանգչում է հուրը իմ օջախիս մեջ
Եվ մութն է իջնում դանդաղ ու տրտում,
Իմ ցուրտ սենյակում և իմ ճէք սրտում

1935 ապրիլ

* * *

Հրամանները միշտ իջնում են վերևից
Պատ ու կտուր միշտ քանդում են վերևից
Թե որ կուզես տունըդ պաչել մաս-մաքուր
Սանդուխքները լվանում են վերևից

1940
Երևան

* * *

Հոգնած քայլերով մտել եմ անտառ
Նստել եմ մենակ մթին անտառում
Ու միտք եմ անում աշխարհի բանը,
Ականջ եմ դնում անտառի խոր շառաչին
Որ այսպես շառաչել է սերունդների վրա
Լսում եմ ուշով, և շառաչը
Ինձնից հեռացնում է ինձ
Մտքերս տանում ցրում է հեռուն
Մոռացության ափերն հեռավոր
Հալվել է ներկան, չկա ժամանակ
Չեմ զգում ես ինձ ես անգո, անէակ
Չկա ժամանակ

〈1948 1949〉

* * *

Երբ տեսա քեզ
Պայծառ էի գարունքվա պես
Եվ գնացի հեռու-հեռուն
Հողմամռունչ անտառներում
Եվ սրտաբուխ լաց եղա ես,
Որ տեսա քեզ

‹1950 1951›

* * *

Գնաց, գնաց,
Սիրելիս գնաց
Էլ մի որոնեք
Մի փնտրեք
Հրաշալի էր նա
Գեղեցիկ էր նա
Նրա պես սիրուն
Էլ ինչ կունենա

〈1950 1955〉

* * *

Կուզեի լիներ կյանքը հավիտյան
Եվ միշտ մանուկ ու դալար
Կուզեի լիներ սերը անվախճան —
Եվ երգը հնչեր սրտից մաքուր —
Կուզեի չլիներ տռփանք ու հեշտանք
Սերը լիներ մաքուր սրբություն —
Կուզեի երգել անվերջ
Անվերջ խորհել հավերժ երազել
Կուզեի ախ հավերժ ապրել կուզեի

〈1950 ական թթ առաջին կես〉

## ՄԵՐ ՍՊԱՆՎԱԾ ԴԻՑՈՒՀԻՆ

Մեր հայրենի սեգ լեռների
Կանաչ գրկում անուշաբույր
Սպանեցին հոշոտեցին
Մեր ոսկեհեր կապուտաչյա
Գեղեցկուհուն հոգեհատոր

Ավաղ, էլ չենք տեսնելու մենք
Չքնաղ դեմքը աստղաժպիտ
Մեր նազելի գեղեցկուհու
Ավաղ էլ չենք լսելու մենք
Ձայնը քաղցր, լուսակարկաչ
Մեր սիրելի գեղեցկուհու·

Եվ երբ մի օր գնանք այցի
Գեղեցկուհուն մեր նազելի
Սեգ լեռների կանաչ գրկում,
Ուր մորթեցին, հոշոտեցին
Մեր սիրուհուն հոգեհատոր,
Պիտ կուրանան աչքերը մեր
Երբ փոխարեն մեր դիցուհու
Կապուտաչյա լուսակարկաչ,
Տեսնենք ժայռեր, ծերպեր մթին
Կարիճների օձերի բույն
Մեր հայրենի սեգ լեռների
Հրատոչոր, մեռած գրկում

1948 հուլիսի 25
Նոր Բայազետ

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
## «ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ» /1896—1913/

### ԱՎԵՏԻՔ ՄԱԼՈՅԱՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 60/

Գրել է 1896 թ., անդրադարձել է 1899 թ.. Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ» ամսագիր/. Թիֆլիս, 1899 № 9, էջ 1002—1003, «Բարեկամիս հիշատակին» խորագրով: Բանաստեղծությունը կազմված է եղել երկու մասից, առաջինը՝ «Էս ինչ դարդ էր չոր քամու պես...», երկրորդը՝ «Էն արծիվն էր թըռավ, գընաց...»:

Հետագայում տրոհել է երկու առանձին բանաստեղծությունների. Առաջինը տպագրել է «Բանաստեղծություններ», Բաքու, 1903, էջ 131, «Ընկերիս հիշատակին» վերնագրով, որոշակի փոփոխություններով, երկրորդը «Դրոշակ», Ժնև, 1900 № 5 էջ 67 «Ավետիք Մալոյանի հիշատակին» վերնագրով «Հայ-գուսան» ստորագրությամբ:

Այնուհետև «Զարկ» Թիֆլիս 1906 № 1 էջ 4, Ժող. հեղափոխ. Երգերից» խորագրո l և /Ավետիք Մալոյանի հիշատակին/ ենթավերնագրով: «Երգեր ու վերքեր», Թիֆլիս 1908 էջ 140 «Ավետիք Մալոյանի անմահ հիշատակին» վերնագրով որոշակի փոփոխություններով ‹Հայդուկի երգեր» /կազմող և առաջաբանի հեղինակ Արսեն Տոնոյան/ Բեյրութ 1960 էջ 21 «Գրական թերթ 1989 № 42

Բանաստեղծությունը տպագրում ենք ամբողջությամբ առաջիս մաշի տեքստը բերվում է ‹Մուրճից» Երկրորդինը ‹երգեր ու վերքերից»:

Ավետիք/ս/ Մալոյան /Ավո/— 1864—1896 Իսահակյանի պատանության մտերիմ ընկեր ալեքսանդրապոլցի ուսուցիչ և բանահավաք ժամավորական խմբի կազմակերպիչ զոհվել է 1896 թվականի ուշ աշնանը ռուս տաճկական սահմանն անցնելիս: Զնաբքից ո ժաստպառ եղած Ավոյին իր երկու ընկերների հետ քրդերի մի հրոսակախումբ հանձնում է ռուս սահման ապահ զորամասերին ուր Ավոյին խոշտանգամահ են անում և դիակը հանձնում Կարս քաղաքի մի հայ խանութպանի, հողին հանձնելու համար /մանրամասները տես ‹Դրոշակ› 1896 15 նոյեմբերի № 26 էջ 192

## ԼՈՒՌ ԳԻՇԵՐԻՆ ՄՏՔԻՍ ԴԻՄԱՑ /էջ 62/

Գրել է ըստ ինքնագրի «1898 թ 21 մարտի Ալեքսանդրապոլ» Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ» Թիֆլիս 1900 № 3 էջ 324 «Լուռ գիշերին...» վերնագրով այնուհետև «Դրոշակ» ժնև 1902 № 10 էջ 148 անվերնագիր «Հայ գուսան» ստորագրությամբ: Ապա մի քառատողի կրճատումով որոշակի փո փոխություններով ‹Երգեր ու վերքեր» 1908 էջ 44 Նույն տեքստը հետագա ժո ղովածուներում

Սույն գրքի համար բերվում է «Դրոշակի» տեքստը

## ԱԶԻԶ ՄԵՐԻ Կ ՔԵԶԻ ԹՈՂԻ /էջ 63/

Գրել է ըստ ինքնագրի «1898 թ 12 հոկտեմբերի Օդեսա» Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» ժնև 1899 № 1 էջ 4 «Հայ գուսան» ստորա գրությամբ Այնուհետև «Աշխատավոր» Թիֆլիս, 1920 21 մարտի ‹Հայ գուսան» ստորագրությամբ ‹Հայրենիք», Բոստոն 1959, 18 հոկտեմբերի «Հայ գուսան ստո րագրությամբ ‹Հայդուկի երգեր» Բեյրութ 1960 թ էջ 18 ‹Խորհրդային Հայաս տան» 1987 № 12 էջ 24: Խսահակյանի կենդանության օրոք տպագրված երկերի ժողովածուների մեջ չի զետեղվել

Տեքստը բերվում է ‹Դրոշակից»

## ՍԵՐՈՔԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 64/

Գրել է 1899 թ.. Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» ժնև 1901 № 5 էջ 82 ստորագրությամբ «Հայ գուսան»: Բանաստեղծությունը ունեցել է հետևյալ բնաբանը. «Այսպես վերջացավ մեծ հիացում ու մեծ սարսափ ներշնչող Սերոբ փաշան ազատության ծարավի իղեալով տոգորված միշտ լավին ձգտող մի բնավորու թյուն...» — Դ ր Վ Բելք

Այնուհետև «Հայդուկի երգեր» Բեյրութ 1960 էջ 39 41 «Խորհրդային Հայաս տան» 1987 № 12 էջ 25 «Գրական թերթ» 1989 հոկտեմբերի 13 Տեքստը բերվում է «Դրոշակից

Բանաստեղծությունը նվիրված է ժողովրդական հերոս ազգային ազատագրական շարժման հիմնադիրներից մեկի լեգենդար ֆիդայի Աղբյուր Սերոբի /Սերոբ Վարդանյանի 1864—1899/ հիշատակին:

Ավետիք Իսահակյանը մի առանձին պաշտամունք է տածել Աղբյուր Սերոբի հանդեպ համարել է նրան հայ ազատամարտի ռահվիրան առաջնեկ իսկ ֆիդայիներից ամենաառաքինին Աղբյուր Սերոբի անունը բազմիցս հիշատակվում է նրա երկերում Հերոսի լուսանկարը բանաստեղծը պահում էր իր գրասեղանին միշտ աչքի առաջ

## ԳՈՒՐԳԵՆԻ ԱՆՄԱՀ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 67/

Գրել է 1900թ Ինքնագրի սկզբնատողն է ‹Գըլգըլալեն ջուր է գալիս...» Տպագրվել է առաջին անգամ Դրոշակ ժնև 1900 № 3 էջ 34 (1899 Ապրիլ—1900 Ապրիլի տարեդարձին) ենթախորագրով «Հայ գուսան» ստորագրությամբ Այնուհետև ‹Հայդուկի երգեր» Բեյրութ 1960 էջ 19 «Խորհրդային Հայաստան» 1987 № 12 էջ 24 «Գրական թերթ› 1989 հոկտեմբերի 13

Տեքստը բերվում է «Դրոշակից»

Բանաստեղծությունը նվիրված է ազատագրական շարժման կարկառուն գործիչ ,անվանի ֆիդայի Գուրգենի /Բաղդասար Մալոյան 1873—1899/ հիշատակին Գրված է նրա հերոսական մահվան տարելիցի նախօրյակին

## ՀԱՋԱ Ր ԲԱՐՈՎ, ՀՊԱՐՏ ՍԱՐԵ Ր /էջ 68/

Գրել է 1900 թ Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» ժնև 1900 № 4 էջ 53 Հայդուկի երգերից» ենթախորագրով և «Հայ-գուսան» ստորագրությամբ

Այնուհետև՝ «Բազմավեպ» Վենետիկ 1909 № 12 էջ 539: «Աստղիկ» Վենետիկ 1911 № 3 էջ 37 «Հայդուկի երգեր» Բեյրութ 1960 էջ 20 «Խորհրդային Հայաս տան› 1987 № 12 էջ 24

Տեքստը բերվում է «Դրոշակից»

## ԻՆՉ ՏԵՂ ՏՎԵՔ ՍԻՓԱՆ ՍԱՐԵ Ր /էջ 69/

Գրել է 1900 թ Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» ժնև 1900 № 6 էջ 86 «Հայդուկի երգերից» ենթախորագրով «Հայ գուսան ստորագրությամբ

Այնուհետև «Հայրենիքի հետ» /բանաստեղծությունների ժողովածու/ Երևան Հայպետհրատ 1942 էջ 124—125 «Հայդուկի երգեր Բեյրութ 1960 էջ 22

Տեքստը բերվում է ‹Հայրենիքի հետ» ժողովածուից

## ՍԱԼՆՈ ՁՈՐԵՐՈՒՄ ԿԸՌՎԻ ՁՈՐԵՐՈՒՄ /էջ 71/

Գրել է ըստ ինքնագրի 1900 թ սեպտեմբերի 19 ին Քյուենախտո մ /Շվեյցարիա/ Տպագրվել է առաջին անգամ ‹Դրոշակ» ժնև, 1900, № 7, էջ 100 «Հայդուկի երգերից» ընդհանուր խորագրի տակ «Հայ-գուսան» ստորագրությամբ, այնուհետև առանց փոփոխությունների՝ «Երգեր ու վերքեր» 1908, էջ 139: «Հայդուկի երգեր Բեյրութ 1960 էջ 24· Խորհրդային շրջանում՝ ‹երկերի ժողովածու» 6 հ -ով հ 1 Երևան 1973, էջ 136

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքեր› ից 1908

## ԵՐԲ ԵՍ ՄԵԾԱՑՍ Տ[illegible]ԱՄԱՐՊ ԴԱՐՁԱ /էջ 72/

Գրել է 1900 թ Տպագրվել է առաջին անգամ ‹Դրոշակ ժնև 1900 № 7 էջ 100 ‹Հայդուկի երգերից ենթախորագրով Հայ գուսան ստորագրությամբ Այնուհետև «Հայդուկի երգեր› Բեյրութ 1960 էջ 23 «Խորհրդային Հայաստան 1987 № 12 էջ 25

Տեքստը բերվում է «Դրոշակից›

## Է Յ ՁԱ Ն – ՀԱՅՐԵՆԻՔ ԻՆՁՔԱ Ն ՍԻՐՈՒՆ ԵՍ /էջ 73/

Գրել է 1900թ ժնևում Եվրոպա կատարած ուղևորութ ան ըսթացքո մ Տպա գրվել է առաջին անգամ ‹Դրոշակ› ժնև 1900 № 8 էջ 166 Հայ գուսան› ստորագրությամբ նույն տեքստը «Երգեր ու վերքեր 1908 էջ 137 և մյուս ժողովա ծուներում

## ՎԵՀ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՐԸ ՉԷ ՄԵՆԱԿ /էջ 74/

Գրել է 1900 թ Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» ժնև 1900 № 8 էջ 115 ‹Հայ գուսան» ստորագրությամբ

Այնուհետև «Հայդուկի երգեր» Բեյրութ 1960 էջ 25

Տեքստը բերվում է Դրոշակից›

## ՁԱՄԲԵՍ ԱՐՈՒՆԻ ՀԵՏՔ ԹՈՂԵՐ, ԿԵՐԹԱ /էջ 75/

Գրել է 1900 թ Տպագրվել է առաջին անգամ «Դրոշակ» 1900 № 9 էջ 133 Հայդուկի երգերից» ենթավերնագրով «Հայ գուսան» ստորագրությամբ. Այնուհետև երգեր վերքեր› 1908 էջ 134 «Հայդուկի երգեր› Բեյրութ 1960 էջ 26 Խորհրդա ի Հայաստան 1987 № 12 էջ 25

Տեքստը բերվում է ‹երգեր ու վերքերից›

## ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԻՔՍ ԵՐԳԵԼ ԿՈՒԶԵԻ /էջ 76/

Գրել է 1902 թ.. Տպագրվել է առաջին անգամ ‹Դրոշակ» ժնև 1902 № 10 էջ 148 «Հայ գուսան» ստորագրությամբ Այնուհետև Հայդուկի երգեր» Բեյրութ 1960, էջ 43

Տեքստը բերվում է «Դրոշակից›

## ՈՐՍԿԱՆ ԱԽՊԵ Ր ՍԱՐԵՆ ԿՈՒԳԱՍ /էջ 76/

Գրել է ըստ ինքնագրի 1900 թ նոյեմբերի 19 ին Բալախանիում Առաջին տպագրությունը ‹Լույս» պատկերազարդ օրացույց հանդես 1904 թվականի Թիֆլիս էջ 33—34 «Պսակ» վերնագրով /ժողովրդական մոտիվներից ենթախորագրով Այնուհետև որոշակի փոփոխություններով և առանց վերնագրի՝ «Բանաստեղծություններ 1903 էջ 112: Վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր», 1908 էջ 176—177

Այս ստեղծագործությունը վերածվել է ժողովրդական երգի որի հետ Պարույր Սևակը խաչատրյանը գրել է իր «Երկրորդ սիմֆոնիան»:

## ՁԵՐ ՇԱՐՔԵՐԻ ՄԵՋ ԿՏՐԻՃ ԸՆԿԵՐՆԵՐ /էջ 78/

Գրո թյան թվականն ինքնագրո մ նշված չէ հավանաբար գրված է 1900 ական թվականների առաջին կեսին

Իսահակյանի կենդանութ ան օրոք չի տպագրվել

Տպագրվել է առաջին անգամ Գրական թերթ 1985 հոկտեմբերի 25 Նոր շիվեր Իսահակյանի պոեզիայի կենաց ծառից ընդհանուր խորագրի տակ

Այս երկը Իսահակյանը մտադիր է եղել օգտագործել Ուստա Կարո լեպում ձեռագրի լուսանցքում գրված է Կայծակը վեպի հիմնական հերոսներից մեկն է Շրջիկ կայծակը, որի անվան տակ նկատի ո.ներ Նիկոլ Աղբալյանին/ ապա և Կոչ Այսինքն սա Կայծակի հայրենասիրական կոչն է

Իսահան անի երկերի ժողովածո ներու մ տպագրվում է առաջին անգամ

## ՎԵ Ր ԿԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ /էջ 79/

Գրո թյան թվականն ինքնագրո մ նշված չէ Հավանաբար գրված է 1900 ական թվականների սոաջին կեսին: Իսահակյանի կենդանո թյան օրոք չի տպագրվել Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից

## ՄԵՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ /էջ 81/

Գրել է 1905 թ Տպագրվել է առաջին անգամ Արշալո ս Թիֆլիս 1905 հոկտեմբերի 28 /արձակ բանաստեղծություն/ ենթախորագրով Երկի հատ վածները բաժանված են եղել գծիկներով երկրորդ անգամ Երգեր ո վերքեր 1908 էջ 229 230 առանց ենթախորագրի և բաժանման գծիկների աննշան փոփոխութ ոններով Ա նո հետև չի տպագրվել Տեքստը բերվում է Երգեր ու վերքերից

## ԵՍ ՁԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ ՈՐ ԺԱՄՆ Է ՀԱՍԵԼ /էջ 64/

Գրել է 1905 թ Տպագրվել է առաջին անգամ Արշալո ս Թիֆլիս 1905 Ոյեմբերի 13 Խաիակյանի երկերի ժողովածուներո մ չի զետեղվել

Տեքստը բերվո մ է Արշալույսից

## ՄԵՆԱԿԻ /Ե ԱՌՍՏԱՄՅԱՆ/ ՆՎԻՐԱԿԱՆ ՍՏՎԵՐԻՆ /էջ 85/

Գևորգ Եգոր/ Առստամյան 1870 ական թթ վերջ Շուշի 1903թ Բասեն հայտնի է Մենակ մականվամբ Հայ ֆիդայի և երգահան Ծնվել է Շո շիո մ .վարտել է տեղի հոգևոր դպրոցը 1901 թվ Շո շիից ւ քսոդվել է Նո Ն տարի գինվորագրվել է հայ ազգային ազատագրական շաւժմանը: Մասնակցե ւ մի շարք Ռարտերի, զոհվել է Բասենի մոտ 1903թվ Մենակը հեղինակն է Ի սհակ լսնի Մաճ կալ ես բեզարած ես «Սիրեցի, յարըս տարան. երգել ի երաժշտ, թյան Իսահիսկ անը ունի Մենակին ձոևած երեք բանաստեղծություններ այ ն թվում Ընկել ի հիշատ սկին» /«Ա խ Նորից եկավ յալազար գարուն...»/ նշանավոր ներբո լը Ի ղեպ ս ս փաստը մինչև օրս չի նշվել: Գրել է, ըստ ինքնագրի, 1905 թ

Ինքնագրի առաջին տարբերակի սկզբնատողն է եղել «Բասենա դաշտո մ դո մանն 1 ա ատեր...» Տպագրվել է առաջին անգամ Ալիք» Թիֆլիս 1906 մայիսի 21 Մենակի Ե Առստամյան/ նվիրակ սն ստվերին վերնա գրով. այնուհետև Երգեր ու վերքեր» 1908 էջ 153 154 Հայրենիքի հետ /բանաստեղծությունլ երի ժողովա ծու/. Ե ևան Հա պետհրատ 1942 էջ 123 124 անվերնագիր ԱՎ Խաիակյան Հատընտ իր Երևան Հայպետհրատ 1943 էջ 100 101 անվերնագիր Գրական թերթ 1989 հոկտեմբերի 13

Տեքստը բերվո մ է Հա րենիքի հետ ժողովածուից

## ՄԱՍԻՍԻ ՄՌԱՅԼ ԽՈԺՈՌ ԺԱՅՌԵՐԻ /էջ 87/

Գրել է ըստ ինքնագրի 1905 թ Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել

Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից

## ՔԱՋԵՐԻՆ /էջ 89/

Գրել է ըստ ինքնագրի 8 հունվարի 1906 Ալեքսանդրապոլ Տպագրվել է առաջին և վերջին անգամ «Մուրճ» Թիֆլիս 1906 № 1 էջ 144 145 Իսահակյանի երկերի ժողովածուներում չի զետեղվել Տեքստը բերվում է Մուրճից

## ՍԱՔՈՅԻ ԳԵՂԵՑԻԿ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 91/

Գրել է 1908 թ Հայ ազատամարտի նշանավոր հերոս, լեգենդար ֆիդայի Սաքարեցի Սաքոյի Ծովանյան Սարգիս Սարիբեկի /1870—1908/ մահվան առթիվ. Իսահակյանը մասնակցել է հերոսի հիշատակին մատուցած պատարագին Սևքար գյուղում, հանդես եկել սույն բանաստեղծության ընթերցմամբ Ինչպես ն գրել է թղթակցություն «Հոգեհանգիստ Սև Քարում» որը տպագրվել է «Գործ» Թիֆլիս 1908 նոյեմբերի 25

Բանաստեղծո թյունը Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել բայց ձե ռագիր վիճակում լայն տարածո մ է գտել ժողովրդի մեջ

Տպագրվել է առաջին անգամ Գրական թերթ 1989 № 42 հոկտեմբերի 13 «Հայ ազատամարտի հերոսների իսահակյանական ներբողները ընդհանուր խորագրի տակ ի թիվս մի շարք բանաստեղծությունների Իսահակյանի երկերի ժողովածո նե րում տպագրվո մ է առաջին անգամ Տեքստը բերվում է ինքնագրից

## ԲԱՇԵՐՆ ԱԼԵՔՍԻՓ ԲԱՇԵՐՆ ՀՈՂՄԱԿՈՏ /էջ 93/

Գրել է ըստ ինքնագրի 1909 հո լիսի 25 Ղազարապատ Իսահակյանի կենդա նո թյան օրոք չի հրատարակվել Տպագրվում է առաջին անգամ ինքնագրից

## ՀԵՐՈՍԸ /էջ 94/

Գրել է 1912 թ Սարգիս Կո կունյանի ղեկավարած հայ առաջին ֆիդայական իմբերից մեկի անդամ Եփրեմ Դավթյանի /1868—1912/, իսկ հետագայում պարսկա ւան ժողովրդական հեղափոխության ակտիվ մասնակից պարսկական զինված ուժերի րամ՛ա՛ւնատար Եփրեմ Խան Սարդարի հիշատակին

Տպագրվել է առաջին և վերջին անգամ ‹Եփրեմ ժողովածուո մ /կազմող Հ լմար հրատ ւրակություն Թեհրան/ հայոց թեմակ ան խորհրդի Թեհրան տպարան Մոդերն 1964 էջ 645 646

Տպագրված է գրքի հավելվածի բաժնում Հե ոսը վերնագր ւվ Եփրեմի հիշա սկին ենթահ որագրով

Իսահակյանի երկերի ժողովածուների մեջ չի զ ետնղվել: Տեքստը բերվում է Եփ րեմ» ժողովա ծուից

## ՍԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆԻ ՆՎԻՐԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 96/

Գրել է 1913 թ ժ՛ ևո մ Տպագրվել է առաջին անգ ամ Բաքվի ձա ն /օրաթերթ/ 1ᵛ13. ոյեմբերի 28

Ա նո հետև երկար տարիներ չի ր պագրվել Խորհրդա ին շրջանում առաջին սգրո թյո նը «Գրական թերթ», 1989 № 42 հոկտե ւբերի 13 Հայ ազատամար ոլ ի ելոնների իսահակյանական ներբողները ընդհան ր խոր գ ի տակ

Իսահակյանի երկերի ժող լուծո ւ երի մեջ տպագ վո մ է առ ջին անգամ Տեքստը բ ևրվում է «Բաք լի ձա յնից»:

Բանա ստեղծությո նը գ լված է հ ս ազգային ազատ սգրական շարժ ման խոշոր գործիչ ն լալի հայագետ և մանկավարժ Արևմտահայաստանում առաջին կա ժավորակ ան զորախմբերի կազմակերպիչ Սի ոն Զավարյանի 1865 1913/ հիշ ս ոակին

Հոգի Թումա ան անո Նրա մ սին գրել է Շատ հազարների մեջ մինը կարող է լինել ազնիվ և անկեղծ: Էւ ոեւ ակ ազվագյուտ մարդկանցից մինն էր Սիմոն Զա վարյանը

Հոլիվուդ Թիֆլիս 1913 հ կտեմբերի 17 Գրիգոր Զոհրապը Սիմ ն Զավարյանը

ւն էր անոնցմե. աստվածների գերագույնը Ճշմարտությո նը պաշտեց միայն կրոնք րեն ազնվագույնին կապված մնաց Խղճմտանքին սերերուն ամենեն դժբախտը նեցավ Ազգի սերը /1913 նոյեմբերի 19 Տե ս Հուշապսակ Սիմոն Զավարյա ն Պուքրեշ 1933 էջ 12 13/

## ԳՈՂԹԱՆ ՔՆԱՐԸ ՈՐ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ /էջ 99/

ել է 1900 թ Պոեմն ունի ենթախորագիր Դաշնակցության տասնամյակին ված է հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության ստեղծման տասնամ կի նախօրեին Դաշնակցություն կուսակցությունը, ինչպես և նրա կենտրոնական գանը Դրոշակը /խմբագիր Քրիստափոր Միքայելյան/, հիմնվել է 1890 թվակա ն Թիֆլիսո մ· Այնպես որ պոեմն ուղղված է թե դաշնակցո ության թե Դրոշակի» յնադրման տասնամյակին

Այն առաջին անգամ տպագրվել է Դրոշակ ժնև 1901 № 1 էջ 4 6 ողթան քնարը որ ազատության...» (պոեմ) վերնագրով Հայ գո սան ստո գրությամբ· Հետագա տարիներին՝ Իսահակյանի կենդանո թյան օրոք չի տպագր Իսահակյանի երկերի ժողովածուների մեջ զետեղվում է առաջին անգամ Տեքստը բերվո մ է Դրոշակից»:

Երկը ստեղծված է հայ բանահյուսական ժողովրդական պոեմի ավանդական ձևով տեղից և վերնագիրը Գողթան քնարը ›

# «ԱՅՆ ՎԱՌ ԵՐԱՋ ԷՐ »
# /1888—1948/

## ՆՎԵՐ ՐԱՖՖՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 112/

լ է ըստ ինքնագրի ‹ 1888 29 ապրիլի Ղազարապատ Ինչպես հայտնի է Րաֆ ւ վախճանվել է 1888 թ ապրիլի 25 ին թաղումը տեղի է ունեցել ապրիլի 29 ին պես որ բանաստեղծո թյունը գրված է մեծ գրողի թաղման օրը Իսահակ անի

յենդանության օրոք չի տպագրվել Տպագրվել է առաջին անգամ Գրական թերթ 1982 № 35 օգոստոսի 27 Ակն հրատարակման է ներկայացրել ըստ Ավ Իսահակյանի երևանյան տուն թանգարանո մ պահվող բնագրի /ֆոնդային № 47/ հանգո ցյալ գրականագետ Եղիշե Պետրոսյանը Իսահակյանի ժողովածուներո մ զետեղվում Ի ռաջին անգամ Տեքստը բերվում է ինքնագրից Այս Իսահակյանի առաջին բանաս ոեղծական քայլերից է գրված տակավին 13 տարեկան հասակում

## ՔՆԱՓ ԵՐԵԽԱՆ /էջ 113/

Բանաստեղծության ստեղծման ստույգ տարեթիվը չի նշված հավանաբար գրված է 1890 1891 թվականներին Տպագրվել է առաջին անգամ Տարազ Թիֆլիս 1892 № 49 էջ 636: Այնուհետև հետագա տարիներին չի տպագրվել: Իսահակյանի էրկերի ժողովածուների մեջ զետեղվում է առաջին անգամ Տեքստը բերվում է «Տա րազից

## ԴՈ Ռ ՄԻ ՍԻՐԻՐ ԻՄ ԱՉԵՐԸ /էջ 115/

Գ լ ել է, ըստ ինքնագրի 1891 թ 17 հո նիսի Ալեքսանդրապոլ› Տպագրվել է առա ջին անգամ «Տարազ» Թիֆլիս 1898 № 40 էջ 899 Իսահակյանի երկերի ժողովա ծուների մեջ զետեղվում է առաջին անգամ Տեքստը բերվում է ինքնագրից

## ՈՐՊԵՍ ՀԱՌԱՉ ԼՔՅԱԼ ՏԸՐՏՈՒՄ /էջ 116/

Գրել է ըստ ինքնագրի 1891 թ դեկտեմբեր Ս էջմիածին . Ինքնագիրն ունի հետևյալ խորագիրը «Իմ օրագրից կոկոններ /Երախայրիք 1891 թ /

Տպագրվել է առաջին անգամ Տարազ Թիֆլիս 1899 № 4 էջ 96 այնուհետև Բանաստեղծություններ 1903 էջ 35 առանց խորագրի Վերջին խմբագրումը Երգեր ու վերքեր 1908 էջ 215

Տեքստը բերվում է Երգեր ու վերքերից

## ՄԻ ԽՈՍՏԱՆԱՐ ԾԱԳԵԼ ՆՐԵՆ /էջ 117/

Գրել է ըստ ինքնագրի «1892 թ ապրիլի 15 Ս Էջմիածին».

Տպագրվել է առաջին անգամ ‹Երգեր ու վերքեր» 1898 Ալեքսանդրապոլ էջ 15 Այնուհետև «Բանաստեղծություններ» 1903 էջ 55 Վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր» 1908 էջ 216 աննշան փոփոխություններով

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից›

## ՆԱԶԱՆ— ԱՂՋԻԿ ՇՈՒՇԱՆ— ՇՈՒՇԻԿ /էջ 118/

Գրել է ըստ ինքնագրի ‹1892, հուլիսի 28 Ս Հառիճո վանք»

Տպագրվել է առաջին անգամ՝ «Երգեր ու վերքեր» 1898 Ալեքսանդրապոլ էջ 62 երկրորդ անգամ զգալի փոփոխություններով ‹Բանաստեղծություններ» 1903 էջ 53

Սույն հատորում տպագրում ենք ‹Երգեր ու վերքեր» ի /1898 թ / տարբերակը որը ըստ մեզ գեղարվեստապես ավելի կատարյալ է

ՇՈՒՇԱՆ—ՇՈՒՇԻԿ Նկատի ունի Շուշանիկ Արամի Մատակյանին /1876 1944/ բանաստեղծի առաջին սերը նրա պոեզիայի հերոսուհին որին Իսահակյանը տասնյակ բանաստեղծություններ է նվիրել: 1893 թվականին երբ Իսահակյանը մեկնում է ուսման Գերմանիա Շուշանիկը դրժում է բանաստեղծի սերը և մեկնումից ընդամենը երկու ամիս անց ամուսնանում է մանկավարժ Հ Տեր Միրաքյանի հետ /1895—1938 Իսահակյանը շատ ծանր է տանում այդ առաջին այրված սիրո պատմությունը Նրա բազում քնարական ստեղծագործությունների վրա դրված է մերժված այրված սիրո թեմայի կնոջ անհավատարմության կնիքը

1975 թվին բանասեր Մուշեղ Նարյանի աշխատասիրությամբ լույս է տեսել Շուշանիկ Մատակյանի «Չափածո և արձակ էջեր» գիրքը ուր կան մի շարք բանաստեղծություններ այլաբանական ձևով ուղղված Ավետիք Իսահակյանին

## ԵՍ ՈՒՆԵԻ ՄԻ ՆՈՒԱՆ ԾԱՌ /էջ 119/

Գրել է ըստ ինքնագրի «1892 սեպտեմբերի 3 Դիլիջան» Տպագրվել է առաջին անգամ «Երգեր ու վերքեր» 1898 էջ 16 ապա «Բանաստեղծություններ» 1903 էջ 56 Վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր» 1908 էջ 27 որոշակի փոփո խություններով

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից» 1908

## ՄԵՆԱԿ ԱՊՐԵՑԱ, ՈՐՔԱՆ ՏԱՆՋՎԵՑԻ /էջ 120/

Գրել է ըստ ինքնագրի «27 փետրվարի 1893 Ալեքսանդրապոլ»

Իսահակյանի կենդանության օրոք չի տպագրվել Տպագրվել է առաջին անգամ Գրական թերթ» 1959 հոկտեմբերի 16 № 42 բանաստեղծությանը հաջորդել է Արամ Ինճիկյանի «Ավ Իսահակյանի ձեռագրերի աշխարհում» հոդվածը

Իսահակյանի Երկերի ժողովածուներում տպագրվում է առաջին անգամ

Տեքստը բերվում է ինքնագրից Բանաստեղծությունում արտացոլված են Շ Մա տակյանի հանդեպ տածած դրամատիկ սիրո զգացմունքները

## ՆՎԵՐ ՏԻԿԻՆ Շ ԻՆ /էջ 121/

Գրել է ըստ ինքնագրի «Լայպցիգ 1893 սեպտեմբերի 21» Իսահակյանի կենդա նության օրոք չի տպագրվել Տպագրվել է առաջին անգամ «Խորհրդային գրականու թյուն» 1958, № 19 էջ 99 «Անտիպ բանաստեղծություններ» ընդհանուր խորագրի տակ Իսահակյանի Երկերի ժողովածուներում չի զետեղվել Բանաստեղծությունը ձոնված է Շուշանիկ Մատակյանին գրված է նրա ամուսնության լուրն ստանալուց հետո ուստի Իսահակյանը նրան դիմում է որպես «Տիկին Շ »

Տեքստը բերվում է «Խորհրդային գրականությունից»

## ԵՍ ՉԵՄ ՈՒԶՈՒՄ ԱՐԵՎ ՑՈՒԼԱ /էջ 122/

Գրել է ըստ ինքնագրի «1894 թ 5 օգոստոսի Լայպցիգ» Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ», Թիֆլիս 1898 № 5 էջ 659 երկրորդ անգամ «Բանաստեղծու թյուններ» 1903 էջ 28 վերջին մշակումը «Երգեր ու վերքեր» 1908 էջ 232 այնուհետև չի տպագրվել Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից»

## ԵՎ ԵՍ ԿՅԱՆՔ ՄՏԱ /էջ 123/

Դրել է 1896 թվ Տպագրվել է առաջին և վերջին անգամ «Բանաստեղծություններ» 1903 էջ 31 Իսահակյանի երկերի հետագա ժողովածուների մեջ չի զետեղվել

Տեքստը բերվում է «Բանաստեղծություններից»

## ԱՅՆ ՎԱՌ ԵՐԱՋ ԷՐ /էջ 124/

Իրության ստույգ թվականը նշված չէ, հավանաբար գրված է 1896—1898 թվական երին քանզի ինքնագիրը վերաբերում է «Իմ օրագրից» /Կցկտուր թերթեր/ շարքին րը թվագրված է 1896—1898 թթ.:

Տպագրվել է առաջին անգամ «Տարազ» Թիֆլիս 1898, № 50, էջ 1130 Հետագա ւարիներին չի տպագրվել Իսահակյանի երկերի ժողովածուների մեջ զետեղվում առաջին անգամ Տեքստը բերվում է «Տարազից»: Այս բանաստեղծությունում Իսա ակյանը նկատի ունի Շուշանիկ Մատակյանի և իր սիրո պատմությունը

## ԳՒՏԵ Մ ԽԱՉԸՂ ԾԱՆՐ Է ՀՍԿԱ /էջ 125/

Գրել է ըստ ինքնագրի ‹1896 թ նոյեմբեր Երևան» Երևանյան բանտում ւահակյանի քաղաքացիական քնարերգության անդրանիկ երկերից է Տպագրվել առաջին անգամ ‹Մուրճ Թիֆլիս 1899 № 1 էջ 45 «Ցնորքներ և մորմոքներ» իրիկական ինտերմեցցո/ շարքում շարքն ունեցել է հետևյալ ընծայականը «Նվեր ւկերիս —Դերենիկ Դեմիրճյանին» և հետևյալ հեղինակային բնաբանը

«Դադրած անքուն խեղճ ճամփորդ եմ
Բլբուլ եմ — վարդս ման կուգամ
Հազար տեղից վիրավոր եմ
Գիտեք թե ողջ ման կուգամ»

Երկրորդ անգամ տպագրվել է «Բանաստեղծություններ» 1903 էջ 37 Իսահակ յանի երկերի հետագա հատորների մեջ չի զետեղվել

Տեքստը բերվում է «Բանաստեղծություններից»

## Ա Խ, ԵՐՆԵԿ /էջ 126/

Գրել է ըստ ինքնագրի 1897 թ մարտին, Երևանյան բանտում

Տպագրվել է առաջին անգամ ‹Մուրճ» Թիֆլիս 1900 № 3 էջ 323 Իսահակյանի երկերի ժողովածուներում տպագրվում է առաջին անգամ

Տեքստը բերվում է «Մուրճից»

## ԵՐՆԵԿ ԵՍ ԷԼ ԱԼ ԹՌԹԵՌՆԵՐ /էջ 127/

Բանաստեղծության ստեղծման թվականը ըստ ինքնագրի «1897 թ հուլիսի 4 Ալեքսանդրապոլ»: Առաջին տպագրությունը ‹երգեր ու վերքեր» 1898 էջ 33 Վերջին խմբագրումը՝ «երգեր ու վերքեր› 1908 էջ 88

Հետագա տարիներին չի տպագրվել

Տեքստը բերվում է «երգեր ու վերքերից» 1908 թ

## ԻՆՉԻ Ս Է ՊԵՏՔ ՍԱԶՆ ՈՒ ՇԲՎԻՆ /էջ 128/

Գրել է ըստ ինքնագրի «1897 սեպտեմբերի 25 Բագարան» Տպագրվել է առաջին անգամ «Երգեր ու վերքեր› 1898 էջ 51—52 «Դատարկյուն աշուղի խաղերից ու բայաթիներից» շարքում երկրորդ անգամ ‹Բանաստեղծություններ» 1903 էջ 69 երրորդ «Երգեր ու վերքեր» 1908 էջ 117—118 որոշակի փոփոխություններով

Այնուհետև «Հայ բանաստեղծներ» (Արևելյան բարբառ) կազմեց Հովհ Քաջազնունի Բաքու 1908, էջ 159—160

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից» 1908 թ

## ԻՄ ԲԼԲՈՒԼԻՆ /էջ 129/

Գրել է 1897 թ Առաջին տպագրությունը «Երգեր ու վերքեր», 1898 էջ 9 երկրորդը «Բանաստեղծություններ», 1903 էջ 44 Այնուհետև չի տպագրվել Տեքստը բերվում է «Բանաստեղծություններից»

## ԷՍ ՍԱՐԵՐԻ ՍԻՐՈՒՆ ԼԱԼԵՆ /էջ 130/

Գրել է 1897թ Տպագրվել է առաջիս անգամ «Երգեր ու վերքեր 1898 էջ 25 «Ալագյազի մանիներից» /IV/ շարքում այդ առաջին տարբերակը կազմված է եղել բանաստեղծության սկզբի մասի երեք քառյակներից երկրորդ անգամ տպագրվել է «Բանաստեղծություններ» 1903 էջ 125 նույնպես երեք քառյակով այնուհետև «Ծաղիկ» /ամսագիր/ Կ Պոլիս 1904 № 8 էջ 434 435: «Երգեր ու վերքեր» 1908 էջ 103 «Ալագյազի մանիներ /XIV/ շարքում վերջնական մշակմամբ 4 քառյակով Այս բանաստեղծությունը Իսահակյանի «Ալագյազի մանիներ» պոեմի վերջնական տեքստի մեջ չի մտել և 1908 թ ի վեր չի հրատարակվել

Տեքստը բերվում է ‹Երգեր ու վերքերից› 1908 թ

## ՄԱՆԿՈՒՑ ԳԻՏԵՄ, ՈՐ ԱՄԵՆ ՄԱՐԴ /էջ 131/

Գրության ստույգ թվականը նշված չէ Ինքնագիրը ղետեղված է «Լիրիկական ինտերմեցցո» /«Ցնորքներ և մորմոքներ»/ ընդհանուր խորագիրը կրող ձեռագիր տետրում Գրության հավանական տարեթիվը ըստ շարքի մյուս գործերի 1898 թվականն է

Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ» Թիֆլիս 1898 № 11 էջ 147 Իսահակյանի երկերի ժողովածուների մեջ չի զետեղվել Տեքստը բերվում է ինքնագրից

## ՍՐՏԻՍ ՎՐԱ ՄԻ ՎԱՐԴ ԱՄՊ ԿԱ /էջ 132/

Գրել է 1898 թ Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ» Թիֆլիս 1899 № 1 էջ 46 Ցնորքներ ու մորմոքներ› /VII/ շարքում Այնուհետև չի տպագրվել Իսահակյանի երկերի ժողովածուների մեջ զետեղվում է առաջին անգամ

Տեքստը բերվում է «Մուրճից»

## ՀԱՋԱՐ ՈՒ ՄԻ ՅԱՎ ԵՄ ՔԱՇԵՐ /էջ 133/

Գրել է 1898 թ Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ Թիֆլիս 1899 № 1 էջ 48 Ցնորքներ ու մորմոքներ» /XV/ շարքում Այնուհետև «Բանաստեղծություններ» 1903 էջ 65 Վերջին մշակումը «Երգեր ու վերքեր» 1908 էջ 83 Հետագայում չի տպագրվել

Տեքստը բերվում է ‹Երգեր ու վերքերից

## Ա Խ ԸՆԿԵՐ ԻՄ Ի ՆՉ ԵՍ ՓՆՏՐՈՒՄ /էջ 134/

Գրել է 1898 թ Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ› Թիֆլիս 1899 № 1 էջ 48 Ցնորքներ ու մորմոքներ /XV/ շարքում: ‹Ախ ընկեր իմ ինչ ես պտրում » կզբնատողով այնուհետև ‹Բանաստեղծություններ› 1903 էջ 67 Վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր› 1908 էջ 89 Հետագա տարիներին չի տպագրվել

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից»

ՅՆՈՐՔՍ ՈՒ ՄՈՐՄՈՔՔ հայտնի է համանուն Իսահակյանի Ցնորքներ ու մորմոքներ բանաստեղծական շարքը

## ՔՆՔՈՒՇ ՍՐՏՈՎ ԵՍ ՍԻՐԵՑԻ /էջ 135/

Ի քնագրում գրությանն ստույգ թվականը նշված չէ կարելի է ենթադրել որ գրված է 1898 թ քանի որ ձեռագիր տետրի նույն էջում գրված է «Ծովի ծոցից մի վայրի բադ » բանաստեղծությունը որը թվագրված է 1898 թ Ինքնագրի սկզբնատողն է Մատաղ սրտով Ես սիրեցի որը հետագայում փոխել է

Առաջին տպագրությունը «Բանաստեղծություններ» 1903 էջ 66 «Լիքը սրտով ես սիրեցի » սկզբնատողով այնուհետև որոշակի փոփոխություններով «Երգեր ու վերքեր» 1908 էջ 85 հետագա տարիներին չի տպագրվել

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից»

## ՀԱՎԱՏՍ ՀԱՆԳԱՎ /էջ 136/

Ինքնագրում գրության թվականը չի նշված գրել է հավանաբար 1896—1898 թթ քանի որ այդ թվերին է ստեղծված «Իմ օրագրից» /Կցկտուր թերթեր/ շարքը որին և վերաբերում է հիշյալ բանաստեղծությունը

Տպագրվել է առաջին անգամ «Տարազ» Թիֆլիս 1899 № 2 էջ 41 այնուհետև «Բանաստեղծություններ» 1903 էջ 32 վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր» 1908 էջ 205 Հետագա տարիներին չի հրատարակվել

Տեքստը բերվում է «երգեր ու վերքերից»

## ՏԱՆՋՎԱԾ ՍԻՐՏՍ ՔՈ ԱՌՋԵՎ ԲԱՑԻ /էջ 137/

Ինքնագրում գրության թվականը չի նշված վերաբերում է «Իմ օրագրից» /Կցկտուր թերթեր/ շարքին որը թվագրված է 1896 1898 թթ

Տպագրվել է առաջին անգամ «Բանաստեղծություններ» 1903 էջ 49 Հետագա տարիներին չի տպագրվել

Տեքստը բերվում է «Բանաստեղծություններից Այս բանաստեղծությունը ևս Իսահակյանի խոստովանանքն է Շուշանիկի առջև

## ԵՎ ԱՅՍ ՄԸՐԱՅԼ, ԽՈ Է ԱՇԽԱՐՀՈՒՄ /էջ 138/

Գրել է ըստ ինքնագրի «1898 թ 12 մարտի Ալեքսանդրապոլ»

Ինքնագիրը ունեցել է «Իմ օրագրից» վերնագիրը Տպագրվել է առաջին անգամ որոշակի փոփոխություններով և առանց վերնագրի «Աղբյուր», Թիֆլիս 1898 № 5—6 էջ 195—196 Հետագայում «Բանաստեղծություններ», 1903 էջ 19 վերջնական տեքստը «Երգեր ու վերքեր» Թիֆլիս 1908 էջ 272 Այնուհետև չի տպագրվել

Տեքստը բերվում է «Երգեր ու վերքերից»

## ԵՐԿԻՆՔԸ ՋԻ ՆՋ ԹԱՐՄ ՈՒ ԱՆՈՒՇ /էջ 139/

Գրել է ըստ ինքնագրի «1898 մարտի 12 Ալեքսանդրապոլ» Տպագրվել է առաջին անգամ երեք քառյականոց տարբերակով «Լազվարթ երկինք խորն ու անծեր...» բանաստեղծության առաջին հետագայում կրճատված քառյակի սկզբնատողով Մուրճ» 1898 № 9 էջ 1227 այնուհետև «Բանաստեղծություններ» 1903 էջ 62 վերջնական խմբագրումը «Երգեր ու վերքեր› 1908 էջ 74 Այնուհետև չի տպագրվել Տեքստը բերվում է Երգեր ու վերքերից» 1908 թ

## ԹԵ ԻՄ ԲԱԽՏԸ ԱՍՏՂԻԿ ԼԻՆԵՐ /էջ 140/

Գրել է ըստ ինքնագրի «1898 թ 21 ապրիլի Կերչ» հավանաբար նույն թվին Օդեսա աքսոր գնալու ճանապարհին

Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ» Թիֆլիս 1902 № 7 էջ 144—45 այնուհետև «Բանաստեղծություններ» 1903 էջ 54 ապա «Պայքար» /նոր տարվա բացառիկ 1958/ ժողովածու Բոստոն 1958 էջ 321—325 Իսահակյանի երկերի հատորյակներում չի զետեղվել

Տեքստը բերվում է «Բանաստեղծություններից»

## ԼԱԼԿԱՆ ՈՒՐԻՆ ՄԵՂՄ ԿԸ ԽՇՇԱ /էջ 141/

Գրել է ինքնագրի «1898 թ 18 մայիսի Օդեսա» Տպագրվել է առաջին անգամ Տարազ» Թիֆլիս 1898 № 24 էջ 517

Իսահակյանի երկերի ժողովածուներում տպագրվում է առաջին անգամ

Տեքստը բերվում է ինքնագրից

## ՈՂԿՈՒՅԶ /էջ 142/

Գրել է ըստ ինքնագրի «1898 թիվ հուլիս Կերչ Օդեսա» Տպագրվել է առաջին անգամ՝ «Մուրճ» Թիֆլիս 1899 № 4–5 էջ 417–418

Այնուհետև չի տպագրվել Իսահակյանի Երկերի ժողովածուներում տպագրվում է առաջին անգամ

Տեքստը բերվում է ինքնագրից

## ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ /էջ 144/

Գրել է, ըստ ինքնագրի ‹1888 թ 5 հուլիսի Օդեսա› Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ», 1898, № 9 էջ 1226 Իսահակյանի երկերի ժողովածուներում տպագրվում է առաջին անգամ

Իսահակյանի պանդխտության մոտիվներով գրված հայտնի շարքի անդրանիկ դ ործերից է գրված է Օդեսա Աքսորում գտնված ժամանակ

## ԿՐԿՆԵՐՆԵՐՆ ԱՅՍ ՎԵՀ ՀԸՊԱՐՏ ՁԱԿԱՏԻՍ /էջ 145/

Բան [illegible] առաջին տարբերակը ստեղծել է ըստ ինքնագրի ‹1898թ 27 հոկտեմբեր Օդեսա» այն կազմված է 11 տողից ‹Այս վեհ կնճիռներն հպարտ ձյունը...› սկզբնատողով առաջին անգամ տպագրվել է Տարազ› Թիֆլիս 1899 № 9, էջ 218. ապա նույն քաստը Բանաստեղծություններ» 1903 էջ 17

Այնուհետև նմանովին շակել է թողել 2 քառատող Կընճիռներն այս վեհ հըպարտ ձյունատիս...» սկզբնատողով և նոր խմբագրությամբ լույս է տեսել «երգեր ու վերքեր» 190? էջ 258 որ եղից և սրտատպում ենք

## ԿԱԵՐՊԻՍ ՀԻՇԱՏԱԿԻՆ /էջ 146/

Գրել է 1898 ֊ Տպագրվել է առաջին անգամ «Մուրճ› Թիֆլիս 1900 № 2, էջ 167: Իսահ [illegible] երկերի ժողովածուներում հրատարակվում է առաջին անգամ· Տեքստը [illegible] Մուրճից

Այս բանաստեղծությունը նույնպես նվիրված է Ավետիք Մալոյանի հիշատակին որի մասին մանրամասն տեղեկություններ տրված են «Հայդուկի երգերից» շարքի ծանոթագրություններում

## ԵՐԿԱԹԵ ՑՈՒՊ ՁԵՌԸՍ ԱՌՆԵՄ /էջ 147/

